



ԸՆԴԴԵՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՄԱՑԱԿԱՆՈՒԹՅԱՆ
հասարակական կազմակերպություն

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ



ԲՀԻ ՕՀ
Հայկական մասնաճյուղ



Օքսֆամ ՄԲ
Հայաստան

Երևան 2010

ՀՏԴ 349: 341 (03)
ԳՄԴ 67.99 (22)76 + 67.91 ց 2
Ս-783

Կազմեցին՝

Հ. Օձնիկյան

Ք. Գևորկյան

Խմբագիր՝

Յու. Հովհաննիսյան

Ա. Մանուկյան

Ս-783 Իրավական հարցերով ուղեցույց.-Եր: «Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպություն, 2010թ.- էջ 159

Օքսֆամ ՄԲ Հայաստանյան մասնաճյուղի հովանավորությամբ և Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի (ԲՀԻ ՕԺ) աջակցությամբ «Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպության կողմից հրատարակված սույն գրքույկը նպատակ ունի բարձրացնել հանրության իրազեկվածությունը: Ներկայացվող գրքույկով փորձ է արվում հասարակության լայն խավերին ծանոթացնել պետության կողմից երաշխավորվող սոցիալական աջակցության ձևերին, դրանց տրամադրման կարգին, ժամկետներին և պայմաններին:

Գրքույկում բերված օրենսդրական նորմերը, իրավական պաշտպանության մեխանիզմներն ու դրույթները հնարավորինս հստակեցված և պարզեցված են: Հաշվի առնելով ձեռնարկի ծավալի սահմանափակ լինելու հանգամանքը՝ ձեռնարկի հեղինակները խուսափել են քննարկվող բնագավառների օրենսդրությունը ներկայացնել առավել մանրամասն, ինչպես նաև փորձել են իրավաբանական կրթություն չունեցող ընթերցողին գերծ պահել մանրամասների մեջ անհարկի խճճելու վտանգից:

Կազմակերպությունը հուսով է, որ ներկայացվող գրքույկը ևս մեկ քայլ է Հայաստանի հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության, հասարակության իրազեկվածության բարձրացման, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացում:

ՀՏԴ 349: 341 (03)

ԳՄԴ 67.99 (2Հ)76 + 67.91 ց 2

ISBN 978-99930-919-8-1

Երևան, © «Ընդդեմ իրավական կամայականության»
հասարակական կազմակերպություն
2010

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Նախաբան-----5
- Պետական նպաստներ-----7
- Պետական կենսաթոշակներ-----30
- Անձի սոցիալական ապահովությունը ժամանակավոր անաշխատունակության ընթացքում-----68
- Ծերերի սոցիալական ապահովությունը-----83
- Առանց ծնողական խնամքի մնացած երեծաների սոցիալական պաշտպանությունը-----87
- Հաշմանդամների սոցիալական ապահովությունը-----93
- Բռնադատվածների սոցիալական ապահովությունը---121
- Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների սոցիալական ապահովությունը-----125
- Գործազուրկների սոցիալական ապահովությունը-----128
- Փախստականների եվ ապաստան հայցողների սոցիալական ապահովությունը-----143

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Սոցիալական ոլորտի օրենսդրությունը գործնականում ամենակիրառելին է, քանի որ ցանկացած քաղաքացի կյանքի որոշակի փուլում անպայմանորեն առնչվում է պետության կողմից տրամադրվող սոցիալական երաշխիքներից օգտվելու հարցին:

Իրավական կարգավորումների մասին տեղեկացվածության ցածր մակարդակը հանգեցնում է նրան, որ քաղաքացիները չեն կարողանում ամբողջ ծավալով օգտվել պետության կողմից տրամադրվող սոցիալական երաշխիքներից:

Սույն ուղեցույցը նպատակ է հետապնդում հնարավոր շահառուներին օժանդակել սոցիալական ոլորտին վերաբերող իրենց իրավունքների իմացությանն այն չափով, ինչ չափով անհրաժեշտ է այդ իրավունքների պաշտպանության համար:

Պետք է նկատել, որ անվստահությունը սոցիալական ծառայություններ տրամադրող մարմինների գործունեության նկատմամբ շատ դեպքերում պայմանավորված է իրավունքը կարգավորող իրավական նորմերի չիմացությամբ, այդ մարմինների կողմից իրավունքի խախտումը նույնպես կարելի է վերագրել իրավունք հայցողների այդ չիմացությանը:

Ասվածը հատկապես վերաբերում է ընտանեկան նպաստ ստանալուն, կենսաթոշակների չափը հաշվարկելուն, հաշմանդամության կարգ սահմանելուն, ինչը հետևանք է դրանց կարգավորման մասին սահմանված կարգի և չափորոշիչների վերաբերյալ բնակչության անիրազեկությանը:

Սոցիալական երեաշխիքներ պարունակող իրավական նորմերն ամրագրված են ոչ միայն օրենքներում, այլև մի շարք ենթաօրենսդրական ակտերում, ինչը իրենց հետաքրքրող հարցերի պատասխանը գտնելու հարցում իրավաբանական կրթություն չունեցող քաղաքացիների համար առաջացնում է դժվարություններ:

Սույն ուղեցույցն իր մեջ ներառում է ՀՀ սոցիալական օրենսդրության ամենաէական և կարևոր նորմերի պարզաբանումները, որոնց իմացությունը կնպաստի քաղաքացիներին առավել արդյունավետ իրականացնել իրենց սոցիալական իրավունքները: Նպատակ ունենալով հնարավորինս մատչելի ներկայացնել տեղեկատվական նյութը՝ ուղեցույցում այն ներկայացվել է հարցերի ու պատասխանների, ինչպես նաև օրինակների միջոցով:

Հուսով ենք, որ այն կնպաստի այս ոլորտում բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացմանը և արդյունավետ գործիք կձառայի իրավունքների իրականացման ու պաշտպանության գործում:

ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ

Նպաստը պետական բյուջեի միջոցներից պարբերաբար կամ միանվագ տրամադրվող դրամական օգնություն է: Նպաստների տրամադրման նպատակն է աջակցել աղքատ ընտանիքներին, ինչպես նաև մասնակի թերևացնել դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների հոգսերը: Հայաստանի Հանրապետությունում սահմանված են Պետական նպաստի հետևյալ տեսակները՝

1. ընտանեկան նպաստ,
2. երեխայի ինամքի նպաստ,
3. երեխայի ծննդյան միանվագ նպաստ,
4. գոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի նպաստ:

Պետական նպաստներ ստանալու իրավունք ունեն նպաստի տվյալ տեսակի համար ներկայացվող չափանիշներին համապատասխանող ՀՀ քաղաքացիները, ՀՀ-ում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, ինչպես նաև ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք: Նպաստ ստանալու հավակնող անձը պետք է դիմում ներկայացնի սոցիալական ծառայության տարածքային մարմին:

1. ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏ

Ընտանեկան նպաստի համակարգը ձևավորվել է 1999 թվականից, Հայաստանում աղքատության կրճատման նպատակով: Նպաստի այդ տեսակը տրվում է բնակչության ամենախոցելի ընտանիքներին, իսկ ընտանիքների խոցելիության աստճանը որոշվում է՝ հիմք ընդունելով ընտանիքում սոցիալապես խոցելի անդամների թիվը (հաշմանդամներ, միայնակ մոր երեխաներ և այլն), առավել խոցելի

տարածաշրջաններում բնակվելու իրողությունը, բնակարանային պայմանները, ընտանիքում միջին ամսական եկամուտը և այլ չափորոշիչներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընտանեկան նպաստի հավակնող ընտանիքների թիվը դեռևս զգալի է, և նաև այն, որ ընտանեկան նպաստ ստանալու համար հիմք հանդիսացող ընտանիքի անապահովության գնահատման և ընտանեկան նպաստի նշանակման և հաշվարկման հարցում բնակչության մեջ թերևս առկա է տեղեկացվածության պակաս, ուստի նպաստի հավակնող ընտանիքների անդամների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով հարկ ենք համարում սույն ուղեցույցի շրջանակներում հատուկ անդրադառնալ նպաստի այդ տեսակին վերաբերող իրավական նորմերի պարզաբանմանը:

Հարց 1.Ո՞վ կարող է ստանալ ընտանեկան նպաստ:

2010 թվականին ընտանեկան նպաստ ստանալու իրավունք կարող են ձեռք բերել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված 30.01 և ավելի անապահովության միավոր ունեցող ընտանիքները:

Ընտանեկան նպաստի բազային մասը 2010 թվականից դարձել է 13500 դրամ: Բազային չափով նպաստ տրվում է այն ընտանիքներին, որոնք ունեն անապահովության 30.01 և ավելի միավոր և ընտանիքում չունեն 18 տարին չլրացած անդամ: Եթե անապահովության 30.01 և ավելի միավոր ունեցող ընտանիքում առկա է 18 տարին չլրացած թեկուզ մեկ ընտանիքի անդամ, ապա բազային գումարին՝ 13500 դրամին ավելանում է հավելավճար:

Հարց 2. Ինչպե՞ս է կատարվում ընտանիքի անապահովության գնահատումը:

Ընտանիքի անապահովության գնահատումն իրականացվում է ՀՀ Կառավարության կողմից սահմանված համապա-

տասխան բնութագրիչների և դրանցից յուրաքանչյուրի համար նախատեսված միավորների հիման վրա: Ընտանիքի անապահովության միջին միավորը հաշվարկելու համար ընտանիքի բոլոր անդամների անապահովության միավորների ընդհանուր գումարը պետք է բաժանել ընտանիքի անդամների թվի վրա: Ընտանիքի անապահովության միավորը հաշվարկելիս պետք է նկատի ունենալ, որ օրենքի իմաստով ընտանիքի անդամ չեն համարվում՝

- ազատագրված վայրերում գտնվող քաղաքացիները,
- պարտադիր զինվորական ծառայության գորակոչված շարքային կազմի ժամկետային զինծառայողները,
- ռազմատուսումնական հաստատություններում սովորող կուրսանտները,
- բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում /մանկատուն, ծերանոց/ գտնվող կամ տեղավորված քաղաքացիները:

Այսպիսով, եթե ընտանիքի անդամների անապահովության միավորների համագումարը ընտանիքի անդամների թվի վրա բաժանելու արդյունքում ստացված միավորը գերազանցում է պետության կողմից տվյալ տարվա համար նախատեսված ընտանիքի անապահովության նվազագույն շեմը (2010թ. այն կազմում է 30.00 միավոր), ապա տվյալ ընտանիքը կարող է օգտվել ընտանեկան նպաստ ստանալու իրավունքից:

Ընտանիքի անապահովության գնահատման ժամանակ ուշադրության արժանի բնութագրիչների մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար ստորև ներկայացնում ենք դրանցից մի քանիսը.

- ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական խումբը,
- ընտանիքի անաշխատունակ անդամների թիվը,
- բնակավայրը,
- ընտանիքի բնակարանային պայմանները,

- անձնական օգտագործման ավտոմեքենայի առկայությունը և տեխնիկական գնում անցնելու հանգամանքը,
- ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը,
- անշարժ գույքի հետ կապված գործարքներ կատարելը,
- ապրանքների ներմուծման կամ արտահանման համար ընտանիքի անդամներից մեկի կողմից մաքսային վճարումներ կատարելը,
- ամառային ամիսների ընթացքում ընտանիքի սպառած էլեկտրաէներգիայի քանակը,
- հեռախոսակապի համար ընտանիքի միջին ամսական վճարումները,
- ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանների վերաբերյալ գործակալության, ինչպես նաև համապատասխան սոցիալական աջակցության խորհրդի առաջարկությամբ արված եզրակացությունը,
- ընտանիքի եկամուտը:

Հարց 3. Ընտանիքի անապահովության գնահատման վրա ինչպե՞ս է ազդում ընտանիքի անդամներից մեկին մեքենա պատկանելու հանգամանքը:

Հաճախ բնակիչների մոտ դժգոհություն է առաջանում կապված այն հանգամանքի հետ, որ ըստ նշանակության օգտագործելու համար ոչ պիտանի մեքենայի առկայությունն իրենց զրկում է ընտանեկան նպաստ ստանալու իրավունքից:

Այդ կապակցությամբ կարևոր է իմանալ հետևյալը.

Ընտանիքի որևէ անդամին սեփականության իրավունքով մեքենա պատկանելու վերաբերյալ տեղեկատվությունը սոցիալական ծառայությանը տրամադրում է ՀՀ Կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը, ինչպես նաև ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը:

Ընտանիքի անապահովության միավորը հաշվելիս նշված մարմինների կողմից տրամադրված տեղեկատվությունը չի կիրառվում, եթե.

- ընտանիքի միակ ավտոմեքենան ընտանիքի հաշմանդամ անդամի անվճար ստացած ավտոմեքենան է,
- ավտոմեքենան վաճառվել է և գործարքը ստացել է նոտարական վավերացում,
- ավտոմեքենան խոտանված և պետհամարանիշը հանձնված է,
- առկա է սոցիալական աջակցության խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկությունը սույն տեղեկությունը չկիրառելու մասին և գործակալության կողմից կազմակերպված տնային այցելության ուսումնասիրության արձանագրությունը:

Պետք է նկատի ունենալ, որ այն ավտոմեքենաները, որոնք նախորդ տարում չեն անցել տեխնիկական զննում, չեն կարող ազդեցություն ունենալ ընտանիքի անապահովության միավորի վրա:

Հարց 4. Ընտանիքի անապահովության գնահատման վրա ինչպե՞ս է ազդում ընտանիքում միայնակ մոր երեխայի առկայությունը:

Միայնակ մոր երեխա է համարվում ամուսնության մեջ չգտնվող կնոջ ծնած կամ նրա կողմից որդեգրված երեխան, որի վերաբերյալ մայրը ներկայացրել է համապատասխան փաստաթղթեր:

Միայնակ մոր երեխայի առկայությունը ընտանիքում ավելացնում է անապահովության միավորը, ինչի արդյունքում մեծանում է ընտանեկան նպաստ ստանալու իրավունքի ձեռքբերման հավանականությունը:

Նշված հանգամանքը նկատի ունենալով, մեծ թվով ամուսիններ խուսափում են իրենց ամուսնական հարաբերություններին տալ օրինական կարգավիճակ՝ ՔԿԱԳ մարմիններ-

րում այն գրանցելու ճանապարհով և գերադասում են մնալ փաստական ամուսնական հարաբերություններում՝ իրավական տեսանկյունից ձեռք բերելով միայնակ մոր կարգավիճակ: Ձևավորված երևույթին վերջ դնելու նպատակով 2010թ. ընտանիքի անապահովության համակարգում տեղի է ունեցել փոփոխություն, համաձայն որի այսուհետ ընտանիքի անապահովության գնահատման գործընթացում միայնակ մոր ծածկագիրը չի կիրառվելու, եթե միայնակ կնոջ խնամքի տակ գտնվող մեկից ավելի երեխաների հայրանունը լինի նույնը: Նշված կանոնից բացառություն են կազմում այն դեպքերը, երբ միայնակ կնոջ խնամքի տակ գտնվող և միննույն հայրանունները կրող երեխաները երկվորյակներ են:

Հարց 5. Ինչպե՞ս է հաշվարկվում ընտանեկան նպաստի չափը և որքան է այն անապահովության 30.01-35.00 միավորի դեպքում:

Ընտանեկան նպաստի չափը հաշվարկվում է հետևյալ կերպ.

ընտանիքում 18 տարին չլրացած անդամի բացակայության դեպքում ընտանեկան նպաստը սահմանվում է բազային նպաստի չափով, այն է՝ 13 500 ՀՀ դրամ:

- 18 տարին չլրացած յուրաքանչյուր անդամին տրամադրվող հավելավճարը կազմում է 5500 դրամ,

- այն բազմազավակ ընտանիքներում, որտեղ կան 18 տարին չլրացած չորս և ավելի անդամներ, 18 տարին չլրացած յուրաքանչյուր անձի համար նախատեսվող հավելավճարի չափը կազմում է 6500 դրամ,

- բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը կազմում է 6000 դրամ,

- բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի բազմազավակ ընտանիքի (18 տարին չլրացած չորս և ավելի

անդամ ունեցող) 18 տարին չլրացած յուրաքանչյուր անդամին տրվող հավելումը կազմում է 7000 դրամ:

Այժմ ներկայացնենք օրինակով.

Եթե ընտանիքը բաղկացած է յոթ անդամներից, որոնց թվում առկա է 18 տարին չլրացած մեկ անձ, ապա այդ ընտանիքի ընտանեկան նպաստի չափը կկազմի 19 000 ՀՀ դրամ:

13.500 (ընտանեկան նպաստի բազային չափ) + 5500 (ընտանիքի 18 տարին չլրացած յուրաքանչյուր անդամին համար տրվող հավելավճար) = 19 000 (ընտանիքին վճարման ենթակա ընտանեկան նպաստի չափը):

Մինչդեռ, ընտանիքի նույն կազմ և անապահովության միևնույն միավոր ունեցող, սակայն բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերում բնակվող ընտանիքի նպաստի չափը՝ ի հաշիվ բնակավայրի, կկազմի՝ 19.500 դրամ:

Հարց 6. Ինչպե՞ս է հաշվարկվում ընտանեկան նպաստի չափը և որքա՞ն է այն անապահովության 35.01-39.00 միավորի դեպքում:

Ընտանեկան նպաստի հաշվարկման կանոնները 35.01-39.00 միավորների դեպքում նույնն է, ինչը որ 30-35.00 դեպքում: Այսինքն՝ 13.500 դրամ (որը սահմանված բազային չափն է) + X գումար (որը 18 տարին չլրացած յուրաքանչյուր անդամի համար նախատեսվող հավելավճարի գումարն է) x X թիվ (որը 18 տարին չլրացած ընտանիքի անդամների թիվն է):

Անապահովության 35.00-39.00 միավորի դեպքում 18 տարին չլրացած յուրաքանչյուր անձի համար նախատեսվող հավելավճարների չափը փոխվում է:

- 18 տարին չլրացած յուրաքանչյուր անդամին տրվող հավելումը կազմում է 6000 դրամ,

- Բազմազավակ ընտանիքի 18 տարին չլրացած յուրաքանչ-յուր անդամին տրվող հավելումը կազմում է 7000 դրամ,
- Բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը կազմում է 6500 դրամ,
- Բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի բազմազավակ ընտանիքների 18 տարին չլրացած յուրաքանչ-յուր անդամին տրվող հավելումը կազմում է 7500 դրամ:

Այժմ ներկայացնենք օրինակով.

Եթե ընտանիքի անապահովության միավորը կազմում է 37.00, ընտանիքում կան երեք չափահաս և չորս անչափահաս անդամներ, ապա ընտանեկան նպաստի չափը կկազմի՝
 $13.500+(7000 \times 4)=41.500$ (դրամ),

իսկ բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերում բնակվող նույն կազմով ընտանիքի ընտանեկան նպաստի չափը կկազմի՝

$$13.500+(7500 \times 4)=43.500(\text{դրամ}):$$

Հարց 7. Որքա՞ն է կազմում անապահովության 39.01 և ավելի միավոր ունեցող ընտանիքների ընտանեկան նպաստի չափը:

Տվյալ դեպքում հաշվարկման կարգը դարձյալ չի փոխվում, այսինքն 18 տարին չլրացած անդամների համար նախատեսվող գումարի չափը բազմապատկվում է այդպիսի անձանց թվով և գումարվում նպաստի բազային չափը՝ 13.500 դրամ:

18 տարին չլրացած անդամների համար նախատեսվող գումարի չափը անապահովության 39.01 և ավելի միավորի դեպքում նախատեսվում է.

- յուրաքանչյուր երեխայի համար՝ 6500 ՀՀ դրամ,
- բազմազավակ ընտանիքի դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար 7500 դրամ,

- Բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր երեխայի համար՝ 7000 դրամ,

- Բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի բազմազավակ ընտանիքների յուրաքանչյուր երեխայի համար՝ 8000 դրամը:

Բացատրենք օրինակով. եթե անապահովության 40.00 միավոր ունեցող ընտանիքում կան երկու չափահաս և չորս անչափահաս անդամներ, ապա ընտանեկան նպաստի չափը կկազմի՝

$$13.500+7500X4=43.500 \text{ (դրամ),}$$

իսկ բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերում բնակվող նույն կազմով ընտանիքի ընտանեկան նպաստի չափը կկազմի՝

$$13.500+8000X4=45.500 \text{ (դրամ):}$$

Հարց 8. Ինչպիսի՞ն է ընտանեկան նպաստ ստանալու համար դիմում ներկայացնելու կարգը:

Ընտանեկան նպաստ ստանալու համար ընտանիքի չափահաս անդամներից մեկը՝ մյուսների համաձայնությամբ դիմում է փաստացի բնակության վայրի սոցիալական ծառայության տարածքային մարմին ներկայացնելով.

- դիմում-հայտարարագիր,
- ընտանիքի անապահովության միավորը հաշվարկելու համար իր ընտանիքի յուրաքանչյուր անդամի եկամտի, զբաղվածության, ընտանիքի կազմի, բնակարանային պայմանների, սոցիալական վիճակի և ուշադրության արժանի այլ պայմանների մասին ամբողջական տեղեկություններ՝ դրանք հավաստող փաստաթղթերով:

Ընտանեկան նպաստ նշանակելու համար դիմելու օր է համարվում հայտարարագիրը՝ ամբողջական կից փաստաթղթերով տարածքային մարմնի կողմից ընդունվելու օրը: Այն դեպքում, երբ բացակայում են որոշակի փաստաթղթեր, սոցիալական ապահովության տարածքային մարմինը երեք օր-

վա ընթացքում դիմողին տեղեկացնում է պակասող փաստաթղթերի մասին: Եթե դիմողը, տեղեկացվելուց հետո հնգօրյա ժամկետում սոցիալական ծառայության տարածքային բաժին է ներկայացնում պակասող փաստաթղթերը, ապա նպաստի համար դիմելու օր է համարվում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու օրը:

Սոցիալական ծառայության տարածքային մարմինը նպաստը տրամադրելու հարցը քննարկում է երեսուներորյա ժամկետում՝ հաշված այն օրվանից, երբ դիմումատուի կողմից ներկայացվել, իսկ տարածքային մարմնի կողմից ընդունվել են անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: Եթե արդյունքում տարածքային մարմինը կայացնում է նպաստ ստանալը մերժելու մասին որոշում, ապա այն եռօրյա ժամկետում ուղարկվում է դիմումատուին: Մերժման հիմքերի հետ համամիտ չլինելու դեպքում այն դիմումատուի կողմից կարող է բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով:

Հարց 9. Ո՞վ իրավունք ունի ստանալ միայնակ բնակվող կենսաթոշակատուին նշանակված, բայց նրա մահվան պատճառով չվճարված նպաստը:

Միայնակ բնակվող կենսաթոշակատուին նշանակված, բայց նրա մահվան պատճառով չվճարված նպաստը վճարվում է հուղարկավորությունը կազմակերպած անձին՝ տեղական ինքնակառավարման մարմնի (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի ղեկավարի, գյուղական համայնքում՝ գյուղապետի) տված տեղեկանքի հիման վրա: Նշված գումարները ստանալու համար պետք է դիմել միայնակ բնակվող կենսաթոշակատուի մահվան ամսվան հաջորդող երկու ամիսների ընթացքում: Հավելենք նաև, որ վճարման ենթակա գումարն իր մեջ ներառում է նաև միայնակ բնակվող կենսաթոշակատուի մահանալու ամսվա նպաստը:

Հարց 10. Ո՞ր դեպքերում է կայացվում ընտանեկան նպաստը մերժելու մասին որոշումը:

Այն դեպքում, երբ գործակալություն ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գործակալությունը գալիս է այն եզրահանգմանը, որ նպաստ նշանակելու հիմքերը բացակայում են /օրինակ, անապահովության ցուցանիշը սահմանվածից ցածր է/, չեն ներկայացված անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը կամ ներկայացված տեղեկությունները կեղծ են, գործակալությունը կայացնում է որոշում ընտանեկան նպաստի նշանակումը մերժելու վերաբերյալ: Մերժման մասին եռօրյա ժամկետում տեղեկացվում է դիմողին՝ հստակ նշելով մերժման պատճառը, ինչպես նաև այն բողոքարկելու կարգը: Մերժման հիմքերի հետ համաձայն չլինելու դեպքում դիմումատուն կայացված վարչական ակտը /մերժման որոշումը/ կարող է բողոքարկել վերադատության կարգով («Վարչարարության հիմունքների և վարչական վարչոթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում և կարգով), կամ՝ ՀՀ Վարչական դատարան (ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում և կարգով):

ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Ընտանեկան նպաստի ծրագիրն իր մեջ ներառում է նաև միանվագ դրամական օգնության համակարգը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շատ անապահով ընտանիքիներ անապահովության գնահատման սահմանային շեմը չհաղթահարելու հետևանքով զրկվում են ընտանեկան նպաստ ստանալու իրավունքից, պետությունը նրանց տրամադրում է միանվագ դրամական օգնություն՝ նրանց առջև ծառայած որոշ հոգսեր թեթևացնելու նպատակով:

Հարց 11. Ո՞ր դեպքերում է տրամադրվում միանվագ դրամական օգնություն և որքա՞ն է դրա չափը:

1. Ընտանիքին միանվագ դրամական օգնություն տրամադրվում է՝

ա/ ընտանիքում երեխայի ծննդյան դեպքում՝ 50 հազար դրամ,

բ/ ընտանիքում երեխայի առաջին դասարան ընդունվելու դեպքում՝ 25 հազար դրամ,

գ/ ընտանիքի անդամի մահվան դեպքում նշել չափը,

2. հրատապ օգնություն՝ ինչը տրամադրվում է անհետաձգելի լուծում պահանջող կյանքի դժվարին իրավիճակում:

Հարց 12. Ե՞րբ և ինչպե՞ս դիմել ընտանիքում երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող միանվագ դրամական օգնություն ստանալու համար:

Երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ դրամական օգնության տրամադրման համար ընտանիքի չափահաս անդամներից մեկը պետք է դիմի սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմին՝ երեխայի ծնվելուց հետո վեց ամսվա ընթացքում: Միանվագ դրամական օգնություն ստանալու համար անհրաժեշտ է գործակալություն ներկայացնել դիմում և տվյալ երեխայի (երեխաների) ծննդյան վկայականը (վկայականները), իսկ կյանքի 4 շաբաթվա ընթացքում մահացած երեխայի (երեխաների) համար՝ երեխայի ծննդի պետական գրանցման փաստը հաստատող փաստաթուղթ՝ տրված քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից:

Հարց 13. Ե՞րբ և ինչպե՞ս դիմել ընտանիքում երեխայի առաջին դասարան ընդունվելու կապակցությամբ տրվող միանվագ դրամական օգնություն ստանալու համար:

Երեխայի առաջին դասարան ընդունվելու դեպքում ընտանիքի չափահաս անդամներից մեկը տարվա երրորդ

եռամսյակի ընթացքում պետք է դիմի սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմին՝ տեղեկանք ներկայացնելով տվյալ ուսումնական տարում երեխայի՝ հանրակրթական դպրոցի կամ վարժարանի առաջին դասարան ընդունվելու մասին:

Հարց 14. Ե՞րբ և ինչպե՞ս դիմել ընտանիքի անդամի մահվան դեպքում տրվող միանվագ դրամական օգնություն ստանալու համար:

Ընտանիքի անդամի մահվան (հուղարկավորության) դեպքում միանվագ դրամական օգնություն ստանալու իրավունք ունի այն ընտանիքը, որի կենսաթոշակառու, աշխատող (գործազուրկ չհամարվող) անդամներից մեկը մահացել է և ունի ընտանեկան նպաստի իրավունք: Ընտանիքի անդամին հուղարկավորության միանվագ դրամական օգնություն տրամադրելու համար անհրաժեշտ է, որ պեսոյի մահացած անձն ունեցած լինի նվազագույնը մեկ տարվա ապահովագրական ստաժ: Ասվածից հետևում է, որ ընտանիքին չի տրամադրվում դրամական օգնություն այն անձի մահվան դեպքում, ով իր կենդանության ժամանակ երբևէ չի գտնվել գրանցված աշխատանքային հարաբերություններում (կամ գտնվել է մեկ տարուց պակաս ժամանակով), հետևաբար չի վճարել պարտադիր սոցիալական վճարներ:

Հուղարկավորության միանվագ օգնության համար ընտանիքի չափահաս անդամներից մեկը (ընտանիքում չափահաս անդամ չլինելու դեպքում՝ անչափահաս անդամի օրինական ներկայացուցիչը), պետք է դիմի իր փաստացի բնակության վայրի սոցիալական ապահովության տարածքային մարմին:

Ընտանիքի անդամի մահվան դեպքում տրվող դրամական օգնության չափը կազմում է 50. 000 ՀՀ դրամ:

Կարևոր է իմանալ մի կարևոր հանգամանք, որ դիմումը ընտանիքի անդամի կողմից պետք է ներկայացվի անձի մահ-

վան օրվանից հետո վեց ամսվա ընթացքում: Ավելի ուշ ներկայացված դիմումը ենթակա է մերժման:

Հարց 15. Ի՞նչ է հրատապ օգնությունը և որքա՞ն է կազմում դրա չափը:

Հրատապ օգնության իրավունք ունի ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված ընտանեկան նպաստի իրավունք չունեցող ընտանիքը՝ անհետաձգելի լուծում պահանջող դժվարին իրավիճակում (օրինակ՝ արտակարգ իրավիճակներում և այլն) հայտնվելու դեպքում՝ սոցիալական աջակցության խորհրդի առաջարկությամբ: Հրատապ օգնությունը նշանակվում է 3 ամիս ժամկետով:

Հրատապ օգնության չափը սկսած 2010թ. հունվար ամսից կազմում է 13500 ՀՀ դրամ:

Հարց 16. Ու՞մ է տրամադրվում հրատապ օգնությունը:

Հրատապ օգնությունը նշանակվում է նպաստի իրավունք չունեցող և անապահովության «0»-ից բարձր միավոր ունեցող ընտանիքին՝ անհետաձգելի լուծում պահանջող դժվարին իրավիճակում հայտնվելու դեպքում, սոցիալական աջակցության խորհրդի առաջարկությամբ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

1. միայն կենսաթոշակատուներից բաղկացած ընտանիքի (միայնակ բնակվող կենսաթոշակատուի) նպաստի իրավունքը կորցնելը՝ կենսաթոշակի բարձրացման հետևանքով,

2. ընտանիքի նպաստի իրավունքը կորցնելը՝ ընտանիքի կենսաթոշակատու անդամի կենսաթոշակի բարձրացման հետևանքով,

3. ընտանիքի անապահովության միավորի՝ սահմանային միավորից քիչ ցածր լինելը (1-2 միավոր),

4. նախորդ եռամսյակում ընտանիքի նպաստի իրավունքը կորցնելը,

5. ընտանիքում, առավելապես այլ սոցիալական խումբ ունեցող, մեկից ավել երեխաների առկայությունը,

6. ընտանիքի անդամներից մեկի կամ մի քանիսի երկարատև հիվանդությունը,

7. բնակարանի հրդեհվելը, բնակարանի մի մասի փլուզումը, ներտնային հաղորդակցության ուղիների վթարները և նմանատիպ այլ հանգամանքներ, ընտանիքի անդամի մահ, ինչպես նաև այլ պատճառներով կարճատև ֆինանսական խնդիրների առկայությունը:

Հարց 17. Ո՞ր դեպքերում է դադարեցվում հրատապ օգնության վճարումը:

Հրատապ օգնության վճարումը տվյալ եռամսյակի ընթացքում դադարեցվում է, եթե.

- տվյալ ընտանիքի փաստագրման ժամկետը լրացել է այդ եռամսյակի ընթացքում և չեն ներկայացվել անհրաժեշտ փաստաթղթերը,

- տվյալ ընտանիքը կամ ընտանիքի անդամներից մեկը կրկնակի է հաշվառված,

- ընտանիքի անապահովության միավորը այդ եռամսյակի ընթացքում դարձել է զրո:

2. ՄԻՆՉԵՎ ԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՒԱՅԻ ԽՆԱՄՔԻ ՆՊԱՍՏ

Այս նպաստի տեսակը նախատեսված է աշխատող այն ծնողների համար, ովքեր երեխայի խնամքն իրականացնելու նպատակով գտնվում են արձակուրդում: Սա ինչ որ առումով պետության կողմից տրվող փոխհատուցում է երեխաների խնամքով զբաղված այն ծնողներին, ովքեր, գտնվելով արձակուրդում, բնականաբար չեն իրականացնում աշխատանքային իրենց պարտականությունները և չեն վարձատրվում գործատուների կողմից: Ասվածից հետևում է, որ աշխատանք-

քային իրավահարաբերություններում չգտնվող, կամ աշխատանքային հարաբերությունները դադարեցրած ծնողները չեն օգտվում երեխայի խնամքի համար տրվող նպաստից:

Կարծում ենք, որ այս նպաստի անվանումը չի համապատասխանում իր բովանդակությանը: Առաջին հայացքից տպավորություն է ստեղծվում, որ այս նպաստը տրամադրվում է բոլոր ծնողներին, ովքեր ունեն մինչև 2 տարեկան երեխա: Մինչդեռ, այս նպաստը տրամադրվում է միայն աշխատող ծնողներին, գլխավորապես մայրերին, ովքեր պաշտոնապես գրանցված աշխատանքային հարաբերությունների մեջ են գտնվում որևէ գործատուի հետ և վերցրել են երեխայի խնամքի արձակուրդ: Անկախ այն հանգամանքից, երեխայի մայրը աշխատում է, թե՞ ոչ, երեխան կարիք ունի խնամքի: Հետևաբար, ճիշտ կլիներ այս նպաստը տրամադրել յուրաքանչյուր՝ մինչև 2 տարեկան երեխա ունեցող ծնողներին և ոչ թե միայն աշխատող:

Հարց 18. Ովքե՞ր ունեն մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունք:

Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ ստանալու իրավունք ունեն մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձը՝ ծնողներից մեկը կամ միակ ծնողը կամ որդեգրողը կամ խնամակալը, մինչև երեխայի երկու տարին լրանալը:

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի չափը 18000 դրամ է:

Հարց 19. Ինչպե՞ս դիմել մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ ստանալու համար:

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի տրամադրման համար երեխայի ծնողներից մեկը պետք է դիմի սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժին: Նպաստի վճարումը սկսվում է ծնողի

խնամքի արձակուրդում գտնվելու մասին՝ գործատուի հրամանն ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող ամսից, եթե նա դիմել է դրանից հետո ոչ ավելի, քան 12 ամսվա ընթացքում: Այս ժամկետից հետո դիմելու դեպքում նպաստը վճարվում է դիմելու ամսվան հաջորդող ամսից: Նպաստը վճարվում է ծնողի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում, բայց ոչ ավելի, քան մինչև երեխայի 2 տարին լրանալը:

Եթե ծնողը խնամքի տակ ունի մինչև 2 տարեկան մեկից ավելի երեխաներ, ապա խնամքի նպաստը նշանակվում է յուրաքանչյուր երեխայի համար՝ անկախ գործատուի հրամանում այդ մասին նշված լինելու հանգամանքից: Երեխայի խնամքի նպաստը նշանակվում է մինչև ընթացիկ տարվա վերջը և երեխայի խնամքի նպաստի վճարումը շարունակվում է հաջորդ տարի, եթե ծնողը մինչև հաջորդ տարվա վերջը կրկին ներկայացնում է տեղեկանք բնակության վայրից և աշխատավայրից՝ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու մասին: Երեխայի խնամքի նշանակված, սակայն չվճարված նպաստը ծնողին վճարվում է միանվագ՝ նպաստը չստանալու ամբողջ ժամանակահատվածի համար, բայց ոչ ավելի, քան դիմելուն նախորդած մեկ տարվա համար:

Պետք է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ նպաստ ստացողի կողմից նպաստը 3 ամիս անընդմեջ չստանալու դեպքում նպաստի վճարումը դադարեցվում է:

Հարց 20. Ի՞նչ փաստաթղթեր է անհրաժեշտ ներկայացնել սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժին⁸ երեխայի խնամքի նպաստ ստանալու համար:

Երեխայի խնամքի նպաստ ստանալու համար ծնողը պետք է դիմի իր փաստացի բնակության վայրի սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բա-

ժին՝ հետևյալ փաստաթղթերով.

- դիմում,
- երեխայի ծննդյան վկայականի պատճենը,
- տեղեկանք բնակության վայրից,
- տեղեկանք աշխատավայրից իր՝ մինչև երեք տարեկան երախայի խնամքի արձակուրդում գտնվելու մասին,
- ծնողի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
- երեխայի և ծնողի սոցիալական ապահովության քարտը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանք:

Հարց 21. Ո՞ր դեպքերում է դադարեցվում երեխայի խնամքի նպաստի վճարումը:

Երեխայի խնամքի նպաստի վճարումը դադարեցվում է՝

1. երեխայի՝ 2 տարին լրանալու,
2. երեխային բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն (մանկատուն) տեղավորելու,
3. ծնողի՝ աշխատանքի վերադառնալու,
4. ծնողի^a աշխատանքից ազատվելու,
5. երեխայի՝ ՀՀ-ից մեկնելու, և
6. երեխայի մահվան դեպքերում՝ նշված իրադարձություններից որևէ մեկի առաջանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

3. ԵՐԵՒԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ ՄԻԱՆՎԱԳ ՆՊԱՍՏ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երեխայի ծնունդը ընտանիքում առաջացնում է որոշակի լրացուցիչ ծախսեր, նաև նպատակ ունենալով խրախուսել ծնելիությունը՝ պետությունը սահմանում է միանվագ դրամական օգնություն նորածին երեխա ունեցող ընտանիքների համար:

Հարց 22. Տարբերակվում է արդյոք երեխայի ծննդյան միանվագ նպաստը:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը տարբերակվում է՝ ելնելով ընտանիքում ծնված երեխաների թվից:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանվել է 50 հազար դրամ, իսկ ընտանիքում ծնված երրորդ, ինչպես նաև հաջորդ յուրաքանչյուր երեխայի համար՝ 430 հազար դրամ:

Ընտանիքում ծնված երրորդ, ինչպես նաև հաջորդ յուրաքանչյուր երեխայի ծննդյան նպաստը նշանակվում է տվյալ ամուսնական գույզի (միայնակ կնոջ) խնամքի տակ գտնվող (միննույն բնակության վայրում փաստացի բնակվող, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության գորակոչված շարքային կազմի ժամկետային զինծառայողների և ռազմաուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների) չամուսնացած զավակների, ինչպես նաև երեխաների (այդ թվում որդեգրած և/կամ խորթ) առկայության դեպքում:

Հարց 23. Որտե՞ղ և ե՞րբ դիմել երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստի տրամադրման համար:

Երեխայի ծնողներից մեկը պետք է դիմի սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժին երեխայի ծնվելուց հետո մեկ տարվա ընթացքում: 2008 թվականին երեխայի ծննդյան միանվագ նպաստը (35000 դրամ) ստացած, սակայն Հայաստանի Հանրապետության կառավարության 27.12.2007 թ. «2008 թվականի պետական նպաստների չափերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1530-Ն որոշմամբ սահմանված՝ ընտանիքում երրորդ և հաջորդ յուրաքանչյուր երեխայի համար միանվագ (հրատապ) օգնությունը չստացած երեխայի համար տրվում է երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական օժանդակություն, որի չափը սահմանվել է 300 հազար դրամ:

Երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական օժանդակություն տրամադրվում է, եթե ծնողը դրամական օժանդակություն ստանալու համար սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմին դիմել է Երեխայի ծնվելուց հետո վեց ամսվա ընթացքում:

4. ԶՈՆՎԱՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍԻ ԿԱՄ ՄԱՐՏԱԿԱՆ ԽԱՉ ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԱԾ ԱՆՁԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՆՊԱՍՏԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հարց 24. Ովքե՞ր ունեն գոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի նպաստի իրավունքը:

Զոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի նպաստի իրավունք ունեն՝

- Հայաստանի գոհված ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի այրին և նրա ծնողները՝ ցմահ,

- նրա խնամքի տակ գտնված 18 տարին չլրացած կամ մինչև 18 տարին լրանալը հաշմանդամ ճանաչված զավակները, եղբայրները, քույրերը և թոռները, ընդ որում, եթե նրանք չունեն աշխատունակ ծնողներ և չեն աշխատում՝ մինչև 18 տարին կամ հաշմանդամության համար սահմանված ժամկետը լրանալը,

- Բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորողները՝ մինչև նշված ուսումնական հաստատություններն ավարտելը, բայց ոչ ավելի, քան մինչև նրանց 23 տարին լրանալը:

Հարց 25. Ինչպիսի՞ կարգ է սահմանված գոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով

պարզևատրված անձի ընտանիքի նպաստի տրամադրման համար:

Նպաստի իրավունք ունեցող ընտանիքի չափահաս անդամներից մեկը նպաստ ստանալու համար, նպաստի իրավունք ունեցող մյուս չափահաս անդամների գրավոր համաձայնությամբ, դիմում է իր փաստացի բնակության վայրի սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմին՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1. դիմում, որտեղ նշվում են գոհված՝ Հայաստանի ազգային հերոսի ընտանիքի անդամի (անդամների) անունը (անունները), ազգանունը (ազգանունները), բնակության վայրը, անձնագրային տվյալները,

2. ՀՀ նախագահի «Հայաստանի ազգային հերոս» կոչում շնորհելու կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրելու մասին հրամանագրի պատճենը,

3. տեղական ինքնակառավարման մարմնի կամ բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի (համատիրության նախագահի) տված տեղեկանքը՝ գոհված՝ Հայաստանի ազգային հերոսի խնամքի տակ գտնված ընտանիքի կազմի մասին, որտեղ նշվում է նաև խնամքի տակ գտնված՝ 18 տարին չլրացած եղբայրների, քույրերի և թոռների, ընդ որում՝ այն եղբայրների, քույրերի ու թոռների մասին, ովքեր չունեն աշխատունակ ծնողներ և չեն աշխատում,

4. գոհված՝ Հայաստանի ազգային հերոսի այրու, ծնողների, 18 տարին չլրացած կամ մինչև 18 տարին լրանալը հաշմանդամ ճանաչված զավակների, եղբայրների, քույրերի և թոռների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները, մինչև 23 տարին լրանալը բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորողների համար՝ սովորելու մասին տեղեկանք՝ տրված նշված հաստատությունների կողմից,

5. հաշմանդամ զավակների, եղբայրների, քույրերի և

թոռների համար՝ բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի տված տեղեկանքի պատճենը,

6. այրու ամուսնության վկայականի պատճենը:

Եթե բացակայում են նշված փաստաթղթերը և դրանց վերականգնելն անհնարին է, ապա Հայաստանի ազգային հերոսի խնամքի տակ գտնվելու փաստը հաստատվում է դատական կարգով:

Հարց 26. Որքա՞ն է կազմում գոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի նպաստի չափը:

Ջոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքին նպաստը տրամադրվում է հետևյալ չափերով.

- գոհված՝ Հայաստանի ազգային հերոսի ընտանիքի նպաստի չափը՝ 250 հազար դրամ,

- գոհված՝ առաջին աստիճանի Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի նպաստի չափը՝ 150 հազար դրամ,

- գոհված, երկրորդ աստիճանի Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի նպաստի չափը՝ 100 հազար դրամ:

Հարց 27. Ու՞մ է վճարվում նպաստը և արդյոք ընտանիքի անդամը կարո՞ւ է պահանջել վճարվելիք նպաստից առանձնացնել իր բաժնեմասը:

Ընտանիքին տրվող նպաստը վճարվում է դիմողին՝ նպաստի իրավունք ունեցող մյուս անձանց բաժնի հետ միասին, քանի դեռ նրանցից որևէ մեկը չի դիմել իր բաժնին առանձնացնելու պահանջով: Ընտանիքի՝ նպաստի իրավունք ունեցող անդամի պահանջով նրա բաժնեմասը վճարվում է առանձին՝ համամասնորեն: Ընտանիքի անդամի բաժնեմասի չափը որոշվում է վճարման ենթակա նպաստի գու-

մարի չափը նպաստի իրավունք ունեցող ընտանիքի անդամների թվի վրա բաժանելով: Եթե նպաստի բաժնեմաս ստացող ընտանիքի անդամը բնակվում է այլ վայրում, ապա նրան իր բաժնեմասը տրվում է իր բնակության վայրի սոցիալական ծառայության կողմից:

ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

Հարց 1. Ի՞նչ է կենսաթոշակը:

Կենսաթոշակը պետության կողմից անձի կորցրած եկամրտի փոխհատուցումն է սոցիալական պաշտպանության նկատառումներից ելնելով: Կենսաթոշակային ապահովության հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով և այլ ՀՀ օրենքներով, ինչպես նաև ՀՀ կառավարության որոշումներով, որոնք վերաբերում են կենսաթոշակային հարաբերությունների ընթացակարգային հարցերի կարգավորմանը:

Հարց 2. Ովքե՞ր ունեն կենսաթոշակ ստանալու իրավունք:

Կենսաթոշակի իրավունք ունեն այն քաղաքացիները, ովքեր համապատասխանում են կենսաթոշակի տվյալ տեսակի իրավունակությանը ներկայացվող պահանջներին:

Հարց 3. Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք ունե՞ն կենսաթոշակի իրավունք:

Հաճախ է տրվում այն հարցը, թե արդյոք օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք ունե՞ն կենսաթոշակ ստանալու իրավունք: Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք կենսաթոշակ ստանալու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք ունենալու ժամանակահատվածում: Ասվածից հետևում է, որ կենսաթոշակի իրավունքի օգտվելու համար օտարերկրացիները կամ քաղաքացիություն չունեցող անձին ՄԱՊԾ համապատասխան բաժին են ներկայացնում ՀՀ-ում իրենց կացության կարգավիճակը հավաստող փաստաթղթերը: Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին կենսաթոշակի իրավունք ունի, եթե նա

մշտապես կամ առավելապես բնակվում է Հայաստանի Հանրապետությունում (Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով) և կենսաթոշակ չի ստանում այլ պետությունից: Եթե նախկին օրենքը օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը պայմանավորում էր վերջինիս կողմից օրենքով պահանջվող պարտադիր սոցիալական վճարներ կատարած լինելու հանգամանքով, ապա 2010 թվականին ընդունված «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով վերացվել է այդ պահանջը, ինչը նշանակում է, որ օտարերկրացիները կամ քաղաքացիություն չունեցող անձինք կարող են օգտվել նաև պետության կողմից տրամադրվող սոցիալական կենսաթոշակի իրավունքից:

Հարց 4. Այլ երկրներում կենսաթոշակ ստացող անձինք ՀՀ տեղափոխվելիս կենսաթոշակ ստանալու իրավունք ունեն:

Հայաստանի Հանրապետությունը միացել է 1992թ. «Կենսաթոշակային ապահովության բնագավառում ԱՊՀ անդամ պետությունների քաղաքացիների իրավունքների երաշխիքների մասին» համաձայնագրին, որով պարտավորվել է սահմանված կարգով կենսաթոշակ նշանակել ՀՀ-ում բնակության իրավունք ունեցող այն քաղաքացիներին, որոնց նախկին բնակության երկրում նշանակված կենսաթոշակի վճարումը դադարեցվել է: Կենսաթոշակը նշանակվում է ըստ նրանց հաշվառման վայրի:

Կենսաթոշակ ստանալու համար քաղաքացին պետք է տեղեկանք ներկայացնի նախկին բնակության երկրում կենսաթոշակի վճարման դադարեցված լինելու մասին: Պետք է նկատի ունենալ, որ օտարալեզու փաստաթղթերը կենսաթոշակ նշանակելիս ընդունվում են միայն նոտարական հաստատումով, հայերեն թարգմանությունների հետ միասին:

Ռուսաստանի Դաշնությունից Հայաստանի Հանրապե-

տություն մշտական բնակության տեղափոխված անձին Ռուսաստանի Դաշնությունում կենսաթոշակի վճարումը դադարեցնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից կենսաթոշակ է նշանակվում ըստ նրա հաշվառման վայրի: Իսկ եթե ՀՀ մշտական բնակության եկած քաղաքացին կենսաթոշակ ստանալու համար դիմում է ներկայացնում Ռուսաստանի Դաշնությունում կենսաթոշակի վճարման դադարեցումից 6 ամիս հետո (օրինակ, 10-րդ ամսին), ապա անցած ժամանակահատվածի համար կենսաթոշակ նշանակվում է ՀՀ տարածքում հաշվառվելու ամսվան նախորդող 6 ամսից ոչ ավելի:

Հարց 5. Ու՞մ պետք է դիմել կենսաթոշակ նշանակելու համար:

Պետական կենսաթոշակ նշանակելու համար անձը գրավոր դիմումը և պահանջվող փաստաթղթերը պետք է ներկայացնի իր հաշվառման վայրը սպասարկող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժին:

Հաշվառման վայր չունենալու դեպքում դիմումը և կից փաստաթղթերը ներկայացվում են փաստացի բնակության վայրը սպասարկող տարածքային բաժին՝ ներկայացնելով փաստացի բնակության վայրի մասին տեղեկանք:

Հարց 6. Եթե կենսաթոշակառուն փոխում է բնակության վայրը, ինչպե՞ս է վճարվում կենսաթոշակը:

Եթե կենսաթոշակառուն փոխում է բնակության վայրը, ապա պետք է գրավոր դիմի բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող բաժին՝ խնդրելով նախկին բնակության վայրից պահանջել իր կենսաթոշակի գործը: Բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող տարածքային բաժինը նախկին բնակության վայրի կենսաթոշակ նշանակող տա-

րաճքային բաժնից գրավոր պահանջում է կենսաթոշակի գործը և այն ստանալուց հետո շարունակում վճարել կենսաթոշակը: Կենսաթոշակ վճարելը վերսկսվում է կենսաթոշակառուի նախկին բնակության վայրում կենսաթոշակի վճարման դադարեցման օրվանից:

Կենսաթոշակի գործն ուղարկող տարածքային բաժինը գործի հետ ուղարկում է նաև կենսաթոշակի վերջին վճարման մասին տեղեկանք:

Հարց 7. Ի՞նչ ժամկետում պետք է նշանակվի կենսաթոշակը:

Անձի դիմումը և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո կենսաթոշակ նշանակող տարածքային բաժինը 7 աշխատանքային օրվա ընթացքում որոշում է ընդունում կենսաթոշակ նշանակելու կամ կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին: Կենսաթոշակ նշանակելու մասին որոշում կայացնելուց հետո՝ 10-օրյա ժամկետում, կենսաթոշակառուին անվճար տրվում է կենսաթոշակի վկայական:

Մերժման որոշում կայացնելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցվում է դիմողին՝ նշելով մերժման պատճառը, և վերադարձվում են անձի ներկայացրած փաստաթղթերը:

Եթե ներկայացվել են ոչ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ապա դրանք 3 ամսվա ընթացքում ներկայացնելու դեպքում կենսաթոշակը նշանակվում է դիմելու օրվանից: Այդ փաստաթղթերը 3 ամսվա ժամկետը լրանալուց հետո ներկայացնելու դեպքում կենսաթոշակ նշանակվում է երկրորդ անգամ դիմելու օրվանից: Այսպիսով, եթե բացակայում են կենսաթոշակի նշանակման համար անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն ծագել է կենսաթոշակ ստանալու իրավունքը, ապա խորհուրդ է տրվում դիմումը համապատասխան տարածքային բաժին ներկայացնել իրավունքի ծագման

պահին, իսկ պակասող փաստաթղթերը ներկայացնել հետագա երեք ամիսների ընթացքում:

Հարց 8. Ովքե՞ր ունեն երկու կենսաթոշակ ստանալու իրավունք, և ո՞ր դեպքում է այն նշանակվում:

Երկու կենսաթոշակ ստանալու իրավունք ունեն միայն այն անձինք, ովքեր կենսաթոշակ են ստանում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով և կերակրողին կորցրելու դեպքում սոցիալական կենսաթոշակի իրավունք են ձեռք բերում «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով:

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակ նշանակվում է, եթե զինծառայողի մահվան պատճառը ծառայության ընթացքում ստացած վնասվածքն է, խեղումը կամ առաջացած հիվանդությունը: Մահվան պատճառական կապը որոշում են բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովները (ԲՄՓՀ):

Կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակ նշանակվում է, եթե կենսաթոշակի իրավունք ունեցող անձը չի աշխատում:

Հարց 9. Անչափահասին, անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձին կենսաթոշակ նշանակելու համար ո՞վ պետք է դիմի կենսաթոշակ նշանակող մարմին:

Անգործունակ, սահմանափակ գործունակ կամ մինչև 16 տարեկան անչափահաս անձին կենսաթոշակ նշանակելու համար նրա հաշվառման վայրի սոցիալական ապահովության տարածքային մարմնին գրավոր դիմում է ներկայացնում ծնողը (որդեգրողը, խնամակալը կամ հոգաբարձուն): Անչափահաս, անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձի կենսաթոշակը վճարվում է ծնողին (որդեգրողին, խնամա-

կալին կամ հոգաբարձուին): 16 տարին լրացած անձն իրավունք ունի կենսաթոշակ նշանակելու համար դիմել անձամբ:

Եթե անչափահասը (անգործունակը, սահմանափակ գործունակը) գտնվում է խնամատար կազմակերպությունում, ապա որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան կազմակերպությունը (մանկատունը կամ հոգեբուժարանը), որտեղ գտնվում է անչափահաս (անգործունակ, սահմանափակ գործունակ) անձը: Տվյալ անձին կենսաթոշակ նշանակելու համար կազմակերպության գտնվելու վայրը սպասարկող տարածքային բաժին գրավոր դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնում է այդ կազմակերպության ղեկավարը կամ նրա լիազորած անձը:

Հարց 10. Ի՞նչ չափով է վճարվում կենսաթոշակը բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունում (մանկատանը) ապրող ծնողագուրկ երեխային:

Բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունում (մանկատանը) ապրող ծնողագուրկ երեխային վճարվում է նշանակված կենսաթոշակի 50 տոկոսը: Այդ գումարները մինչև երեխայի չափահաս դառնալը կուտակվում են նրա անունով հատուկ այդ նպատակով բացված համապատասխան հաշվում և երեխայի չափահաս դառնալու օրվան հաջորդող մեկ ամսվա ընթացքում վճարվում են միանվագ կարգով:

Հարց 11. Ի՞նչ չափով է վճարվում կենսաթոշակը բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունում (ծերանոցում) ապրող կենսաթոշակառուին:

Բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունում (ծերանոցում) ապրող կենսաթոշակառուին կենսաթոշակի վճարման հարցը որոշվում է կախված այն բանից, թե կենսաթոշակառուն օգտվում է սոցիալական (որը կենսաթոշակի բազային չափով տրվում է պահանջվող ապա-

հովագրական ստաժ չունեցող անձանց), թե՛ ապահովագրական կենսաթոշակի իրավունքից (որը տրվում է ապահովագրական ստաժ ունեցող կենսաթոշակառուներին՝ բազային չափից բացի, յուրաքանչյուր տարվա համար հավելավճար տալու ձևով):

Եթե կենսաթոշակառուն օգտվում է ապահովագրական կենսաթոշակի իրավունքից և գտնվում է բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունում (ծերանոցում), ապա նրան վճարվում է նշանակված կենսաթոշակի միայն ապահովագրական մասը:

Օրինակ, եթե խնամակալական կազմակերպությունում ապրող կենսաթոշակառուի կենսաթոշակի չափը կազմի 31.300 ՀՀ դրամ, ապա նրան չի վճարվի կենսաթոշակի բազային մասը, այլ կտրվի միայն կենսաթոշակի ապահովագրական մասը՝ 23.300 ՀՀ դրամ (այսինքն միայն կենսաթոշակի այն մասը, որն առաջացել է ի հաշիվ ապահովագրական ստաժի տարիների):

Ինչ վերաբերում է սոցիալական կենսաթոշակ ստացող, խնամակալական կազմակերպությունում ապրող կենսաթոշակառուին, ապա նրան կենսաթոշակ չի վճարվում:

Հարց 12. Որո՞նք են ազատագրկման վայրում գտնվողներին կենսաթոշակ վճարելու առանձնահատկությունները:

Ազատագրկման վայրերում գտնվող կենսաթոշակառուների կենսաթոշակների գումարները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունն սպասարկող ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության տեղական գանձապետական բաժնում բացված արտաբյուջետային հաշվին: Պատժի կրումից ազատվելուց հետո դրանք միանվագ կերպով վճարվում են կենսաթոշակառուին:

Հարց 13. Ու՞մ և ի՞նչ կարգով է վճարվում կենսաթոշակատուի հասանելիք և նրա մահվան պատճառով չստացված կենսաթոշակի գումարը:

Կենսաթոշակատուին հասանելիք և նրա մահվան պատճառով չստացված կենսաթոշակի գումարը վճարվում է մահացողի ընտանիքի այն անդամին, ով դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող տարածքային բաժին է ներկայացրել կենսաթոշակատուի մահվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում:

Այդ գումարներն ամուսնուն կամ 14 տարեկան դարձած անչափահաս զավակին վճարվում են՝ անկախ հաշվառման վայրից, իսկ չափահաս զավակին, ծնողին, կամ ընտանիքի այլ անդամին՝ կենսաթոշակատուի մահվան օրվա դրությամբ բնակության վայրում նրա հետ հաշվառված լինելու դեպքում:

Վեցամսյա ժամկետում կենսաթոշակի գումարը չստանալու դեպքում այն վճարվում է ժառանգության իրավունքի վկայագիր ներկայացնող ժառանգին:

Հարց 14. Կենսաթոշակատուի մահվան դեպքում ու՞մ և ի՞նչ չափով է վճարվում թաղման նպաստը:

Կենսաթոշակատուի մահվան դեպքում թաղման նպաստը վճարվում է մահացած կենսաթոշակատուի հուղարկավորությունը կատարած անձին՝ կենսաթոշակի բազային (հիմնական) չափի քսանհինգապատիկի չափով (200000 դրամ):

Հարց 15. Եթե հաշմանդամության ժամկետը լրացած անձը մահացել է նախքան բժշկասոցիալական վերափորձաքննության համար դիմելը, արդյո՞ք նրա հուղարկավորությունը կատարած անձին թաղման նպաստ վճարվո՞ւմ է:

Եթե կենսաթոշակատու հաշմանդամը կամ այն անձը, ում հաշմանդամության ժամկետը լրացել է, սակայն նա չի հասցրել երեք ամսվա ընթացքում կրկին ներկայանալ փորձաքննության, մահացել է, ապա այդ դեպքում հուղարկավոր-

րություն կատարած անձին հիմնական կենսաթոշակի քսան-հինգապատիկի չափով վճարվում է թաղման նպաստ՝ դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակատուի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, կենսաթոշակ նշանակող մարմնի տարածքային ստորաբաժանում ներկայացնելու դեպքում: Ասվածից հետևում է, որ այն հաշմանդամները, որոնք մահացել են բժշկասոցիալական փորձաքննության ներկայանալու համար օրենքով նախատեսված եռամսյա ժամկետը անցնելուց հետո, ապա նրա հուղարկավորությունը կատարած անձին թաղման նպաստ չի վճարվում:

Հարց 16. Ի՞նչ չափով է թաղման նպաստ վճարվում, եթե մահացած կենսաթոշակատուն ստացել է երկու կենսաթոշակ:

«Պետական կենսաթոշակների մասին» և «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքներով սահմանված կենսաթոշակներ ստացող կենսաթոշակատուի մահվան դեպքում հուղարկավորությունը կատարած անձին թաղման նպաստ է վճարվում այն օրենքով, որով հաշվարկված նպաստի չափն ավելի բարձր է:

Հարց 17. Ե՞րբ է դադարեցվում կենսաթոշակի վճարումը:

Կենսաթոշակի վճարումը դադարեցվում է.

1. հաջորդ ամսվա 1-ից, եթե կենսաթոշակատուն՝
 - ա) մահացել է կամ ճանաչվել անհայտ բացակայող,
 - բ) տասներկու ամիս անընդմեջ կենսաթոշակ չի ստացել,
 - գ) կրկին հաշմանդամ չի ճանաչվել հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում,
 - դ) կերակրողին կորցնելու կենսաթոշակի դեպքում կորցրել է կենսաթոշակի իր իրավունքը Ֆլրացել է նշանակված կենսաթոշակի սահմանված ժամկետը),

ե) տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքից մեկ տարի շուտ կենսաթոշակ նշանակելուց հետո կենսաթոշակառուի աշխատելու դեպքում,

զ) նշանակված կենսաթոշակի իրավունքը կորցնելու (կենսաթոշակի գործում կեղծ (ոչ հավաստի) փաստաթղթեր հայտնաբերելու) դեպքում,

2. հայտնաբերման օրվանից, եթե անձը կենսաթոշակի իրավունքը կորցրել է կենսաթոշակի գործում կեղծ (ոչ հավաստի) փաստաթղթեր հայտնաբերելու պատճառով դադարեցված կենսաթոշակը լիազորագրով չի վճարվում:

Հարց 18. Կենսաթոշակի դադարեցված վճարումը ե՞րբ է վերսկսվում:

Կենսաթոշակի դադարեցված վճարումը վերսկսվում է, եթե՝

1) դատարանը որոշում է կայացրել կենսաթոշակառուին մահացած կամ անհայտ բացակայող ճանաչելու մասին որոշումը չեղյալ համարելու վերաբերյալ. այդ դեպքում կենսաթոշակի վճարումը վերսկսվում է կենսաթոշակառուի գրավոր դիմելու ամսին հաջորդող ամսվա 1-ից,

2) հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո՝ տասներկու ամսվա ընթացքում, անձը կրկին հաշմանդամ է ճանաչվել և բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնից ստացվել է անձի հաշմանդամությունը հաստատող տեղեկանք. այդ դեպքում կենսաթոշակի վճարումը վերսկսվում է հաշմանդամ ճանաչվելու օրվանից, իսկ այդ ժամկետից հետո հաշմանդամ ճանաչվելու դեպքում՝ անձի գրավոր դիմումի հիման վրա,

3) 18 տարին լրացած անձի՝ կերակրողին կորցրնելու դեպքում կենսաթոշակի վճարումը դադարեցնելու օրվանից, եթե ուսման մասին ուսումնական հաստատությունից տեղեկանք է ներկայացվում այդ օրվանից հետո՝ 3 ամսվա ընթացքում, իսկ այդ ժամկետից հետո տեղեկանք ներկայացնելու

դեպքում՝ անձի գրավոր դիմելու ամսին հաջորդող ամսվա 1-ից,

4) տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքից մեկ տարի շուտ կենսաթոշակ նշանակված լինելու դեպքում՝ անձի տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքի լրանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

Դադարեցված կենսաթոշակի վճարումը կենսաթոշակի իրավունք տվող նոր հանգամանքներ առաջանալու կամ նախկին հանգամանքները պատշաճ կարգով հաստատվելու դեպքում վերսկսվում է կենսաթոշակառուի գրավոր դիմելու և անհրաժեշտ այլ փաստաթղթեր ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

Կենսաթոշակի վճարումը վերսկսելու դեպքում տվյալ կենսաթոշակի իրավունքը չի վերանայվում:

Հարց 19. Չստացված կենսաթոշակի գումարները ո՞ր ժամանակահատվածի համար են վճարվում:

Չստացված կենսաթոշակի գումարները վճարվում են կենսաթոշակառուի գրավոր դիմելու ամսվան նախորդող 3 տարուց ոչ ավելի ժամանակահատվածի համար, իսկ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման մեղքով չվճարված կենսաթոշակի գումարները վճարվում են անցած ամբողջ ժամանակահատվածի համար:

Հարց 20. Ի՞նչ կարգով է փոխվում կենսաթոշակի տեսակը:

Կենսաթոշակ նշանակող տարածքային բաժինը, մինչև կենսաթոշակառուի տարիքային կենսաթոշակի իրավունք ձեռք բերելը, նրա ցանկությամբ փոխում է կենսաթոշակի տեսակը:

Տարիքային կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու դեպքում արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության կամ մասնակի կենսաթոշակի փոխարեն, անկախ կենսաթոշակառուի դիմումից՝ նշանակվում է տարիքային կենսաթոշակ:

շակ, իսկ հաշմանդամության կենսաթոշակ կամ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու կամ այդ իրավունքը ձեռք բերելու դեպքում կենսաթոշակի տեսակը փոխվում է կենսաթոշակառուի գրավոր դիմումի համաձայն: Եթե նշանակված տարիքային կենսաթոշակի չափը ցածր է նախկին կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:

Հարց 21. Կենսաթոշակից ի՞նչ չափով պահումներ կարող են կատարվել:

Կենսաթոշակից պահումներ կատարելու անհրաժեշտությունը կարող է ծագել այն դեպքերում, երբ գույքային պարտավորությունների կամ հանցագործությամբ պատճառված վնասի մասին առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը կամ դատավճիռը: Դատավճիռների և վճիռների հիման վրա կենսաթոշակից պահումներ կարող են կատարվել մինչև դրա 50 տոկոսի չափով:

Կենսաթոշակից պահումներ կատարելու անհրաժեշտությունը կարող է ծագել նաև այն դեպքերում, երբ կենսաթոշակառուի կողմից տարածքային բաժին ներկայացվել են սխալ տեղեկություններով փաստաթղթեր կամ չի տեղեկացվել ընտանիքի անդամների թվի փոփոխության մասին, ինչի հետևանքով նրան վճարվել են ավել գումարներ: Սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժնի որոշման հիման վրա ավել վճարված գումարները հետ են գանձվում, բայց տվյալ ամսում վճարվող կենսաթոշակի 20 տոկոսից ոչ ավելի չափով:

Ընդ որում, կենսաթոշակից կատարվող պահումների ընդհանուր գումարը չպետք է գերազանցի կենսաթոշակի 50 տոկոսը:

Հարց 22. Կենսաթոշակը ե՞րբ է վերահաշվարկվում:

Ինչպես սույն ուղեցույցի շրջանակներում բազմիցս նշվել է, կենսաթոշակի հիմնական չափը կազմում է 8000 ՀՀ դրամ¹, իսկ ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը՝ 450 ՀՀ դրամ: Նշված թվերը գրեթե յուրաքանչյուր տարի փոփոխվում են, ինչն էլ հանգեցնում է կենսաթոշակների վերահաշվարկման:

Այսպիսով, կենսաթոշակի վերահաշվարկում տեղի է ունենում յուրաքանչյուր անգամ ՀՀ կառավարության կողմից կենսաթոշակի հիմնական չափը և ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը փոփոխելիս:

Տարիքային, ինչպես նաև հաշմանդամության ապահովագրական կենսաթոշակներ ստացող կենսաթոշակառուները իրավունք ունեն սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժնից պահանջել կատարելու իրենց կենսաթոշակի վերահաշվարկ, եթե նշանակված կենսաթոշակն ստանալուն զուգահեռ նրանք շարունակել են աշխատել, և եթե կենսաթոշակը նշանակելու պահից ձեռք են բերել 6 ամսից ավելի ապահովագրական ստաժ:

Հարց 23. Ի՞նչ կարգով է վերահաշվարկվում կենսաթոշակը լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում:

Կենսաթոշակը վերահաշվարկելու համար լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում կենսաթոշակը վերահաշվարկվում է օրենքով սահմանված կարգով: Այդ դեպքում կենսաթոշակի գործում առկա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ստաժում առանձնապես ծանր, առանձնապես վնասակար պայմաններում աշխատած ժամանակահատվածը, քաղաքացիական ավիացիայի՝ թռիչքային ժամերով հաշվարկված ժամկետները, վկայությամբ հաստատված ժամանակահատվածը, երեխաների խնամքի

¹2010 թվականի նոյեմբեր ամսից նախատեսվում է կենսաթոշակի հիմնական չափը դարձնել 10500 ՀՀ դրամ:

Ժամանակահատվածը, ուսումնական հաստատություններում առկա (ցերեկային) ուսման ժամանակահատվածն ապահովագրական ստաժի մեջ պահպանվում են նույնությամբ:

Հարց 24. Հաշմանդամության վերափորձաքննության ժամկետը բաց թողնելու դեպքում բաց թողնված ի՞նչ ժամանակահատվածի համար է կենսաթոշակ վճարվում:

Եթե անձը բաց է թողել հաշմանդամության վերափորձաքննության ժամկետը և այդ ժամկետից հետո 3 ամսվա ընթացքում, վերստին հաշմանդամ է ճանաչվել, ապա կենսաթոշակը բաց թողնված ժամանակահատվածի համար վճարվում է, ընդ որում՝ նախկին չափով: Այդ ժամկետը 3 ամսից ավելի բաց թողնելու և վերստին հաշմանդամ ճանաչվելու դեպքում բաց թողնված ժամանակահատվածի համար կենսաթոշակ չի վճարվում:

Հարց 25. Եթե քաղաքացու անձնագրում և աշխատանքային գրքույկում ազգանունները չեն համընկնում, կենսաթոշակ նշանակելիս ի՞նչ լրացուցիչ փաստաթուղթ պետք է ներկայացվեն:

Այդ դեպքում փաստաթուղթը տվյալ անձին պատկանելու փաստը հաստատվում է ամուսնության վկայականով կամ անունը, ազգանունը, հայրանունը փոխելու մասին վկայականով կամ դատական կարգով:

Հարց 26. Եթե քաղաքացու անձնագրում նշված չեն նրա ծննդյան ամիսը և օրը, ապա ո՞ր ժամկետից է նրան կենսաթոշակ նշանակվում:

Եթե քաղաքացու անձնագրում նշված է միայն ծննդյան տարեթիվը՝ առանց ամիսը և օրը նշելու, ապա ծննդյան ամիս և օր է համարվում տվյալ տարվա հուլիսի 1-ը, իսկ եթե նշված չէ օրը՝ համապատասխան ամսվա 15-ը:

Հարց 27. Ինչպե՞ս կարելի է բողոքարկել կենսաթոշակին վերաբերող որոշումները:

Կենսաթոշակին վերաբերող որոշումները կարող են բողոքարկվել այդ որոշումը կայացնող ստորաբաժանումների վերադաս մարմիններում, իսկ վերջիններիս կայացրած որոշումները՝ Վարչական դատարանում:

Հարց 28. Որո՞նք են կենսաթոշակի տեսակները:

Հայաստանի Հանրապետությունում սահմանված են կենսաթոշակի հետևյալ տեսակները՝ աշխատանքային, զինվորական և սոցիալական: Միննույն սոցիալական խմբին պատկանող քաղաքացիները (օրինակ՝ հաշմանդամները) մի դեպքում կարող են ձեռք բերել աշխատանքային կենսաթոշակի իրավունք, մեկ այլ դեպքում՝ սոցիալական: Աշխատանքային կենսաթոշակի իրավունքն ունեն այն անձինք, ովքեր նախքան կենսաթոշակի իրավունքի ծագելը եղել են օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված աշխատողներ և ունեն որոշակի տարիների ապահովագրական ստաժ: Եթե սոցիալական կենսաթոշակի դեպքում կենսաթոշակառուին տրվում է օրենքով արդեն իսկ սահմանված չափով կենսաթոշակ, ապա ապահովագրական կենսաթոշակի դեպքում կենսաթոշակառուն, բացի օրենքով սահմանված կենսաթոշակի չափից, ստանում է նաև հավելվածարներ՝ կախված իր ունեցած ապահովագրական ստաժից: Ապահովագրական ստաժի էությունը կայանում է նրանում, որ նշված անձինք լրացուցիչ գումարներ են ստանում ապահովագրական ստաժի յուրաքանչյուր տարվա համար: Իսկ ապահովագրական ստաժ կարելի է ձեռք բերել միայն սահմանված կարգով գրանցված աշխատող լինելու դեպքում, որի պարագայում աշխատողները և նրանց գործատուները սոցիալական ապահովության վճարներ են կատարում պետական բյուջե:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՏԱԺ

Հարց 29. Ի՞նչ է ապահովագրական ստաժը:

Ապահովագրական ստաժը այն ժամանակահատվածն է, որի ընթացքում անձը իրականացրել է օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեություն /անհատ ձեռներեցների և նոտարների դեպքում/ կամ գտնվել է աշխատանքային հարաբերությունների մեջ գործատուների հետ և այդ ժամանակահատվածում աշխատողը և գործատուն կատարել են պարտադիր սոցիալական ապահովության վճարներ օրենքով սահմանված դրույքաչափերով և կարգով:

Պարտադիր սոցիալական վճարումները կատարում է գործատուն՝ աշխատողի աշխատավարձի հաշվին, աշխատավարձի 3%-ի չափով:

Այն դեպքում, երբ աշխատողի և գործատուի աշխատանքային փոխհարաբերություններին տրված չէ իրավական կարգավորում, նրանց միջև բացակայում է աշխատանքային պայմանագիրը և աշխատանքի ընդունման հրամանը, գործատուն աշխատողի համար չի կատարում նշված սոցիալական ապահովության վճարները՝ այդ կերպ իրեն ազատելով այդ պարտավորությունից (օրինակ, գործատուի սոցիալական ապահովության վճար կատարելու պարտականությունից): Նման տիպի աշխատանքային հարաբերություններում գտնվող աշխատողը կենսաթոշակային տարիքի հասնելիս կանգնում է փաստի առջև և, ժամանակին նրա համար գործատուի կողմից սոցիալական ապահովության վճարներ կատարած չլինելու պատճառով զրկվում է ապահովագրական կենսաթոշակ ստանալու իրավունքից՝ բավարարվելով սոցիալական կենսաթոշակով: Մինչդեռ աշխատողի համար կատարված սոցիալական ապահովության վճարների յուրաքանչյուր տարին կենսաթոշակի բազային չափին ավելացնում է հավելյալ 450 դրամ գումար:

Հարց 30. Ինչպե՞ս է հաշվարկվում ապահովագրական ստաժը:

Ապահովագրական ստաժը հաշվարկվում է աշխատանքային և այլ գործունեության յուրաքանչյուր ժամանակաշրջանի տարին, ամիսը, օրը հաշվառելով, և այնուհետև դրանց միմյանց գումարելով: Աշխատած ժամանակաշրջանի ընդհանուր չափը այնուհետև բաժանվում է 12-ի՝ աշխատած ժամանակաշրջանի տարիները հաշվարկելու նպատակով: Ապահովագրական ստաժի յուրաքանչյուր 30 օրը հաշվարկվում է որպես մեկ լրիվ ամիս, իսկ յուրաքանչյուր 12 ամիսը՝ մեկ լրիվ տարի:

Ապահովագրական ստաժում հաշվարկվող աշխատանքային և (կամ) այլ գործունեության ժամանակահատվածների համընկնման դեպքում հաշվառվում է դրանցից մեկը:

Մեկ օրացուցային տարվա համար չի կարող հաշվարկվել մեկ տարուց ավելի ապահովագրական ստաժ, բացի մարտական գործողությունների մասնակցելու և բռնադատվածության ժամանակաշրջաններից:

Հարց 31. Ուսումնառության տարիներն արդյո՞ք հաշվարկվում են ապահովագրական ստաժում:

Եթե անձը ունի նվազագույնը 5 տարվա ապահովագրական ստաժ, ապա ապահովագրական ստաժում հաշվարկվում է նաև ուսումնական հաստատությունում նրա առկա (ցերեկային) ուսումնառության ժամանակաշրջանը, բայց 6 տարուց ոչ ավելի:

Ասվածից հետևում է, որ ուսումնական հաստատությունում հեռակա կարգով ուսում ստացած անձանց ուսումնառության ժամանակաշրջանը չի կարող ներառվել ապահովագրական ստաժում:

Հարց 32. Պարտադիր զինվորական ծառայության, ժամանակավոր անաշխատունակության կամ գործազրկության նպաստ ստանալու ժամանակահատվածը արդյո՞ք ներառվում է ապահովագրական ստաժում:

Կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ 5 տարվա ապահովագրական ստաժ ունենալու պարագայում ապահովագրական ստաժի մեջ է ներառվում նաև պարտադիր զինվորական ծառայության, անաշխատունակության արձակուրդում գտնվելու, ինչպես նաև գործազրկության նպաստ ստանալու ողջ ժամանակահատվածը:

Հարց 33. Արդյո՞ք երեխային կամ հիվանդին խնամելու ժամանակահատվածը ներառվում է ապահովագրական ստաժում:

Ծնողներից (որդեգրողներից, խնամակալներից) մեկի՝ հաշմանդամ երեխային մինչև 18 տարին լրանալը խնամելու ժամանակաշրջանը ներառվում է ապահովագրական ստաժում, եթե տվյալ անձն ունի նվազագույնը 5 տարվա ապահովագրական ստաժ:

Հինգ տարվա ապահովագրական ստաժի առկայության դեպքում որպես ապահովագրական ստաժ է հաշվարկվում նաև խնամակալ ճանաչված անձի՝ 1-ին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակահատվածը: Սակայն պետք է նկատի ունենալ, որ նշված երկու դեպքերում էլ ապահովագրական ստաժում տվյալ ժամանակաշրջանը հաշվարկում է ոչ ավելի, քան տասը տարին:

Հինգ տարվա ապահովագրական ստաժի առկայության դեպքում ապահովագրական ստաժում հաշվարկվում է նաև ծնողներից (որդեգրողներից) մեկի՝ մինչև յուրաքանչյուր երեխայի 2 տարին լրանալը երեխային խնամելու ժամանակահատվածը, սակայն վեց տարուց ոչ ավելի:

Հարց 34. Բռնադատված, անհիմն կերպով քրեական պատասխանատվության ենթարկված անձանց անազատության

մեջ գտնվելու ժամանակահատվածները արդյո՞ք ներառվում են ապահովագրական ստաժում:

Բռնադատվածները, ինչպես նաև անհիմն կերպով քրեական պատասխանատվության ենթարկված անձանց ապահովագրական ստաժը հաշվարկելիս, եթե նրանք հետագայում օրենքով սահմանված կարգով արդարացվել են և ունեն հինգ տարվա ապահովագրական ստաժ, կալանքի տակ գտնվելու, ազատագրվման վայրերում և քստորավայրերում պատիժ կրելու ժամանակահատվածները ևս հաշվարկվում են ապահովագրական ստաժում:

Պետք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք, որ բռնադատված կամ անհիմն կերպով քրեական պատասխանատվության ենթարկված և հետագայում օրենքով սահմանված կարգով արդարացված անձի՝ կալանքի տակ գտնվելու, ազատագրվման վայրերում և քստորավայրերում պատիժ կրելու ժամանակահատվածները ապահովագրական ստաժում հաշվարկվում են եռակի չափով:

Հարց 35. Զինձառայող ամուսնու կամ օտարերկրյա պետությունում դիվանագիտական առաքելության մեկնած անձի ամուսնու՝ նրա հետ համատեղ ապրելու ժամանակահատվածը ներառվո՞ւմ է ապահովագրական ստաժում:

Հինգ տարվա ապահովագրական ստաժի առկայության դեպքում սպայական կազմի, ենթասպայական կազմի և գերակետիկ ծառայության զինձառայող ամուսնու հետ համատեղ ապրած ժամանակահատվածն այն վայրերում, որտեղ բացակայում է մասնագիտությամբ աշխատանքի տեղավորվելու հնարավորությունը, ներառվում է ապահովագրական ստաժում, բայց ոչ ավելի, քան այդ ժամանակահատվածի հինգ տարին:

Նույնը վերաբերում է նաև օտարերկրյա պետությունում գործող, ՀՀ դիվանագիտական ծառայության մարմին դիվանագիտական ծառայության մեկնած ամուսնու հետ համա-

տեղ ապրած ժամանակահատվածին, սակայն դարձյալ ապահովագրական ստաժում հաշվարկվում է ոչ ավելի, քան այդ ժամանակահատվածի 5 տարին:

Հարց 36. Կոլտնտեսությունում աշխատած ժամանակահատվածը արդյո՞ք ներառվում է ապահովագրական ստաժում:

Կոլտնտեսությունում աշխատած ժամանակահատվածը հաստատվում է աշխատանքային գրքույկով կամ աշխատանքի մասին կոլտնտեսությունների վարչությունների փաստաթղթերի հիման վրա տրված այլ փաստաթղթերով կամ արխիվային տեղեկանքով, ընդ որում, տարվա ընթացքում վաստակած մեկ աշխօրը հաշվառվում է որպես մեկ աշխատանքային օր, հարյուր և ավելի աշխօրը՝ մեկ աշխատանքային տարի: Կոլտնտեսությունում աշխատած ժամանակահատվածը որպես ստաժ տրամադրելու լիազորություն ունեցող հանձնաժողովի որոշման հիման վրա աշխատանքային գրքույկում կատարված գրառումները կենսաթոշակ նշանակելու ժամանակ հիմք են ապահովագրական ստաժը հաշվարկելու համար, եթե գրառման մեջ նշված է որոշման համարը, օրը, ամիսը, տարին:

Հարց 37. Որքա՞ն է կազմում ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը:

Ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը կազմում է 450 ՀՀ դրամ:

Հարց 38. Ինչպե՞ս է հաստատվում ստաժը՝ այն հաստատող փաստաթղթերի բացակայության դեպքում:

Աշխատանքային գրքույկի կամ ստաժը հաստատող այլ փաստաթղթերի բացակայության դեպքում ստաժը հաստատվում է արխիվային տեղեկանքով, իսկ այն չլինելու դեպքում՝ դատական կարգով:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

Հարց 39. Որո՞նք են աշխատանքային կենսաթոշակի տեսակները:

Աշխատանքային կենսաթոշակի տեսակներն են՝

- տարիքային,
- արտոնյալ պայմաններով,
- երկարամյա ծառայության,
- հաշմանդամության,
- կերակրողին կորցնելու դեպքում,
- մասնակի

Հարց 40. Ովքե՞ր են օգտվում տարիքային կենսաթոշակի իրավունքից:

Տարիքային կենսաթոշակի իրավունք ունի 63 տարին լրացած անձը, ով ունի առնվազն 25 տարվա աշխատանքային ստաժ: 25 տարվա ախահովազրական ստաժի դեպքում կիրառվում է 1 գործակից, 25 տարուց ավելի ապահովագրական ստաժ ունենալու դեպքում 1.02 գործակից յուրաքանչյուր տարվա համար, իսկ 25 տարուց պակաս ապահովագրական ստաժի դեպքում յուրաքանչյուր տարվա համար կիրառվում է 0,04 գործակից:

Տարիքային կենսաթոշակի իրավունք ձեռք բերած անձը կենսաթոշակ նշանակելու համար կարող է դիմել առանց ժամկետի սահմանափակման: Տարիքային կենսաթոշակը նշանակվում է ցմահ:

Հարց 41. Ովքե՞ր ունեն սահմանված ժամկետից շուտ տարիքային կենսաթոշակի անցնելու իրավունք:

Յուրաքանչյուր անձ 35 տարվա ապահովագրական ստաժի առկայության դեպքում կենսաթոշակի անցնելու իրավունք ունի սահմանված տարիքից մեկ տարի շուտ, եթե չի աշխատում և ունի գործազուրկի կարգավիճակ: Կենսաթոշակ նշանակելուց հետո աշխատելու դեպքում կենսաթոշակի վճարումը դադարեցվում է, մինչև անձի՝ տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքի լրանալը:

Հարց 42. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ ներկայացնել տարիքային կենսաթոշակ նշանակելու համար:

Տարիքային կենսաթոշակ ստանալու համար սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժին դիմումի հետ պետք է ներկայացնել.

- անձնագիրը և դրա պատճենը,
- լուսանկար,
- սոցիալական քարտը և դրա պատճենը,
- ապահովագրական ստաժը հաստատող փաստաթղթերը (աշխատանքային գրքույկը և դրա պատճենը, դրա բացակայության դեպքում՝ ստաժը հաստատող այլ փաստաթղթեր կամ արխիվային տեղեկանքներ),
- 1992 թվականի հունվարից սկսած՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարումներ կատարելու փաստը հաստատող կամ աշխատավարձի չափի վերաբերյալ տեղե-

կանքը, որը տրվում է աշխատավայրից (եթե կազմակերպությունը լուծարվել է, ապա տեղեկանքը պետք է ներկայացվի արխիվից),

- ցերեկային (առկա) ուսուցման վերաբերյալ դիպլոմը և դրա պատճենը, ինչպես նաև ցերեկային (առկա) ուսուցմամբ սովորելու մասին ուսումնական հաստատության կամ արխիվային տվյալներ պարունակող տեղեկանք,

- զինգրքույկը և դրա պատճենը կամ զինծառայության վերաբերյալ տեղեկանք,

- բռնադատվածի վկայականը և դրա պատճենը (եթե անհրաժեշտ է), ինչպես նաև արդարացման մասին դատարանի վճիռը կամ հանցակազմի, հանցադեպի և ապացույցների բացակայության պատճառով քրեական գործի կարճման մասին որոշումը,

- եթե կա նման անհրաժեշտություն, ապա անզգանվան, անվան կամ հայրանվան փոփոխության մասին դատարանի վճիռը և դրա պատճենը,

- հաշվառման վայրից տեղեկանք, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ փաստացի բնակության վայրի մասին բնակ. շահագործման տեղամասի կամ համատիրության կամ ՏԻՄ կողմից տրված տեղեկանքը:

Ներկայացվածը փաստաթղթերի հիմնական ցանկն էր, ինչը չի բացառում սոցիալական ապահովության ծառայության աշխատակիցների կողմից անհրաժեշտության դեպքում լրացուցիչ փաստաթղթեր պահանջելու հնարավորությունը:

Հարց 43. Ի՞նչ կարգով է վերահաշվարկվում տարիքային կենսաթոշակ ստացող և աշխատող կենսաթոշակառուների կենսաթոշակը:

Եթե տարիքային կենսաթոշակ ստացող կենսաթոշակառուն շարունակում է աշխատել, ապա նրա դիմումի հիման վրա 2 տարին մեկ անգամ կատարվում է կենսաթոշակի վերահաշվարկ՝ այդ ժամանակահատվածում նրա ձեռք բերած

ապահովագրական ստաժը արդեն իսկ գոյություն ունեցող նրա ապահովագրական ստաժում ներառելու ճանապարհով: Սակայն կենսաթոշակառուն կենսաթոշակի վերահաշվարկի իրավունք է ձեռք բերում, եթե վերջին կենսաթոշակի նշանակվելուց հետո ձեռք բերած ապահովագրական ստաժի չափը պակաս չէ 6 ամսից: Վերահաշվարկը կատարվում է դիմումը տալու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

Հարց 44. Ովքե՞ր են օգտվում արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունքից:

Առանձնապես վնասակար, ծանր պայմաններում աշխատած անձինք իրավունք ունեն արտոնյալ պայմաններով կենսաթոշակի անցնել առավել վաղ տարիքում, քան սովորական պայմաններում աշխատած անձինք: ՀՀ կառավարությունը սահմանել է արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ցուցանիշների ցանկը, որն իրավունք է տալիս անձին առավել վաղ տարիքում անցնել կենսաթոշակի:

Թիվ 1 ցուցակով արտոնյալ պայմաններով կենսաթոշակի անցնելու իրավունք ունեն առանձնապես ծանր, վնասակար պայմաններում աշխատող (աշխատած) այն անձինք, ովքեր դարձել են 55 տարեկան և ունեն առնվազն 25 տարվա ապահովագրական ստաժ, որից առնվազն 15 տարին աշխատել են առանձնապես ծանր, վնասակար պայմաններում: Ընդ որում, մինչև սույն կետով սահմանված կենսաթոշակային տարիքի հասնելը տղամարդիկ և կանայք կենսաթոշակի անցնելու իրավունք ունեն ըստ հետևյալ սանդղակի.

Ծննդյան տարեթիվը	Տղամարդիկ	Ծննդյան տարեթիվը	Կանայք	Կենսաթոշակի անցնելու տարին
------------------	-----------	------------------	--------	----------------------------

		01.07.1958-31.12.1958	53 2011
		01.01.1959-30.06.1959	53.5 2012
		01.07.1959-31.12.1959	54 2013
		01.01.1960-30.06.1960	54.5 2014
		01.07.1960-31.12.1960 և հետո	55 2015

բ/ Թիվ 2 ցուցակով արտոնյալ պայմաններով կենսաթոշակի անցնելու իրավունք ունեն ծանր, վնասակար պայմաններում (արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ցուցանիշների ցանկը սահմանել է ՀՀ կառավարությունը) աշխատող (աշխատած) այն անձինք, ովքեր դարձել են 59 տարեկան և ունեն առնվազն 25 տարվա ապահովագրական ստաժ, որից 20 տարին աշխատել են ծանր, վնասակար պայմաններում: Ընդ որում մինչև սույն կետով սահմանված կենսաթոշակային տարիքի հասնելը կանայք կենսաթոշակի անցնելու իրավունք ունեն ըստ հետևյալ սանդղակի.

Ծննդյան տարեթիվը	Կանայք	Կենսաթոշակի անցնելու տարին

01.07.1953-31.12.1953	58	2011
01.01.1954-30.06.1954	58.5	2012
01.07.1954-31-12-1954 և հետո	59	2013

գ/ Հիպոֆիզարային թզուկությամբ /լիլիպուտ/ հիվանդ անձը արտոնյալ պայմաններով կենսաթոշակի անցնելու իրավունք է ձեռք բերում առավել վաղ տարիքում՝ 45 տարեկանում, եթե ունի 20 տարվա ապահովագրական ստաժ:

Հարց 45. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի համար տրվող վճարովի արձակուրդի ժամանակահատվածը հաշվառվո՞ւմ է արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ստաժում:

Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի համար տրվող վճարովի արձակուրդի ժամանակահատվածը հաշվառվում է արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ապահովագրական ստաժում:

Արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ապահովագրական ստաժում հաշվառվում է նաև այն ժամանակահատվածը, երբ կինը հղիության կամ երեխային կրծքով կերակրելու կապակցությամբ թիվ 1 և 2 ցուցակներով նախատեսված աշխատանքներից ժամանակավորապես այլ աշխատանքի է տեղափոխվել (բժշկական եզրակացության հիման վրա) կամ մինչև հարմար աշխատանքով ապահովելը չի աշխատել:

Հարց 46. Ովքե՞ր են օգտվում երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքից:

Երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ունեն քաղաքացիական ավիացիայի հետևյալ աշխատողները.

1. թռիչքահրամանատարական, թռիչքահրահանգչական և թռիչքային անձնակազմի անդամները՝ 45 տարեկան դառնալու և 25 տարի ծառայած լինելու դեպքում, իսկ առողջական վիճակի պատճառով թռիչքային աշխատանքներից ազատված անձինք՝ 20 տարի ծառայած լինելու դեպքում,

2. բորտօպերատորները և բորտուղեկցողները՝ 45 տարեկան դառնալու և 25 տարի ծառայած լինելու դեպքում, իսկ առողջական վիճակի պատճառով թռիչքային աշխատանքներից ազատված անձինք՝ 20 տարի ծառայած լինելու դեպքում,

3. օդային երթևեկության կառավարումն իրականացնող ծառայության անդամները, ովքեր ունեն դիսպետչերի /ենթակարգավարի/ վկայական, 50 տարեկան դառնալու և 25 տարվա ապահովագրական ստաժ ունենալու դեպքում, որից 15 տարին անմիջականորեն զբաղված են եղել օդային երթևեկության կառավարման աշխատանքներով, իսկ առողջական վիճակի պատճառով օդային երթևեկության անմիջական կառավարման աշխատանքներից ազատվածները՝ 50 տարեկան դառնալու և 25 տարվա ապահովագրական ստաժ ունենալու դեպքում, որից 10 տարին անմիջականորեն զբաղվել են օդային երթևեկության կառավարման աշխատանքներով,

4. ինժեներատեխնիկական անձնակազմի անդամները՝ 55 տարեկան դառնալու և 25 տարվա ապահովագրական ստաժ ունենալու դեպքում, որից 20 տարին զբաղվել են երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքներով:

Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակը նշանակվում է մինչև տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալը, այսինքն՝ մինչև կենսաթոշակառուի 63 տարին լրանալը:

Որոնք են երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք տվող պաշտոնները:

Երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ունեն քաղաքացիական ավիացիայի այն աշխատողները, ովքեր զբաղվել են աշխատանքային գործունեության հետևյալ տեսակներով կամ զբաղեցրել են հետևյալ պաշտոնները՝

1) թռիչքահրամանատարական անձնակազմի անդամներ՝

ա) քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետ (գլխավոր վարչության պետ),

բ) գլխավոր վարչության պետի տեղակալ՝ թռիչքային աշխատանքների գծով (կորպուսի հրամանատար),

գ) ավիաթռիչքային ուսումնամարզական կենտրոնի պետ (կորպուսի հրամանատար),

դ) թռիչքների անվտանգության տեսչության տեսուչ-պետ (կորպուսի հրամանատար),

ե) թռիչքային աշխատանքի կազմակերպման բաժնի պետ (կորպուսի հրամանատար),

զ) միացյալ ավիաջոկատի և թռիչքային ջոկատի հրամանատար (կորպուսի հրամանատար),

է) գլխավոր վարչության գլխավոր ղեկապետ (վարչության պետ),

ը) գլխավոր վարչության թռիչքային տեսուչ (վարչության պետ),

թ) թռիչքային ջոկատի հրամանատարի տեղակալ (վարչության պետ),

ժ) թռիչքային ջոկատի ավագ ղեկապետ (գնդի հրամանատար),

ժա) թռիչքային ջոկատի ավագ բորտինժեներ (գումարտակի հրամանատար),

ժբ) թոփչքային ջոկատի ավագ բորտռադիստ (վաշտի հրամանատար),

ժգ) ավիաէսկադրիլիայի հրամանատար՝ Ա-310, ԻԼ-76, ԻԼ-86, ՏՈՒ-154, ՏՈՒ-134, ԻԼ-18 ինքնաթիռների (բրիգադի հրամանատար),

ժդ) ավիաէսկադրիլիայի հրամանատարի տեղակալ (գնդի հրամանատար),

ժե) ավիաէսկադրիլիայի ղեկապետ (գումարտակի հրամանատար),

ժզ) ավիաէսկադրիլիայի բորտինժեներ (վաշտի հրամանատար),

ժէ) ավիաէսկադրիլիայի բորտմեխանիկ (դասակի հրամանատար),

ժը) ավիաէսկադրիլիայի բորտռադիստ (ջոկի հրամանատար),

ժթ) ՅԱԿ-40, ԱՆ-24 ինքնաթիռների և ուղղաթիռի ավիաէսկադրիլիայի հրամանատար (գնդի հրամանատար),

ի) ՅԱԿ-40, ԱՆ-24 ինքնաթիռների և ուղղաթիռի ավիաէսկադրիլիայի հրամանատարի տեղակալ (վաշտի հրամանատար),

իա) ավիաէսկադրիլիայի ղեկապետ, բորտմեխանիկ (դասակի հրամանատար)։

2) թոփչքահրահանգչական անձնակազմի անդամներ՝

ա) գլխավոր վարչության հրահանգիչ՝ Ա-310, ԻԼ-76, ԻԼ-86, ՏՈՒ-154, ՏՈՒ-134, ԻԼ-18 ինքնաթիռների (վարչության պետ),

բ) ավիաէսկադրիլիայի հրահանգիչ՝ Ա-310, ԻԼ-76, ԻԼ-86, ՏՈՒ-154, ՏՈՒ-134, ԻԼ-18 ինքնաթիռների (բաժանմունքի պետ),

գ) ՅԱԿ-40, ԱՆ-24 ինքնաթիռների և ուղղաթիռի ավիաէսկադրիլիայի հրահանգիչ (դասակի հրամանատար)։

3) թոփչքային անձնակազմի անդամներ՝

ա) ինքնաթիռի հրամանատար՝ Ա-310, ԻԼ-76, ԻԼ-86, ՏՈԻ-154, ՏՈԻ-134, ԻԼ-18 ինքնաթիռների (գնդի հրամանատար),
բ) ինքնաթիռի II օդաչու (վաշտի հրամանատար),
գ) ինքնաթիռի ղեկավար (վաշտի հրամանատար),
դ) ինքնաթիռի բորտինժեներ (վաշտի հրամանատար),
ե) ինքնաթիռի բորտմեխանիկ (դասակի հրամանատար),
զ) ինքնաթիռի բորտռադիստ (ջոկի հրամանատար),
է) ՅԱԿ-40, ԱԼ-24 ինքնաթիռների և ուղղաթիռի հրամանատար (դասակի հրամանատար),

ը) ինքնաթիռի II օդաչու (ջոկի հրամանատար),

թ) ինքնաթիռի բորտմեխանիկ (ջոկի հրամանատար)։

4) բոլոր անվանումների պարաշյուտիստները, փրկարարները.

5) բորտօպերատորները և բորտուղեկցորդները.

6) օդային երթևեկության կառավարումն իրականացնող ծառայությունների անձնակազմի անդամները, ովքեր զբաղվել են աշխատանքային գործունեության հետևյալ տեսակներով կամ զբաղեցրել են հետևյալ պաշտոնները՝

ա) դիսպետչերներ (ենթակարգավարներ),

բ) ավագ դիսպետչերներ,

գ) դիսպետչեր-հրահանգիչներ,

դ) դիսպետչերական կետերի պետեր,

ե) դիսպետչերական կետերի պետ-թռիչքների ղեկավարներ,

զ) թռիչքների ղեկավարներ,

է) հրահանգիչներ,

ը) ավագ հրահանգիչ-թռիչքների ղեկավարներ,

թ) օդային երթևեկության կառավարման ծառայության պետեր,

ժ) օդանավակայանների պետեր,

ժա) օդային երթևեկության կառավարման գծով տեղակալներ,

ժբ) առաջատար մասնագետներ,

- ժգ) գլխավոր մասնագետներ,
- ժդ) բաժնի պետեր,
- ժե) ծառայության պետեր,
- ժզ) պետ-թռիչքների ղեկավարներ,
- ժէ) պետի տեղակալ-թռիչքների ղեկավարներ,
- ժը) պետի տեղակալներ,
- ժթ) տնօրեն,
- ի) տնօրենի տեղակալ.

7) ինժեներատեխնիկական անձնակազմի անդամները, ովքեր զբաղվել են աշխատանքային գործունեության հետևյալ տեսակներով կամ զբաղեցրել են հետևյալ պաշտոնները՝

ա) բոլոր անվանումների ավիացիոն տեխնիկներ (մեխանիկներ, մոտորիստներ),

բ) բոլոր անվանումների ավիացիոն ինժեներներ,

գ) օդային նավատորմի և թռչող այլ ապարատների տեխնիկական սպասարկման արտադրամասերի, հերթափոխերի, տեղամասերի, ծառայությունների, խմբերի պետեր:

23. Թռիչքահրամանատարական, թռիչքահրահանգչական և թռիչքային անձնակազմի ծառայության ժամանակաշրջանի մեջ հաշվառվում են նաև զինված ուժերի թռիչքային և թռիչքափորձարկման անձնակազմերի պաշտոններում աշխատելու ժամանակահատվածները:

Օդային երթևեկության կառավարման ծառայության ժամանակաշրջանի մեջ օրենքի 48-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվառվում են նաև թռիչքահրամանատարական, թռիչքահրահանգչական և թռիչքային անձնակազմերում ծառայելու ժամանակահատվածները:

Ինժեներատեխնիկական անձնակազմի ծառայության ժամանակաշրջանի մեջ օրենքի 48-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվառվում են նաև

թոփչքահրամանատարական, թոփչքահրահանգչական, թոփչքային և օդային երթևեկության կառավարման անձնակազմերում ծառայելու ժամանակահատվածները:

24. Քաղաքացիական ավիացիայի առանձին կատեգորիաների աշխատողների երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք տվող ապահովագրական ստաժը հաստատվում է՝

ա) թոփչքահրամանատարական, թոփչքահրահանգչական և թոփչքային անձնակազմի անդամների, ինչպես նաև բորտօպերատորների ու բորտուղեկցորդների համար՝ զբաղեցրած պաշտոնի, թոփչքային ժամերի և ստաժի վերաբերյալ համապատասխան կազմակերպության տված տեղեկանքով ու թոփչքային գրքույկով.

բ) փորձարարական տեխնիկայի թոփչքափորձարկման անձնակազմի առանձին աշխատողների համար՝ համապատասխան կազմակերպության տված տեղեկանքով, որի մեջ նշումներ կան այն սկզբնական փաստաթղթերի մասին (հրամաններ, հանձնարարությունը կատարելու մասին հաշվետվություններ և այլն), որոնց հիման վրա տրվել է տեղեկանքը.

գ) օդային երթևեկությունը կառավարող աշխատողների համար՝ աշխատանքային գրքույկով, ինչպես նաև երթևեկության ծառայության դիսպետչերի (ենթակարգավարի) գրքույկով և օդային երթևեկության կառավարմանն անմիջականորեն առնչվող պաշտոններում մասնագետին նշանակելու մասին համապատասխան կազմակերպության տված տեղեկանքով.

դ) քաղաքացիական ավիացիայի ինժեներատեխնիկական անձնակազմի աշխատողների համար՝ աշխատանքային գրքույկով, ինչպես նաև լրիվ աշխատանքային օրն օդանավերի և այլ թռչող ապարատների օդանավակայանների օպերատիվ և պարբերական (երաշխիքային) տեխնիկական սպասարկման

աշխատանքներով անմիջականորեն զբաղված լինելու մասին կազմակերպության տված տեղեկանքով:

25. Քաղաքացիական ավիացիայի թռիչքահրամանատարական, թռիչքահրահանգչական, թռիչքային անձնակազմի անդամների, բորտօպերատորների և բորտուղեկցորդների երկարամյա ծառայության ժամկետների ապահովագրական ստաժը հաշվարկվում է փաստացի թռիչքային ժամերն օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված թռիչքի ժամերի (համապատասխանաբար՝ 20-ի և 12-ի) վրա բաժանելու միջոցով: Ստացված թիվն ապահովագրական ստաժում հաշվառվող ամիսների թիվն է:

Ծառայության տարիների հաշվարկը կատարվում է ծառայության լրիվ ամիսների թիվը 12-ի բաժանելու միջոցով:

Հարց 47. Հաշմանդամության կենսաթոշակներ:

Հաշմանդամության կենսաթոշակ նշանակվում է բժշկատոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված անձին,

1. ով հաշմանդամ է դարձել աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետևանքով՝ անկախ ապահովագրական ստաժից:

2. ով հաշմանդամ է դարձել ընդհանուր հիվանդության հետևանքով և հաշմանդամություն սահմանելու ժամանակ ունեցել է հետևյալ ապահովագրական ստաժը.

- մինչև 23 տարեկան- 2 տարի,
- 23-26 տարեկան- 3 տարի,
- 26-39 տարեկան- 4 տարի,
- 29-32 տարեկան- 5 տարի,
- 32-35 տարեկան- 6 տարի,
- 35-38 տարեկան- 7 տարի,
- 38-41 տարեկան- 8 տարի,

- 41-44 տարեկան- 9 տարի,
- 44-ից բարձր- 10 տարի

Այսինքն, եթե անձը 27 տարեկան է, համարվում է գրանցված աշխատող, ում համար գործատուն պատշաճ կարգով կատարել է ամսեկան համապատասխան սոցիալական վճարումները, հաշմանդամության կարգ ստանալու դեպքում, եթե արդեն իսկ ունի 4 տարվա աշխատանքային ստաժ, ապա կարող է դիմել սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժին՝ կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերելու համար:

Պետք է նկատի ունենալ, որ աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետևանքով հաշմանդամ ճանաչված անձին հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է անկախ աշխատանքային ստաժից: Հաշմանդամության կենսաթոշակ նշանակվում է հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածի համար:

Կենսաթոշակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Կ = Հ + (n \times U) \times Q, \text{ որտեղ}$$

Կ - ն կենսաթոշակի ամսական գումարն է, որը պետք է ստանա հաշմանդամը,

Հ - ն հիմնական կենսաթոշակի չափն է (10500 դրամ),

1-ին խմբի հաշմանդամի համար հիմնական կենսաթոշակի 140 % չափով՝ 14.700 դրամ,

2-րդ խմբի հաշմանդամի համար հիմնական կենսաթոշակի 120 % չափով՝ 12.600 ՀՀ դրամ,

3-րդ խմբի հաշմանդամի համար հիմնական կենսաթոշակի 100% չափով՝ 10.500 ՀՀ դրամ:

n - ն քաղաքացու ապահովագրական ստաժն է, U - ն ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքն է (450

դրամ),

Գ - ն կենսաթոշակառուի անձնական գործակիցն է:

Այժմ հաշմանդամության կենսաթոշակի հաշվարկման կարգը բացատրենք օրինակով:

Քաղաքացին 22 տարեկան է, ունի օրենքով սահմանված անհրաժեշտ նվազագույնից առավել աշխատանքային ստաժ՝ 4 տարի, վերջինիս նկատմամբ սահմանված է հաշմանդամության 2-րդ խումբ: Քաղաքացու կենսաթոշակի չափը նման պայմաններում կլինի՝ ---

$$12.600 + (4*450)*\text{---}=\text{---}$$

Քիչ չեն հաշմանդամության կարգ ունեցող անձինք, ովքեր, ստանալով օրենքով իրենց համար նախատեսված կենսաթոշակը, մինևույն ժամանակ շարունակում են իրականացնել աշխատանքային գործունեություն՝ շարունակելով ձեռք բերել ապահովագրական ստաժ: Այս կապակցությամբ հաճախ է քաղաքացիների մոտ առաջանում մտավախություն՝ արդյոք հաշմանդամության կենսաթոշակ նշանակվելուց հետո ապահովագրական ստաժը ձեռք բերելը հանգեցնելու է հաշմանդամության կենսաթոշակի չափի փոփոխմանը: Օրենքը նախատեսում է հաշմանդամության կենսաթոշակի վերահաշվարկ այն նշանակվելուց հետո 2 տարին մեկ անգամ՝ այդ ժամանակահատվածում առնվազն 6 ամիս աշխատած լինելու դեպքում: Փաստորեն, յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ կատարվող հաշմանդամության կենսաթոշակի վերահաշվարկի ժամանակ էլ արդեն ներկայացված բանաձևով կրկին անգամ կատարվում է կենսաթոշակի չափի վերահաշվարկ, ինչի արդյունքում կենսաթոշակի չափը՝ նոր ձեռք բերված ապահովագրական ստաժի հաշվին, մեծանում է: Կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է կենսաթոշակառուի գրավոր դիմումի և ապահովագրական

ստաժը հաստատող փաստաթղթերի հիման վրա՝ դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Հարց 48. Ովքե՞ր ունեն կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք:

Կերակրողին կորցնելու դեպքում ապահովագրական կենսաթոշակի իրավունք ունեն մահացած կերակրողի՝

1) 18 տարին չլրացած երեխան, եղբայրը, քույրը և թոռը, ընդ որում եթե նրանք չունեն աշխատունակ ծնողներ և չեն աշխատում,

2) ամուսինը կամ ընտանիքի այլ գործունակ չափահաս անդամը կամ օրենքով սահմանված կարգով խնամակալ ճանաչված անձը՝ անկախ տարիքից ու աշխատունակությունից, եթե նա խնամում է մահացած կերակրողի 8 տարին չլրացած երեխային, եղբորը, քրոջը կամ թոռանը և չի աշխատում,

3) կերակրողի մահվան պահին տարիքային կենսաթոշակի իրավունք սվող տարիքի հասած կամ անկախ տարիքից հաշմանդամ ճանաչված ծնողները, ամուսինը, եթե չեն աշխատում,

4) 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ գավակները, եթե նրանք հաշմանդամ են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը և չեն աշխատում:

Ուսումնական հաստատությունում առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորողը կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունի մինչև ուսումնական հաստատությունն ավարտելը, բայց մինչև 23 տարին լրանալը:

Հարց 49. Արդյո՞ք կերեկրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունքը ծագում է, երբ կերակրողը մահացած է ճանաչվում դատական կարգով:

Համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ կերակրողին կորցնելու դեպքում

կենսաթոշակի իրավունքը ծագում է նաև դատական կարգով մահացած ճանաչված անձի ընտանիքի անդամների համար նա: Տվյալ դեպքում կենսաթոշակ նշանակելիս անձի մահվան օր է համարվում անձին մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը կամ այն օրը, որը սահմանված է օրինական ուժի մեջ մտած վճռում:

Հարց 50. Կենսաթոշակն ինչպե՞ս է հաշվարկվում կերակրողին կորցնելու դեպքում:

Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակը հիմնական կեսաթոշակի չափով նշանակվում է ընտանիքի՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեցողներից յուրաքանչյուրին՝ ավելացնելով մահացած կերակրողի հաշվարկված կենսաթոշակի ապահովագրական մասը հետևյալ չափերով.

- 1) մեկ խնամարկյալին՝ 50 տոկոսի չափով,
- 2) երկու խնամարկյալին՝ 90 տոկոսի չափով,
- 3) երեք խնամարկյալին՝ 120 տոկոսի չափով,
- 4) չորս և ավելի խնամարկյալին՝ 150 տոկոսի չափով:

Երկկողմանի ծնողագուրկ յուրաքանչյուր երեխայի կենսաթոշակը հաշվարկվում է հետևյալ կերպ. հիմնական կենսաթոշակի հնգապատիկին ավելացվում է յուրաքանչյուր ծնողի հաշվարկված կենսաթոշակի ապահովագրական մասը՝ վերը նշված չափերով:

Օրինակ. մահացողն ունի 28 տարվա ապահովագրական ստաժ և 1 անչափահաս երեխա:

$$\begin{aligned} \text{Կ} &= 8000 \text{ դրամ} + 28 \times 450 \times 1.06 \times 50\% \\ \text{Կ} &= 8000 \text{ դրամ} + 13356 \times 50\% \\ \text{Կ} &= 8000 \text{ դրամ} + 6678 \text{ դրամ} \\ \text{Կ} &= 14678 \text{ դրամ:} \end{aligned}$$

Եթե մահացածն ունի 2 անչափահաս երեխա, ապա կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի չափը կկազմի.

$$\begin{aligned} \text{Կ} &= 8000 \text{ դրամ} \times 2 + 13356 \times 90\% \\ \text{Կ} &= 16000 + 12020 \text{ դրամ} \\ \text{Կ} &= 28020 \text{ դրամ:} \end{aligned}$$

Օրինակ. մահացած ծնողներից մեկն ունի 35 տարվա ապահովագրական ստաժ, մյուսը՝ 30: Կերակրողին կորցնելու դեպքում մեկ երեխայի կենսաթոշակի չափը կհաշվարկվի հետևյալ կերպ.

$$\begin{aligned} \text{Կ} &= (8000 \times 5) + [(35 \times 450 \times 1.2) + (30 \times 450 \times 1.1)] \times 50\% \\ \text{Կ} &= 40000 \text{ դրամ} + 33750 \text{ դրամ} \times 50\% \\ \text{Կ} &= 40000 \text{ դրամ} + 16875 \text{ դրամ} \\ \text{Կ} &= 56875 \text{ դրամ:} \end{aligned}$$

Հարց 51. Ովքե՞ր ունեն մասնակի կենսաթոշակի իրավունք:

Մասնակի կենսաթոշակի իրավունք ունեն՝

1) կրթության, մշակույթի որոշ խմբերի աշխատողները, ովքեր ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշձատանքային ստաժ, որից առնվազն 12 օրացուցային տարին մասնագիտական ստաժ է,

2) թատերական և թատերահանդիսային կազմակերպությունների որոշ խմբերի դերասանները՝ եթե լրացել է նրանց 50 տարին և ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 12 օրացուցային տարին մասնագիտական ստաժ է,

3) մասնակի կենսաթոշակի իրավունք ունեցող այն անձինք, ովքեր նախքան 2010 թվականի «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը օրենքով սահմանված կարգով հաշվառվել են մասնակի կենսաթոշակ նշանակելու համար (ունեն առնվազն 12 տարվա մասնագիտական ստաժ) և լրացել է նրանց՝ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող տարիքը:

Պետք է նկատի ունենալ, որ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական աշխատանքային ստաժում հաշվառվում են ՀՀ Կառավարության սահմանած ցանկում նշված մասնագիտություններով և պաշտոններում մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ն աշխատած ժամանակահատվածները:

Հարց 52. Ո՞ր ժամկետում և ի՞նչ կարգով անձը պետք է դիմի մասնակի կենսաթոշակ ստանալու համար:

Մասնակի կենսաթոշակ ստանալու իրավունք տվող ապահովագրական (աշխատանքային) ստաժ ունեցող և օրենքով սահմանված տարիքը չլրացած անձը մինչև 2010 թվականի ապրիլի 10-ը պետք է հաշվառվելու համար դիմի իր մշտական բնակության վայրի սոցիալական ապահովության բաժին: Մասնակի կենսաթոշակի համար հաշվառված անձը մասնակի կենսաթոշակ նշանակելու համար կարող է դիմել դրա իրավունքի ձեռքբերումից հետո ցանկացած ժամանակ՝ մինչև տարիքային կենսաթոշակի տարիքի լրանալը:

Հարց 53. Մասնակի կենսաթոշակ նշանակելիս ապահովագրական ստաժում ո՞ր ժամանակաշրջաններն են հաշվառվում:

Մասնակի կեսաթոշակ նշանակելիս ապահովագրական ստաժում հաշվառվում է միայն մինչև 2003թ. հուլիսի 23-ը ներառյալ մասնակի կեսաթոշակի իրավունք տվող պաշտոններում և մասնագիտություններով աշխատած ժամանակահատվածը:

Օրինակ.

55 տարեկան անձը դիմել է մասնակի կենսաթոշակ նշանակելու հարցով: Նրա աշխատանքային գործունեությունը բաղկացած է հետևյալ ժամանակահատվածներից.

1966-1968թթ.՝ ժամկետային զինծառայող,

1968-1972թթ.՝ մանկավարժական ինստիտուտի ուսանող,

1972-1975թթ.՝ թանգարանում էքսկուրսավար,

1975-1978թթ.՝ ուսումնարանում վարպետ,

1978-2003թթ.՝ դպրոցում մանկավարժ:

Նրան մասնակի կենսաթոշակ կնշանակվի 1972-1975 և 1978-2003թթ. ապահովագրական ստաժի (28 տարի) համար:

Հարց 54. Մասնակի կեսաթոշակ ստացող անձը տարիքային կենսաթոշակ ստանալու համար պահանջվող տարիքը լրանալիս կարո՞ղ է օգտվել նաև տարիքային կենսաթոշակի իրավունքից:

Օրենքով սահմանված տարիքային կենսաթոշակի իրավունքի ծագման պահից, անկախ կենսաթոշակառուի գրավոր դիմումից, օրենքով նշանակված մասնակի կենսաթոշակի տեսակը դադարում է և նշանակվում է տարիքային կենսաթոշակ՝ այդ հանգամանքն առաջանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Օրինակ, եթե մասնակի կենսաթոշակի իրավունքից օգտրվող քաղաքացու 63 տարին լրանում է տվյալ տարվա

հունիսին 17-ին, ապա նրա մասնակի կենսաթոշակը տարիքային կենսաթոշակով փոխարինվում է հուլիսի 1-ից:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

Հարց 55. Որո՞նք են սոցիալական կենսաթոշակի տեսակները:

Սոցիալական կենսաթոշակի տեսակներն են՝

- ծերության սոցիալական կենսաթոշակը,
- հաշմանդամության սոցիալական կենսաթոշակը,
- կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակը:

Հարց 56. Ովքե՞ր ունեն ծերության կենսաթոշակի իրավունք, որքան է կազմում դրա չափը, ինչպե՞ս դիմել կենսաթոշակ ստանալու իրավունքը ձևակերպելու համար:

Ծերության սոցիալական կենսաթոշակի իրավունքից են օգտվում պահանջվող ապահովագրական ստաժ չունեցող այն անձինք, ում 65 տարին լրացել է: Ծերության սոցիալական կենսաթոշակի իրավունք ձեռք բերած անձը կենսաթոշակ նշանակելու համար կարող է դիմել առանց ժամկետի սահմանափակման: Ծերության կենսաթոշակը նշանակվում է ցմահ:

Ծերության սոցիալական կենսաթոշակը նշանակվում է հիմնական կենսաթոշակի՝ 8000 ՀՀ դրամի չափով:

Կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու համար պետք է դիմել հաշվառման վայրի սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժին՝ ներկայացնելով՝

- դիմում,
- լուսանկար,
- անձնագիրը և դրա պատճենը,
- սոցիալական քարտը և դրա պատճենը,

- հաշվառման վայրից տեղեկանք, հաշվառման վայր չունենալու դեպքում՝ տեղեկանք փաստացի բնակության վայրից:

Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել նաև այլ փաստաթղթեր:

Հարց 57. Ովքե՞ր ունեն հաշմանդամության սոցիալական կենսաթոշակի իրավունք, ինչպե՞ս դիմել կենսաթոշակ ստանալու իրավունքը ձևակերպելու համար:

Հաշմանդամության սոցիալական կենսաթոշակի իրավունք ունեն հաշմանդամության ապահովագրական կենսաթոշակի համար պահանջվող չափով ապահովագրական ստաժ չունեցող 1-ին, 2-րդ, 3-րդ խմբի հաշմանդամության կարգ ունեցող, ինչպես նաև «հաշմանդամ երեխա» ճանաչված անձինք: Հաշմանդամության կենսաթոշակը սահմանվում է հաշմանդամության ողջ ժամանակահատվածի համար՝ հետևյալ չափերով.

1) առաջին խմբի հաշմանդամի և «հաշմանդամ երեխա» ճանաչված անձի համար՝ հիմնական կենսաթոշակի 140 տոկոսը (11200 ՀՀ դրամ),

2) երկրորդ խմբի հաշմանդամի համար՝ հիմնական կենսաթոշակի 120 տոկոսը (9600 հհ դրամ),

3) երրորդ խմբի հաշմանդամի համար՝ հիմնական կենսաթոշակի 100 տոկոսը (8000 ՀՀ դրամ):

Հաշմանդամության կենսաթոշակ նշանակելու համար պետք է դիմել հաշվառման վայրի սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժին, հաշվառում չունենալու դեպքում՝ փաստացի բնակության վայրի տարածքային բաժին՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

- դիմում,
- լուսանկար,
- անձնագիրը և դրա պատճենը,
- սոցիալական քարտը և դրա պատճենը,

- հաշմանդամ ճանաչելու մասին բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից տրված տեղեկանք,

- հաշվառման վայրից տեղեկանք, հաշվառման վայր չունենալու դեպքում՝ տեղեկանք փաստացի բնակության վայրից :

Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել նաև այլ փաստաթղթեր:

Հարց 58. Ո՞վ ունի կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակ ստանալու իրավունք, որքա՞ն է կազմում դրա չափը:

Օրենքով պահանջվող ապահովագրական ստաժ չունեցող և կերակրողին կորցնելու դեպքում նրա խնամքի տակ գտնվող ընտանիքի անդամները կերակրողին կորցնելու դեպքում օգտվում են սոցիալական կենսաթոշակի իրավունքից: Կենսաթոշակ ստանալու իրավունքից օգտվել կարող են մահացածի խնամքի տակ գտնված ընտանիքի հետևյալ անդամները.

1) 18 տարին չլրացած երեխան, եղբայրը, քույրը և թոռը, ընդ որում եթե նրանք չունեն աշխատունակ ծնողներ և չեն աշխատում,

2) ամուսինը կամ ընտանիքի այլ գործունակ չափահաս անդամը կամ օրենքով սահմանված կարգով խնամակալ ճանաչված անձը՝ անկախ տարիքից ու աշխատունակությունից, եթե նա խնամում է մահացած կերակրողի 8 տարին չլրացած երեխային, եղբորը, քրոջը կամ թոռանը և չի աշխատում,

3) կերակրողի մահվան պահին տարիքային կենսաթոշակի իրավունք սովորաբար տարիքի հասած կամ անկախ տարիքից հաշմանդամ ճանաչված ծնողները, ամուսինը, եթե չեն աշխատում.

4) 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակները, եթե նրանք հաշմանդամ են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը և չեն աշխատում:

Ուսումնական հաստատությունում առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորողը կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունի մինչև ուսումնական հաստատությունն ավարտելը, բայց մինչև 23 տարին լրանալը:

Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակը ընտանիքի նշված անդամներից յուրաքանչյուրին նշանակվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմնական կենսաթոշակի չափով (8000 ՀՀ դրամ):

Մահացածի խնամքին գտնված երկկողմանի ծնողագուրկ յուրաքանչյուր երեխայի կենսաթոշակը նշանակվում է հիմնական կենսաթոշակի հնգապատիկի չափով (40 000 ՀՀ դրամ):

Հարց 59. Ո՞ր պահից է նշանակվում կենսաթոշակը:

Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում կենսաթոշակը նշանակվում է՝

ա) դիմելու օրվանից.

բ) հաշմանդամ ճանաչվելու օրվանից, եթե կենսաթոշակի նշանակման դիմումը տրվել է այդ օրվանից հետո՝ 3-ամսյա ժամկետում,

գ) կերակրողի մահվան օրվանից, եթե կենսաթոշակի նշանակման դիմումը տրվել է այդ օրվանից հետո՝ 6-ամսյա ժամկետում:

**ԱՆՁԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ
ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պետության կողմից պարտադիր սոցիալական ապահովության են ենթակա.

1. գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձինք (վարձու աշխատողներ),

2. անհատ ձեռնարկատերերը և նոտարները:

Նախատեսված ապահովագրական նպաստից օգտվելու համար անհրաժեշտ նախապայման է, որպեսզի օրենքով սահմանված կարգով պարտադիր սոցիալական ապահովագրական վճարները տվյալ անձի համար վճարված լինեն:

Գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձինք, որպեսզի օգտվեն սոցիալական ապահովագրական նպաստից, անհրաժեշտ է, որպեսզի նրանք լինեն աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով ձևակերպված աշխատողներ և նրանց համար կանոնավոր կերպով վճարված լինեն օրենքով սահմանված պարտադիր սոցիալական ապահովագրական վճարները և համապատասխանեն ժամանակավոր անաշխատունակության այն տեսակի նպաստին առաջադրվող առանձին պայմաններին, որոնց հավակնում են ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվող անձինք:

Վարձու աշխատողների համար ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելիս նախատեսվում են հետևյալ տեսակի ապահովագրական նպաստները.

- Հիվանդության (վնասվածքի) պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրվող նպաստ (հիվանդության նպաստ),

- Պրոթեզավորման պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրվող նպաստ (պրոթեզավորման նպաստ),
- Առողջարանային բուժման անհրաժեշտության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրվող նպաստ (առողջարանային բուժման նպաստ),
- Հղիության և ծննդաբերության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրվող նպաստ (հղիության ու ծննդաբերության նպաստ),
- Ընտանիքի անդամի հիվանդության (վնասվածքի) պատճառով առաջացած խնամքի անհրաժեշտությամբ պայմանավորված ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրվող նպաստ):

Հարց 1. Ժամկետային աշխատողներն արդյո՞ք օգտվում են անաշխատունակության նպաստից:

Այն անձինք, որոնց հետ կնքվել է որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր, ևս օգտվում են անաշխատունակության դեպքում ապահովագրական նպաստից, սակայն ոչ ավելի, քան մինչև իրենց հետ կնքված աշխատանքային պայմանագրի ժամկետի ավարտը: Սակայն անաշխատունակության դեպքերում տրամադրվող ապահովագրական նպաստից նրանք օգտվում են, եթե վերջին մեկ տարվա ընթացքում մինչև ժամանակավոր անաշխատունակության ծագումը աշխատել են 3 ամսից ոչ պակաս կամ վերջին 2 տարվա ընթացքում՝ 10 ամսից ոչ պակաս:

Հարց 2. Ի՞նչն է հիմք ընդունվում ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկելիս:

Ապահովագրական նպաստը հաշվարկելու համար հիմք է հանդիսանում վարձու աշխատողի միջին ամսեկան աշխատավարձը (եկամուտը): Որպես միջին ամսեկան աշխատա-

վարձ հիմք է ընդունվում վարձու աշխատողի՝ ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդած երեք օրացուցային ամիսներին նրան վճարված աշխատանքի վարձատրության միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները: Ընդ որում, ամսեկան միջին աշխատավարձը հաշվարկելիս հիմք է ընդունվում աշխատավարձն ամբողջությամբ՝ առանց պահումները հանելու:

Հարց 3. Վարձու աշխատողի կողմից ստացված պարգևավճարները արդյո՞ք հաշվի առնվում են վարձու աշխատողի միջին ամսեկան աշխատավարձը հաշվարկելիս:

Սա թերևս աշխատողներին հետաքրքրող ամենատարածված հարցերից է: Վարձու աշխատողի միջին ամսեկան աշխատավարձը հաշվարկելիս «աշխատավարձ» հասկացության մեջ են ներառվում ինչպես անաշխատունակության դեպքին նախորդած 3 ամիսներին նրան տրված պարգևավճարները, այնպես էլ ամենամյա վճարովի արձակուրդի կապակցությամբ վճարված գումարները և աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից տրվող միանվագ գումարները, սակայն դրանց 1/12 չափով:

Հարց 4. Ինչպե՞ս է հաշվարկվում ժամանակավոր անաշխատունակության դեպքում հղիության և ծննդաբերության նպաստը:

Հղիության ու ծննդաբերության նպաստը հաշվարկելիս հիմք ընդունվող միջին աշխատավարձը վերցվում է 100 տոկոսի չափով՝ անկախ ապահովագրական ստաժից (այսինքն՝ անկախ այն հանգամանքից, թե անձը որքա՞ն ժամանակ է գտնվում աշխատանքային հարաբերությունների մեջ և որքա՞ն ժամանակ է նրա համար վճարվել սոցիալական ապահովության վճար): Ընդ որում, միջին աշխատավարձը հաշվարկելիս պետք է վերցնել սահմանված աշխատավարձը՝ առանց պահումների:

Հղիության ու ծննդաբերության նպաստը հաշվարկելու համար միջին աշխատավարձը բաժանվում է 30,4-ի (մեկ ամսվա միջին օրերի) վրա և բազմապատկվում ժամանակավոր անաշխատունակության օրացուցային օրերի թվով:

Օրինակ, եթե միջին աշխատավարձը կազմում է 50 000 ՀՀ դրամ, ապա հղիության և ծննդաբերության նպաստի չափը կլինի 230263 ՀՀ դրամ:

$$50000 \div 30.4 \times 140 = 230263 \text{ դր.}$$

Պետք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք ևս, որ այդ գումարը ոչ մի հարկատեսակով չի հարկվում:

Հարց 5. Հիվանդության, պրոթեզավորման, առողջարանային բուժման և ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստի դեպքում ինչպե՞ս է հաշվարկվում ամսեկան միջին աշխատավարձը:

Ինչպես արդեն նշվեց, միջին ամսեկան աշխատավարձը հաշվարկելիս հիմք է ընդունվում ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդած երեք ամիսների աշխատավարձը (ամբողջությամբ), ինչպես նաև աշխատողի կողմից ստացված արձակուրդային գումարը և պարգևատրումները՝ 1/12 չափով: Այդ կերպով, փաստորեն, հաշվարկվում է աշխատողի եկամուտների չափը: Եթե հղիության և ծննդաբերության նպաստի դեպքում հենց այդ գումարն է դրվում նպաստի հաշվարկման հիմքում, ապա նպաստի մյուս տեսակների համար միջին ամսեկան աշխատավարձի հաշվարկն ունի որոշ առանձնահատկություններ:

Եթե հղիության և ծննդաբերության նպաստը հաշվարկելիս միջին աշխատավարձը բոլոր դեպքերում վերցվում է ամբողջությամբ (100%-ի չափով), ապա հիվանդության, պրոթեզավորման, առողջարանային բուժման և ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստների դեպքում նպաստը հաշվարկելիս աշխատողի աշխատավարձը 100%-ի չափով վերցվում է այն դեպքում, եթե այն չի գերազանցում նվազագույն աշխա-

տավարձի հարյուրապատիկը (ՀՀ-ում հաշվարկներ կատարելիս որպես հաշվարկային նվազագույն աշխատավարձ ընդունվում է 1000 դրամը): Աշխատավարձի չափը նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը (100 հազար դրամը) գերազանցելու դեպքում 100 հազարին գումարվում է 100 հազարը գերազանցող գումարի 30%-ը:

Բացատրենք օրինակով՝

Եթե Ձեր ամսեկան միջին աշխատավարձը կազմում է 250 հազար դրամ, ապա ապահովագրական նպաստը հաշվարկելիս (բացառությամբ հղիության և ծննդաբերության նպաստի) հիմք է ընդունվում ոչ թե 200 հազարն ամբողջությամբ, այլ դրա մի մասը՝ 145 հազար դրամը:

$250.000 - 100.000 = 150.000$ $150.000 \times 30\% = 45.000$ $100.000 + 45.000 = 145.000$

Այսպիսով, նպաստի չափը հաշվարկելիս որպես ամսեկան աշխատավարձի չափի հիմք է ընդունվում 145 հազար դրամը:

Հարց 6. Հիվանդության, պրոթեզավորման, առողջարանային բուժման և ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստի դեպքում ինչպե՞ս է հաշվարկվում նպաստի չափը:

Երբ արդեն հաշվարկված է ամսեկան միջին աշխատավարձ համարվող գումարի չափը, որպեսզի իմանանք, թե որքա՞ն է կազմում նպաստի չափը, նշված գումարը բաժանում ենք 30.4-ի (մեկ ամսվա միջին օրերի թվի) վրա, այնուհետև՝ բազմապատկում ժամանակավոր անաշխատունակության արձակուրդի օրերի թվով:

Մեր հաշվարկած միջին աշխատավարձի չափը (100% չափով) նպաստի չափը հաշվարկելիս ամբողջությամբ կիրառվում է, եթե աշխատողն ունի ավելի, քան 8 տարվա

ապահովագրական ստաժ, այլապես նպաստը հաշվարկելիս հիմք կընդունվի արդեն իսկ հաշվարկված միջին աշխատավարձը (մեր օրինակում 145.000 դրամի) 80%-ի չափով:

Մեր օրինակում 8 տարվա ապահովագրական ստաժ ունենալու դեպքում նպաստի չափը կհաշվարկվի հետևյալ կերպ՝

$$145.000 \div 30.4 \times 25 = 119.243$$

8 տարվա ապահովագրական ստաժ չունենալու պարագայում նպաստի վերջնական հաշվարկը կունենա հետևյալ տեսքը՝

$$(145.000 \times 80\%) \div 30.4 \times 25 = 95.394$$

Այսպիսով, ամսեկան 200.000 ՀՀ դրամ աշխատավարձ ստանալու, ութ տարուց ավելի ապահովագրական ստաժ ունենալու² և 25 օր տևողությամբ ինչ, բաց թողնված բառ անաշխատունակության արձակուրդում լինելու պարագայում անաշխատունակության նպաստի չափը տվյալ աշխատողի համար կկազմի 119.243 ՀՀ դրամ, մինչդեռ նույն պայմանների, սակայն 8 տարվա ապահովագրական ստաժի բացակայության դեպքում նպաստի չափը կփոխվի և կկազմի 95.394 ՀՀ դրամ:

Հարց 7. Ո՞ր դեպքում է նպաստը հաշվարկելիս անկախ 8 տարվա ապահովագրական ստաժի առկայությունից հաշվարկված ամսեկան միջին աշխատավարձը կիրառվում 100%-ի չափով:

Օրենքի համաձայն՝ հաշվարկված ամսեկան միջին աշխատավարձը, անկախ աշխատողի ունեցած ապահովագրական ստաժի տևողությունից, նպաստը հաշվարկելիս վերցը-

² Ապահովագրական ստաժի մասին տե՛ս սույն ուղեցույցի «Ապահովագրական ստաժ» ենթաբաժնում:

վում է 100 տոկոսի չափով այն աշխատողների համար, ովքեր՝

- իրենց խնամքին ունեն 18 տարին չլրացած հաշմանդամ երեխա կամ երեք և ավելի երեխա,
- առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 18-23 տարեկան անձինք են,
- ՀՀ պաշտպանության համար մարտական գործողությունների մասնակիցներ են կամ հաշմանդամ են դարձել Չերնոբիլի վթարը վերացնելու ընթացքում:

Հարց 8. Որքա՞ն ժամանակով է տրվում հիվանդության նպաստը:

Վարձու աշխատողին հիվանդության նպաստ տրվում է հիվանդության (վնասվածքի) ամբողջ ժամանակահատվածի համար՝ աշխատունակությունը կորցնելու օրվանից մինչև դրա վերականգնումը կամ բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամության խմբի սահմանումը կամ հաշմանդամության խմբի վերանայումը: Հաշմանդամության կարգ ձեռք բերելու նպատակով հիվանդները բժշկասոցիալական փորձաքննության են ուղեգրվում անաշխատունակության սկսվելու օրվանից 3 ամսվա ընթացքում: Եթե բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի որոշման համաձայն վարձու աշխատողը հաշմանդամ չի ճանաչվում, բայց շարունակում է դեռևս մնալ անաշխատունակ, ապա հիվանդության նպաստ ստանալու նրա իրավունքը կարող է շարունակվել, բայց ոչ ավելի, քան մինչև 3 ամիս ժամկետով կամ մինչև օրենքով սահմանված կարգով աշխատանքից ազատվելը:

Հիվանդության նպաստից վճարվում է միայն եկամտահարկ՝ ընդհանուր կանոններով սոցիալական ապահովության վճարներ նպաստից չեն պահվում:

Հարց 9. Ո՞ր դեպքերում է վարձու աշխատողին տրվում պրոթեզավորման նպաստ:

Գործատուի կողմից վարձու աշխատողին տրվում է պրոթեզավորման նպաստ հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնար) բուժման մեջ գտնվելու ամբողջ ժամանակաշրջանի համար:

Հարց 10. Ինչպե՞ս է հաշվարկվում առողջարանային բուժման նպաստը:

Առողջարանային բուժման նպաստը տրվում է հիվանդանոցային բուժական հաստատությունից (ստացիոնարից) անմիջապես առողջարան լիակատար բուժման ուղարկված վարձու աշխատողին, ինչպես նաև տուբերկուլյոզային առողջարան մեկնած վարձու աշխատողին՝ առողջարանում գտնվելու ամբողջ ժամանակաշրջանի համար: Առողջարանային բուժման նպաստի իրավունք սվող հիվանդություններն են՝ տուբերկուլյոզ, հետինֆարկտային վիճակներ, եթե հիվանդն առնվազն մեկ ամիս բուժվել է ստացիոնարում, ստամոքսի, տասներկուամտնյա աղիքի հետվիրահատական վիճակներ:

Հարց 11. Ինչպե՞ս է հաշվարկվում վարձու աշխատողին տրվող հղիության ու ծննդաբերության նպաստը:

- Վարձու աշխատողին հղիության ու ծննդաբերության նպաստ տրվում է 140 օր տևողությամբ արձակուրդի ժամանակաշրջանի համար (հղիության՝ 70 օրացուցային օր և ծննդաբերության՝ 70 օրացուցային օր):

- Բարդ ծննդաբերության դեպքում հղիության և ծննդաբերության նպաստ տրվում է 155 օր տևողությամբ արձակուրդի ժամանակաշրջանի համար (հղիության՝ 70 օրացուցային օր, ծննդաբերության՝ 85 օրացուցային օր):

- Միաժամանակ մեկից ավել երեխաներ ծննդաբերելու դեպքում հղիության և ծննդաբերության նպաստը հաշվարկ-

վում է 180 օր տևողությամբ արձակուրդի ժամանակահատվածի համար (հղիության՝ 70 օրացուցային և ծննդաբերության՝ 110 օրացուցային օր):

Հարց 12. Տրամադրվում է արդյոք հղիության ու ծննդաբերության նպաստ նորածին երեխա որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված վարձու աշխատողին:

Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված վարձու աշխատողին նպաստը վճարվում է միայն ծննդաբերության արձակուրդի ժամանակաշրջանի համար:

Նպաստը նշանակվում է որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչև նորածնի 70 օրական դառնալը (երկու և ավելի նորածին որդեգրած կամ խնամակալ նշանակված անձին՝ մինչև 110 օրական դառնալը):

Հարց 13. Ժամկետից շուտ ծննդաբերելու դեպքում ի՞նչ չափով է վճարվում հղիության և ծննդաբերության նպաստը:

Հղիության և ծննդաբերության նպաստի չափը չի փոփոխվում ժամկետից շուտ կամ ուշ ծննդաբերելու դեպքում: Եթե ծննդաբերությունը եղել է ընհանուր կարգին համապատասխան, ապա նպաստի չափը հաշվարկվում է 140 օրերի, բարդ ծննդաբերության համար՝ 155 օրերի և մեկից ավելի երեխա ծննդաբերելու դեպքում՝ 180 օրերի համար:

Հարց 13. Աշխատողն արդյո՞ք օգտվում է հղիության նպաստից վաղաժամ ծննդաբերելու դեպքում:

Հղիության 154-րդ օրը կամ դրանից հետո՝ վաղաժամ ծննդաբերելու դեպքում և հղիության արձակուրդում չգտնվելու դեպքում նպաստը տրվում է միայն ծննդաբերության արձակուրդի ժամանակաշրջանի համար (70 օր՝ նորմալ ծննդաբերության դեպքում, 85 օր՝ բարդ ծննդաբերության դեպքում և 110 օր՝ մեկից ավելի երեխա ծննդաբերելու դեպքում):

Հարց 14. Հղիության և ծննդաբերության նպաստ արդյո՞ք տրամադրվում է այն դեպքերում, երբ հղիությունը ընդհատվում է:

Մինչև հղիության 154-րդ օրը հղիության արհեստական կամ ինքնաբեր ընդհատման դեպքերում ժամանակավոր անաշխատունակության ողջ ժամանակաշրջանի համար հղիության և ծննդաբերության նպաստի փոխարեն տրվում է հիվանդության նպաստ:

Հարց 15. Ինչպե՞ս և ի՞նչ չափով է վարձու աշխատողին տրամադրվում ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստը:

Վարձու աշխատողին ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ է տրվում հետևյալ դեպքերում.

- տնային (ամբուլատոր) պայմաններում ընտանիքի հիվանդ չափահաս անդամի խնամքի անհրաժեշտության դեպքում՝ առավելագույնը 7 օրացուցային օրվա համար,

- տնային (ամբուլատոր) պայմաններում հիվանդ երեխայի խնամքի անհրաժեշտության դեպքում՝ առավելագույնը 24 օրացուցային օրվա համար, իսկ վարակիչ հիվանդությունների պատճառով երեխայի խնամքի անհրաժեշտության դեպքում՝ առավելագույնը 28 օրացուցային օրվա համար,

- հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվող հիվանդ երեխայի խնամքն իրականացնելու դեպքում՝ հիվանդանոցում գտնվելու ամբողջ ժամանակաշրջանի համար,

- մինչև 18 տարեկան՝ անհատական խնամքի կարիք ունեցող կամ հաշմանդամ երեխայի առողջարանային բուժման ընթացքում նրա խնամքն իրականացնելու դեպքում՝ երեխայի առողջարանային բուժման ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ուղեգրում նշված ժամանակաշրջանից ոչ ավելի: Ընդ որում նպաստ է տրվում օրացուցային տարում միայն մեկ անգամ:

Մինչև 3 տարեկան երեխայի կամ մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխայի խնամքի համար, եթե մայրը (խնամակալը, հոգաբարձուն) հիվանդության կամ ընտանիքի մյուս հիվանդ անդամի հետ հիվանդանոցային բուժման հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու պատճառով ի վիճակի չէ երեխայի խնամքն իրականացնել, ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ տրվում է երեխայի խնամքն իրականացնող վարձու աշխատողին, երեխայի մոր (խնամակալի, հոգաբարձուի) հիվանդության կամ նրա հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու ողջ ժամանակաշրջանի համար:

Հարց 16. Ու՞մ կողմից է հաշվարկվում և վճարվում աշխատողի անաշխատունակության նպաստը:

Վարձու աշխատողի անաշխատունակության նպաստը հաշվարկվում և վճարվում է գործատուի կողմից՝ առաջիկա աշխատավարձի վճարման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետներում: Գործատուն անաշխատունակության նպաստը վճարում է աշխատողների համար պետական բյուջե փոխանցման ենթակա սոցիալական ապահովության վճարների հաշվին: Եթե աշխատողների համար տվյալ ամսին պետական բյուջե փոխանցման ենթակա սոցիալական վճարների ընդհանուր չափը բավարար չէ ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվող աշխատողին նպաստն ամբողջությամբ տալու համար, ապա չբավարարող մասով գործատուն աշխատողին վճարում է իր սեփական միջոցներից: Փաստորեն, օրենքը գործատուին պարտավորեցնում է միանվագ, ամբողջությամբ և սահմանված ժամկետներում աշխատողին վճարել անաշխատունակության համար սահմանված ապահովագրական նպաստը, ինչը գործատուները, օգտվելով աշխատողների անիրագրելիությունից, հաճախ չեն կատարում:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ, ԻՐԵՆՑ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԸ

Ինքնուրույն, իրենց աշխատանքով ապահովված անձանց տրվում են հետևյալ տեսակի ապահովագրական նպաստները.

- հիվանդության նպաստ, ինչը տրվում է միայն հիվանդանոցային բուժման հաստատությունում (ստացիոնարում) բուժման ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան մեկ օրացուցային տարվա ընթացքում 60 օր:

- պրոթեզավորման նպաստ, ինչը տրվում է հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու ամբողջ ժամանակաշրջանի համար:

- հղիության և ծննդաբերության նպաստ, որը տրվում է այն չափով, ինչը նախատեսված է վարձու աշխատողների համար³,

- ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ, ինչը տրվում է հիվանդանոցում ստացիոնար բուժվող հիվանդ երեխայի խնամքն իրականացնելու դեպքում՝ հիվանդանոցում գտնվելու ողջ ժամանակաշրջանի համար, ինչպես նաև մինչ 18 տարեկան՝ անհատական խնամքի կարիք ունեցող կամ հաշմանդամ երեխայի առողջարանային բուժման ընթացքում նրա խնամքն իրականացնելու դեպքում՝ առողջարանային բուժման ողջ ժամանակահատվածի համար:

Անհատ ձեռնարկատերերը և նոտարները, փաստորեն, ժամանակավոր անաշխատունակ չեն համարվում, և հետևաբար՝ ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ ստանալու իրավունքից չեն օգտվում, եթե խնամքի կարիք ունեցող ընտանիքի ինչպես չափահաս, այնպես էլ անչափահաս անդամը բուժվում է տնային (ամբուլատոր) պայմաններում:

³ Այդ մասին կարդա՝ սույն բաժնի 11-րդ հարցում:

Պետք է նշել, որ նպաստ տրվում է օրացուցային տարում միայն մեկ անգամ:

Հարց 17. Ու՞մ կողմից է հաշվարկվում և վճարվում անհատ ձեռներեցի և նոտարի անաշխատունակության նպաստը:

Անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստը վճարում է սոցիալական ծառայության տարածքային ստորաբաժանումը՝ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

Հարց 18. Ովքե՞ր չեն կարող օգտվել ժամանակավոր անաշխատունակության նպաստից:

Ապահովագրական նպաստ չի տրվում՝

- այն անձանց, որոնց ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է հանցագործություն կամ այլ հակաիրավական արարք կատարելիս,
- եթե աշխատողը աշխատանքից չի ազատվել և կալանքի տակ է,
- բժշկի սահմանած բուժման ռեժիմն առանց հարգելի պատճառի խախտած օրերի համար:

Հարց 19. Ապահովագրական նպաստ ստանալու իրավունք ունեցող, սակայն մահվան պատճառով այն չստացած անձի նպաստը ու՞մ է վճարվում:

Աշխատողին հասանելիք և նրա մահվան պատճառով չստացված ապահովագրական նպաստի գումարը վճարվում է մահացողի ընտանիքի անդամին՝ դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը աշխատողի մահվանից հետո վեցամսյա ժամկետում ներկայացնելու դեպքում:

Հարց 20. Միսլ հաշվարկի արդյունքում պակաս վճարված նպաստի համար գործատուն արդյո՞ք պարտավորվում է հետագայում վճարել նպաստը՝ չվճարված մասով:

Միսլ հաշվարկի հետևանքով պակաս վճարված ապահովագրական նպաստը գործատուն պարտավորվում է վճարել՝ չվճարված մասով: Պակաս վճարված նպաստը վճարելու պահանջ աշխատողը գործատուին կարող է ներկայացնել առանց ժամկետի սահմանափակման:

Տվյալ դեպքում գործատուն պարտավոր է իր սխալմունքը հայտնաբերելու կամ աշխատողի կողմից վճարելու պահանջ ներկայացնելու օրվանից մեկամսյա ժամկետում վճարել նպաստի չվճարված մասը:

Հարց 21. Աշխատողին ավելի վճարված ապահովագրական նպաստը արդյո՞ք ենթակա է վերադարձման:

Անկախ այն հանգամանքից, թե գործատուի կողմից աշխատողին սահմանված չափից ավել նպաստ վճարելը տեղի է ունեցել թվաբանական սխալի, թե աշխատողի կողմից կեղծ տեղեկություններ ներկայացնելու պատճառով, գործատուն իրավունք ունի աշխատողից ետ պահանջել ավել վճարված նպաստը:

Ավել վճարված գումարը պահվում է հետագայում տվյալ աշխատողին վճարվող ապահովագրական նպաստի կամ աշխատավարձի հաշվին, սակայն պետք է նկատի ունենալ մի կարևոր հանագամանք, որ պահվող գումարը յուրաքանչյուր անգամ չի կարող ավելին լինել նպաստի կամ աշխատավարձի 20%-ից, որի հաշվին կատարվում է ավել վճարված նպաստի հետպահումը:

Եթե աշխատողի կողմից սխալ տեղեկություններ ներկայացնելու հետևանքով է գործատուն աշխատողին վճարել նախատեսվածից ավել չափով նպաստ, ապա գործատուն աշխատողից կարող է այն հետ պահանջել՝ առանց ժամկետի սահմանափակման:

Ինչ վերաբերում է գործատուի կողմից թույլ տված թվա-
բանական սխալի հետևանքով ավելի վճարված նպաստին,
ապա տվյալ դեպքում ավել վճարված գումարի հետպահումը
գործատուն կարող է կատարել, եթե ապահովագրական
նպաստի նշանակման օրից չի անցել երեք ամիս:

Այն դեպքում, երբ ապահովագրական նպաստ ստանա-
լուց հետո աշխատողը ազատվել է աշխատանքից կամ սահ-
մանված կարգով դադարեցրել աշխատանքային պայմանա-
գիրը, ապա գործատուն ավելի վճարված նպաստի գումարը
կարող է աշխատողից հետ պահանջել դատական կարգով:

ԾԵՐԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ

Հարց 1. Որո՞նք են պետության կողմից միայնակ ծերերին տրամադրվող խնամքի ձևերը:

Պետության կողմից տրամադրվող սոցիալական սպասարկման ծառայությունից օգտվել կարող են ծերության կենսաթոշակային տարիքի հասած (65 տարին լրացած) այն կենսաթոշակառուները, ովքեր միայնակ են (չունեն խնամող կամ ընտանիքում աշխատունակ անդամ): Միայնակ ծերերին տրամադրվում է խնամքի հետևյալ տեսակներից որևէ մեկը. խնամքի տրամադրում տնային պայմաններում.

- խնամքի տրամադրում բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր կամ հատուկ հաստատություններում

- խնամքի տրամադրում սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոններում,

- Հոսպիսային օգնության տրամադրում:

Խնամք ստանալու կարիք ունեցող անձը կամ պատրոնը դիմում է խնամք ստանալու կարիք ունեցող անձի փաստացի բնակության վայրի սոցիալական ծառայության տարածքային գործակալություն և ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում, որում նշվում է խնամքի տեսակը,
- սոցիալական ապահովության քարտը և դրա պատճենը,
- անձը հաստատող փաստաթուղթը և դրա պատճենը,
- տեղեկանք սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժնից կենսաթոշակի չափի և տեսակի մասին,
- տեղեկանք բնակության վայրի պոլիկլինիկայից՝ նրա առողջական վիճակի մասին:

- Իսկ եթե դիմումը ներկայացվում է պատրոնի կողմից, ապա հիմնական փաստաթղթերից բացի, գործակալություն պետք է ներկայացվի նաև
- պատրոնի անձնագիրը,
- պատրոնաժ սահմանելու մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշման պատճենը:

Հարց 2. Ինչպիսի՞ ծառայություններ են մատուցվում միայնակ ծերերին տնային խնամքի իրականացման դեպքում:

Տնային պայմաններում միայնակ կենսաթոշակառուին տրամադրվում է կենցաղային սպասարկում, բժշկական օգնություն և սպասարկում, սոցիալ-հոգեբանական օգնություն, ինչպես նաև իրավաբանական խորհրդատվություն: Խնամքը տրամադրվում է ցերեկային ժամերին՝ հաշմանդամի տանը: Նշված խնամքից օգտվելու համար ծեր կենսաթոշակառուն պետք է դիմում ներկայացնի սոցիալական ծառայության տարածքային գործակալություն կամ «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» (Հարավ-Արևմտյան Բ-1 թաղամաս, հեռ.՝ 74-04-02): Հաճախորդին տրամադրվող խնամքի ծառայությունների տեսակների և դրանց պայմանների վերաբերյալ սոցիալական ծառայության տարածքային գործակալության և խնամքի կարիք ունեցող հաշմանդամի միջև կնքվում է պայմանագիր: Խնամքի կարիք ունեցող կենսաթոշակառուի գրավոր դիմումի հիման վրա դադարեցվում է տնային պայմաններում տրամադրվող խնամքը: Տնային պայմաններում տրամադրվող խնամքը դադարեցվում է նաև, սույն ուղեցույցի թիվ 2 հավելվածով սահմանված հիվանդություններից որևէ մեկով անձի հիվանդանալու դեպքում, անձի կողմից կեղծ տեղեկություններ ներկայացված լինելու դեպքում, խնամք ստացող անձի մահվան դեպքում:

Հարց 3. Ինչպիսի՞ ծառայություններ են մատուցվում միայնակ ծերերին սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոնում:

Սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոնը նախատեսված է խնամքի կարիք ունեցող միայնակ ծերերին ցերեկային ժամերին խնամք տրամադրելու համար: Սոցիալ-հոգեբանական ցերեկային կենտրոնում հաշմանդամին տրամադրվում են հետևյալ ծառայությունները.

- սնունդ՝ օրական մեկ անգամ,
- առաջնային բուժօգնություն,
- սոցիալ-հոգեբանական օգնություն,
- իրավաբանական խորհրդատվություն:

Կենտրոնում կազմակերպվում է հաշմանդամների ժամանցը, ինչպես նաև անցկացվում են մշակութային միջոցառումներ:

Հարց 4. Ինչպիսի՞ ծառայություններ են մատուցվում միայնակ ծերերին բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր հաստատությունում (տուն-ինտերնատներում):

Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում /Տուն-ինտերնատ/ միայնակ հաշմանդամներին տրամադրվում է կացարան՝ ամբողջական խնամքով: Տուն-ինտերնատ կարող է ընդունվել միայնակ, օրենսդրությամբ նախատեսված խնամողներ չունեցող կենսաթոշակատուն: Տուն-ինտերնատ ընդունվելու համար անհրաժեշտ է դիմել սոցիալական ծառայության տարածքային գործակալություն: Այստեղ լրացվում են անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք հետո պետք է ներկայացնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ հաշվառվելու և ապա տուն-ինտերնատում տեղավորվելու համար:

Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղափոխվելու դեպքում անձն անցնում է պար-

տաղիք բժշկական զննություն: Նշված հաստատությունում անձին տրամադրվում է.

- սնունդ՝ օրական առնվազն երեք անգամ,
- առաջնային բուժօգնություն,
- սոցիալ-հոգեբանական օգնություն,
- իրավաբանական խորհրդատվություն,
- պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովում,
- բժշկասոցիալական փորձաքննություն,
- ստացիոնար բժշկական հաստատություն ուղեգրում,
- ազատ ժամանց:

Նշված հաստատություններում խնամք ստացող միայնակ ծերերը, իրենց հարազատների գրավոր դիմումի հիման վրա, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության ղեկավարի հրամանով կարող են մինչև մեկ ամիս ժամկետով դուրս գրվել հաստատությունից՝ իրենց հարազատներին հյուրնկալվելու նպատակով:

Խնամք ստացող անձը քրոնիկ հոգեկան կամ ծերունական փսիխոզով ու ծանր սկրելոզով հիվանդանալու դեպքում, տեղափոխվում է բնակչության սեցիալական պաշտպանության հատուկ հաստատություն:

Հարց 5. Ծերանոցներում (բնակչության ապահովության պաշտպանության հաստատություններում) գտնվող միայնակ ծերերը արդյո՞ք իրավունք ունեն անվճար երթևեկելու ուղևորատար տրանսպորտով:

Ծերանոցներում պետական լրիվ խնամքի տակ գտնվող անձանց պետության կողմից տրամադրվում է մերձքաղաքային (մինչև 50 կմ) և ներքաղաքային ուղևորատար տրանսպորտով (բացի տաքսուց) անվճար երթևեկելու արտոնություն, ի հավաստումն ինչի ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից տրամադրվում է անվճար երթևեկության վկայական:

**ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՍՔԻ ՄՆԱՑԱԾ
ԵՐԵՒԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները կազմում են սոցիալապես առավել խոցելի խումբ, ինչը ստիպում է պետությանը նրանց վերցնել պետության առանձնակի պաշտպանության և հոգածության ներքո: Հայաստանի Հանրապետությունում գործում են ութ պետական և հինգ բարեգործական մանկատներ:

Մանկատներում երեխաները հայտնվում են հիմնականում սոցիալական պատճառներով, որը պայմանավորված է ազգաբնակչության ցածր կենսամակարդակով, ինչպես նաև ծնողների մոտ երեխաների խնամքի և դաստիարակության հմտությունների պակասով:

Հարց 1. Ի՞նչ իրավական ակտերով են կարգավորվում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական երաշխիքները:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2002թ, որով սոցիալական բնույթի արտոնություններ են սահմանվել ծնողական խնամքից զուրկ մնացած երեխաների համար: Օրենքի նորմերը տարածվում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, ինչպես նաև այդպիսի երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձանց վրա: Ըստ օրենքի, առանց ծնողական խնամքի մնացած երեխա է համարվում 18 տարին չլրացած այն երեխան, որի ծնողները (կամ միակ ծնողը) մահացել են, գրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափում են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների ու շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բա-

ցակայող կամ անհայտ են:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք են համարվում 18-23 տարեկան այն անձինք, որոնց ծնողները (կամ միակ ծնողը) մինչև նրանց 18 տարին լրանալը մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափել են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նշված խմբի անձանց համար նախատեսվում են հետևյալ արտոնությունները.

- հիմնական ընդհանուր կամ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ստացած՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների պետական միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատությունների նախապատրաստական դասընթացներ ընդունվում և սովորում են անվճար:

- առանց ծնողական խնամքի մնացած երեխաներն ընդհանուր մրցույթով պետական միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար համակարգ ընդունվում են վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում,

- պետական միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ուսուցման ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին վճարվում է կրթաթոշակ՝ տվյալ ուսում-

նական հաստատությունում սահմանված կրթաթոշակի 150 տոկոսի չափով,

- առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին տրամադրվում է անվճար բժշկական օգնություն պետական պատվերի շրջանակներում,

- պետական և համայնքային բյուջեով նախատեսված միջոցների սահմաններում առանց ծնողական խնամքի մնացած երեխաներն օգտվում են սպորտ-առողջարարական, ճամբարների, հանգստյան տների, ինչպես նաև համապատասխան բժշկական ցուցումների դեպքում՝ առողջարանային բուժման ուղեգրերից:

Հարց 2. Ինչպիսի՞ արտոնություններ ունեն առանց ծնողական խնամքի մնացած երեխաները բնակարանային ապահովման հարցում:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները բուժման, դաստիարակչական, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, անկախ դրանց կազմակերպչական-իրավական ձևից, գտնվելու կամ բնակվելու, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու, հանրապետության զինված ուժերում ծառայելու կամ ազատագրկման վայրերում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում պահպանում են իրենց բնակելի տարածության սեփականության կամ բնակելի տարածության օգտագործման իրավունքը:

18 տարին լրացած՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, որոնք չունեն սեփականության կամ օգտագործման իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածություն և վերջին 5 տարիների ընթացքում չեն օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանած բնակելի տարածությունը, իրավունք ունեն ստանալու նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխան բնակելի տարածություն:

Հարց 3. Ինչպիսի՞ արտոնություններ ունեն առանց ծնողական խնամքի մնացած երեխաները իրավական պաշտպանության ոլորտում:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը դատարանում իրականացվում է օրենքով սահմանված կարգով: Դաստիարակաները, մանկավարժները, բժիշկները, սոցիալական աշխատողները, հոգեբաններն ու մյուս մասնագետները, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն պատասխանատվություն են կրում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի, դաստիարակության, կրթության, առողջության պահպանման, սոցիալական պաշտպանության համար, տարածքային կառավարման պետական մարմնի, խնամակալության և հոգաբարձության ու այլ իրավասու մարմինների համաձայնությամբ կարող են մասնակցել համապատասխան մարմինների կողմից իրականացվող երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցառումներին, ինչպես նաև հանդես գալ դատարանում:

Հարց 4. Ինչպիսի՞ն է առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին մանկատուն տեղավորելու ընթացակարգը:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքն ու դաստիարակությունը մինչև նրանց չափահաս դառնալն իրականացնելու նպատակով պետությունը նախատեսում է նրանց տեղավորումը երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում՝ մանկատներում: ՀՀ կառավարության 2005թ. մարտի 24-ի N 381-Ն որոշմամբ սահմանվում են ՀՀ-ում գործող մանկատների տեսակները, ինչպես նաև դրանցից յուրաքանչյուրում երեխաների տեղավորման չափանիշները:

Ըստ այդմ, ՀՀ-ում գործում են ընդհանուր և մասնագիտացված տիպի մանկատներ: Ընդհանուր տիպի մանկա-

տները դասակարգվում են ըստ հետևյալ տարիքային խմբերի՝

1. մինչև 6 տարեկան երեխաների ընդհանուր տիպի մանկատուն,

2. 6-18 տարեկան երեխաների ընդհանուր տիպի մանկատուն,

3. մինչև 18 տարեկան երեխաների ընդհանուր տիպի մանկատուն:

Ըստ տարիքային խմբերի ընդհանուր տիպի մանկատանը կարող են տեղավորվել 18 տարին չըրացած և հետևյալ չափանիշներն ունեցող այն երեխաները, որոնց ծնողները կամ միակ ծնողը՝

1. մահացել են,

2. զրկված են ծնողական իրավունքից,

3. ինքնակամ հրաժարվել են ծնողական պարտականությունների կատարումից և տվել են որդեգրման մասին գրավոր համաձայնություն,

4. անհայտ են,

5. դատարանի կողմից ճանաչված են անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած,

6. ազատազրկման ձևով պատիժը կրելու կամ նախնական քննության ընթացքում կալանքի տակ գտնվելու պատճառով չունեն երեխային խնամելու և դաստիարակելու հնարավորություն,

7. խուսափում են երեխայի դաստիարակությունից կամ նրա իրավունքների և շահերի պաշտպանությունից:

ՀՀ-ում գործող մասնագիտացված մանկատներում տեղավորվում են հատուկ կարիքավոր երեխաները: Մասնագիտացված մանկատները դասակարգվում են ըստ հետևյալ տարիքային խմբերի՝

1. մինչև 6 տարեկան երեխաների մասնագիտացված մանկատուն,

2. 6-18 տարեկան երեխաների մասնագիտացված մանկա-

տուն:

Ըստ տարիքային խմբերի մասնագիտացված մանկատուն կարող են տեղավորվել հասարակ տիպի մանկատուն տեղավորելու չափանիշներին համապատասխանող կամ երեխաների խնամքից խուսափող ծնողներ ունեցող՝ մինչև 18 տարեկան այն երեխաները, ովքեր ունեն բնածին կամ ձեռքբերովի արատներ, խորը մտավոր թերզարգացածություն, ինչպես նաև զուգակցված տարբեր ֆիզիկական արատներ:

Ընդ որում, մանկատանը տեղավորման ենթակա նույն ընտանիքի երեխաները /քույրեր և եղբայրներ/ տեղավորվում են միևնույն մանկատանը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ բժշկական ժամանակավոր հակացուցումներով այդ երեխաների խնամքն ու դաստիարակությունը անհնար է իրականացնել միասին:

Հարց 5. Որքա՞ն է կազմում մանկատան շրջանավարտին տրվող միանվագ դրամական աջակցությունը:

Մանկատան շրջանավարտներին տրամադրվող միանվագ դրամական օգնության գումարի չափը կազմում է 50000 ՀՀ դրամ:

**ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ**

Հարց 1. Ի՞նչ է հաշմանդամների սոցիալական պաշտպանությունը:

Հաշմանդամների սոցիալական պաշտպանությունը տնտեսական, սոցիալական և իրավական միջոցառումների համակարգ է, որը հաշմանդամների համար ապահովում է կենսագործունեության սահմանափակումները հաղթահարելու, փոխարինելու (փոխհատուցելու) պայմաններ և ուղղված է հասարակական կյանքում նրանց մասնակցության համար մյուս քաղաքացիների հետ հավասար հնարավորությունների ապահովմանը:

Հարց 2. Ո՞վ է համարվում հաշմանդամ անձ:

Հաշմանդամ է համարվում այն անձը, ով առողջության խաթարմամբ պայմանավորված, կենսագործունեության սահմանափակումների հետևանքով ունի սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն:

Հարց 3. Որտե՞ղ և ինչպե՞ս դիմել հաշմանդամ ճանաչվելու համար:

Հաշմանդամ ճանաչվելու համար պետք է դիմել բնակության վայրի տարածքային պոլիկլինիկա, որտեղ, անհրաժեշտության դեպքում լրացվում է բժշկասոցիալական փորձաքննության ուղեգիր՝ ձև 88, ինչն էլ պետք է ներկայացնել տարածքային բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողով (ԲՄՓՀ): Կրկնակի փորձաքննության դեպքում հաշմանդամը կարող է անմիջապես դիմել ԲՄՓՀ:

Հարց 4. Ի՞նչ է բժշկասոցիալական փորձաքննությունը:

Բժշկասոցիալական փորձաքննությունը հիվանդության, խեղման կամ վնասվածքի հետևանքով օրգանիզմի ֆունկ-

ցիաների կայուն խանգարումներով պայմանավորված կենսագործունեության սահմանափակումների գնահատման հիման վրա հաշմանդամության սահմանումն է, ինչպես նաև հաշմանդամի վերականգնման և սոցիալական պաշտպանության տեսակների որոշումը: Բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության փորձաքննական հանձնաժողովների կողմից: Բժշկասոցիալական փորձաքննության տարածքային հանձնաժողովների ցանկը և տվյալները ներկայացված են սույն ուղեցույցի հավելված 10-ում:

Հարց 5. Բժշկական փորձաքննության իրականացման համար ի՞նչ կարգ է նախատեսված:

Բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացնում է անձի հաշվառման, իսկ հաշվառում չունենալու դեպքում՝ փաստացի բնակության վայրը սպասարկող փորձաքննական հանձնաժողովը: Փորձաքննությունն անց է կացվում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Անձը տեղեկանում է փորձաքննություն իրականացնող հանձնաժողովի անդամների մասին, և նրանց անաչառությունը կասկածի տակ դնող հանգամանքների առկայության դեպքում հնարավորություն ունի անվստահություն (բացարկ) հայտնել նրանց: Բացարկ հայտնելու, ինչպես նաև այլ դեպքերում, երբ հանձնաժողովի կողմից փորձաքննություն իրականացնելը անհնարին է դարձել, գործակալության պետի հանձնարարությամբ բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացվում է այլ հանձնաժողովի կողմից:

Փորձաքննություն իրականացնելու համար անհրաժեշտ է տարածքային մարմին ներկայացնել գրավոր դիմում, ուղեգիր, անձը հաստատող փաստաթուղթ (մինչև 16 տարեկան երեխայի համար ներկայացվում է ծննդյան վկայականը,

ծնողներից մեկի կամ խնամակալի (հոգաբարձուի) անձնագիրը), հաշվառում չունենալու դեպքում նաև բնակության վայրից տեղեկանք: Դիմումին կցվում է հիվանդության, վնասվածքի, խեղման հետևանքով օրգանիզմի կայուն ֆունկցիաների խանգարումով պայմանավորված առողջության խաթարումը հաստատող բժշկական փաստաթղթերը (էպիկրիզ, հիվանդության պատմություն):

Անձը հաշմանդամ է ճանաչվում, իսկ բավարար հիմքերի առկայության դեպքում անձին հաշմանդամ ճանաչելու վերաբերյալ դիմումը մերժվում է համապատասխան փաստաթղթերը և դիմումը ներկայացնելու օրվանից 30 օրյա ժամկետում:

Մերժման հիմքերի հետ համաձայն չլինելու դեպքում այն կարող է բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով:

Այն դեպքում, երբ բավարարվում է անձին հաշմանդամ ճանաչելու վերաբերյալ դիմումը, նրա նկատմամբ հաշմանդամությունը համարվում է սահմանված դիմումը ներկայացնելու օրը:

Հարց 6. Ի՞նչ կարգով է կատարվում փորձաքննությունը, եթե անձը հիվանդության կամ այլ հարգելի պատճառով չի կարող ներկայանալ իր բնակության վայրը սպասարկող փորձաքննական հանձնաժողով:

Եթե անձը, առողջական վիճակի բերումով, չի կարող ներկայանալ փորձաքննության անցկացման վայր և դրա մասին նշել է դիմումում, ապա հանձնաժողովը բժշկասոցիալական փորձաքննությունը կարող է իրականացնել անձի գտնվելու վայրում (բնակության վայր կամ հիվանդանոց): Միննույն ժամանակ բուժման նպատակով ՀՀ տարածքից դուրս գտնվող հաշմանդամի բժշկասոցիալական փորձաքննությունը, դիմումին համապատասխան, իրականացվում է հեռակա՝ բժշկասոցիալական փորձաքննության նախկին փաս-

տաթղթերի և այն բժշկական կազմակերպության տված փաստաթղթերի հիման վրա, որտեղ հաշմանդամը գտնվում է բուժման մեջ:

Հարց 7. Ի՞նչ կարգավիճակ է տրվում բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված անձին:

Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից սահմանվում է հաշմանդամության 1-ին, 2-րդ կամ 3-րդ խումբ, իսկ մինչև 18 տարեկան երեխաներին տրվում է հաշմանդամ երեխայի կարգավիճակ:

Հարց 8. Ովքե՞ր են ճանաչվում 1-ին խմբի հաշմանդամներ:

Բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում անձին 1-ին խմբի հաշմանդամության կարգ է տրվում, եթե հիվանդությունների, վնասվածքների կամ արատների հետևանքով նրա մոտ նկատվում է օրգանիզմի ֆունկցիաների կայուն, խիստ արտահայտված խանգարումով առողջության խաթարում, որը հանգեցնում է կենսագործունեության հետևյալ տեսակներից որևէ մեկի սահմանափակմանը կամ դրանց զուգորդմանը՝

• **ինքնասպասարկման ապահովման 3-րդ աստիճանի ունակություն**-երբ անձի մոտ նկատվում է հիմնական ֆիզիոլոգիական պահանջունքներն ինքնուրույն բավարարելու, ամենօրյա կենցաղային գործունեություն և անձնական հիգիենա իրականացնելու անկարողություն և լիակատար կախվածություն այլ անձանցից :

• **Տեղաշարժվելու 3-րդ աստիճանի կարողություն**- ինքնուրույն տեղաշարժվելու՝ կենցաղային, հասարակական և մասնագիտական գործունեության իրականացման համար տարածության մեջ ինքնուրույն տեղափոխվելու, խոչընդոտներ հաղթահարելու, քայլելու, վազելու, տեղաշարժվելու,

մարմնի հավասարակշռությունը պահպանելու անկարողություն և լիակատար կախվածությունն այլ անձանցից :

- **Կողմնորոշվելու 3-րդ աստիճանի կարողություն-** երբ անձի մոտ նկատվում է ժամանակի և տարածության մեջ կողմնորոշվելու անկարողություն:

- **Հաղորդակցվելու 3-րդ աստիճանի կարողություն-** երբ անձի մոտ նկատվում է տեղեկատվության ընկալման, վերամշակման և փոխանցման միջոցով մարդկանց միջև կապ հաստատելու անկարողություն:

- **Մեփական վարքը հսկելու 3-րդ աստիճանի կարողություն-** երբ անձի մոտ նկատվում է բարոյաէթիկական և սոցիալ-իրավական նորմերի հիման վրա ինքնաճանաչման և համապատասխան վարքի դրսևորման լրիվ անկարողություն և կողմնակի հսկողության անհրաժեշտություն:

Հարց 9. Որո՞նք են անձին 2-րդ խմբի հաշմանդամ ճանաչելու չափանիշները:

Բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում անձին 2-րդ խմբի հաշմանդամության կարգ է տրվում, եթե հիվանդությունների, վնասվածքների կամ արատների հետևանքով նրա մոտ նկատվում է օրգանիզմի ֆունկցիաների կայուն արտահայտված խանգարումով առողջության խաթարում, որը հանգեցնում է կենսագործունեության հետևյալ տեսակներից որևէ մեկի սահմանափակմանը կամ դրանց զուգորդմանը՝

- **Ինքնասպասարկման ապահովման 2-րդ աստիճանի ունակություն-** երբ անձի մոտ հիմնական ֆիզիոլոգիական պահանջմունքներն ինքնուրույն բավարարելը, ամենօրյա կենցաղային գործունեություն և անձնական հիգիենա իրականացնելը հնարավոր է օժանդակ միջոցների օգտագործմամբ և այլ անձանց մասնակի օգնությամբ:

- **Տեղաշարժվելու 2-րդ աստիճանի կարողություն-** երբ անձը ինքնուրույն տեղաշարժվել (կենցաղային, հասարակա-

կան և մասնագիտական գործունեության իրականացման համար տարածության մեջ ինքնուրույն տեղափոխվել, խոչընդոտներ հաղթահարել, քայլել, վազել, տեղաշարժվել, մարմնի հավասարակշռությունը պահպանել) կարող է օժանդակ միջոցների օգտագործմամբ և այլ անձանց մասնակի օգնությամբ:

• **Աշխատանքային գործունեությամբ զբաղվելու 3-րդ և 2-րդ աստիճանների կարողություն**-երը անձի մոտ նկատվում է աշխատանքային գործունեությամբ զբաղվելու անկարողություն, անհնարիություն կամ հակացուցվածություն, կամ հատուկ ստեղծված պայմաններում օժանդակ միջոցների և (կամ) հատուկ սարքավորված աշխատատեղերի օգտագործմամբ, այլ անձանց օգնությամբ աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողություն:

• **Ուսումնառության 3-րդ և 2-րդ աստիճանների կարողություն**- երբ անձի մոտ նկատվում է ուսումնառության անկարողություն կամ միայն հատուկ ուսումնական հաստատություններում կամ հատուկ ծրագրերով օժանդակ միջոցների օգնությամբ և (կամ) այլ անձանց օգնությամբ (բացի ուսուցանող անձնակազմի) ուսումնառության կարողություն⁴:

• **Կողմնորոշվելու 2-րդ աստիճանի կարողություն**- երբ ժամանակի և տարածության մեջ անձի կողմնորոշվելը հնարավոր է այլ անձանց օգնությամբ:

⁴ Պետք է նկատի ունենալ մի հանգամանք, որ ուսումնառության 2-րդ և 3-րդ խմբի սահմանափակումները կարող են հիմք հանդիսանալ հաշմանդամության 2-րդ խումբ սահմանելու համար, եթե անձը սովորող է (այսինքն գտնվում է դպրոցականի կամ ուսանողի կարգավիճակում), հակառակ դեպքում նշված սահմանափակումները կենսագործունեության մեկ այլ տեսակի սահմանափակումների հետ զուգորդված լինելու դեպքում կարող են հիմք հանդիսանալ անձին 2-րդ խմբի կարգ տալու հաշմանդամության համար:

- **Հաղորդակցվելու 2-րդ աստիճանի կարողություն-** երբ անձի կողմից տեղեկատվության ընկալումը, վերամշակման և փոխանցման միջոցով մարդկանց միջև կապի հաստատումը հնարավոր է միայն օժանդակ միջոցների և այլ անձանց օգնությամբ:

- **Մեփական վարքը հսկելու 2-րդ աստճանի կարողություն-** երբ անձի մոտ նկատվում է բարոյաէթիկական և սոցիալ-իրավական նորմերի հիման վրա ինքնաճանաչման և համապատասխան վարքի դրսևորման կարողության մշտական մասնակի նվազեցում, ինչը պայմանավորում է կողմնակի անձանց կողմից օգնության անհրաժեշտությունը:

Հարց 10. Որո՞նք են հաշմանդամության 3-րդ խումբ սահմանելու չափանիշները:

Բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում անձին տրվում է 3-րդ խմբի հաշմանդամության կարգ, եթե հիվանդությունների, վնասվածքների կամ արատների հետևանքով նրա մոտ նկատվում է օրգանիզմի ֆունկցիաների կայուն չափավոր արտահայտված խանգարումով առողջության խաթարում, որը հանգեցնում է կենսագործունեության հետևյալ տեսակներից որևէ մեկի սահմանափակմանը կամ դրանց զուգորդմանը՝

- **Ինքնասպասարկման ապահովման 1-ին աստիճանի ունակություն-** երբ անձի մոտ հիմնական ֆիզիոլոգիական պահանջումների ինքնուրույն բավարարումը, ամենօրյա կենցաղային գործունեության և անձնական հիգիենայի իրականացումը հնարավոր է օժանդակ միջոցների օգտագործմամբ:

- **Տեղաշարժվելու 1-ին աստիճանի կարողություն-** երբ անձը ինքնուրույն տեղաշարժվել կարող է առավել երկարատև ժամանակի ծախսումով, ընդհատումներով և տարածության կրճատմամբ, օժանդակ միջոցների օգտագործման շնորհիվ տարածության կրճատմամբ:

• **Աշխատանքային գործունեությամբ զբաղվելու 1-ին աստիճանի կարողություն**-երը անձի մոտ դրսևորվում է սովորական աշխատանքային պայմաններում որակավորման իջեցման կամ արտադրական գործունեության ծավալի նվազեցմամբ աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողություն, սեփական մասնագիտությամբ աշխատանք կատարելու անհնարինություն:

• **Ուսումնառության 1-ին աստիճանի կարողություն**- երբ անձը դրսևորում է նախադպրոցական, տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր, միջնակարգ ընդհանուր, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական, ուսուցման գործընթացի հատուկ կանոնակարգի պայմաններում և (կամ) օժանդակ միջոցների օգտագործմամբ ուսումնառության կարողություն:

• **Կողմնորոշվելու 1-ին աստիճանի կարողություն**- երբ անձի մոտ նկատվում է ժամանակի և տարածության մեջ օժանդակ միջոցների օգտագործման շնորհիվ կողմնորոշվելու կարողություն:

• **Հաղորդակցվելու 1-ին աստիճանի կարողություն**- երբ անձի մոտ նկատվում է տեղեկատվության ստացման, յուրացման և հաղորդման արագության դանդաղեցմամբ, ծավալի փոքրացմամբ, օժանդակ միջոցների օգտագործմամբ հաղորդակցվելու կարողություն⁵:

• **Սեփական վարքը հսկելու 1-ին աստիճանի կարողություն**- երբ անձի մոտ նկատվում է սեփական վարքն ինքնուրույն հսկելու կարողության ժամանակավոր, պարբերական նվազում:

⁵ Հաղորդակցվելու կամ ուսումնառության կարողությունների սահմանափակումը կարող է հաշմանդամության 3-րդ խմբի որոշման համար հիմք հանդիսանալ առավելապես կենսագործունեության մեկ կամ մի քանի այլ տեսակների սահմանափակումների զուգակցման դեպքում:

Հարց 11. Ի՞նչ ժամկետով է սահմանվում հաշմանդամությունը:

Առաջին խմբի հաշմանդամությունը սահմանվում է երկու տարի ժամկետով: 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամությունը սահմանվում է մեկ տարի ժամկետով: Օրենքով նախատեսված դեպքերում հաշմանդամությունը կարող է սահմանվել անժամկետ:

Հարց 12. Ո՞ր դեպքերում է հաշմանդամությունը սահմանվում անժամկետ:

Հաշմանդամության խումբը սահմանվում է անժամկետ.

- օրենքով տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձանց,

- վերականգնողական միջոցառումների հետանկարի բացակայության, հաշմանդամի սոցիալական անբավարարության վերացման կամ նվազեցման անհնարինության դեպքերում, որոնք հետևանք են անատոմիական արատով կամ անդառնալի կառուցվածքային փոփոխություններով կամ օրգանիզմի օրգանների կամ օրգան-համակարգերի ֆունկցիաների խանգարումով առողջության խաթարմամբ պայմանավորված կենսագործունեության կայուն սահմանափակման,

- իրականացված վերականգնողական միջոցառումների անարդյունավետության դեպքում, որը հանգեցնում է հաշմանդամի մշտական սոցիալական պաշտպանության անհրաժեշտության (առնվազն յոթ տարվա ընթացքում բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների դիտարկման պայմաններում),

- մեկ ակնազնդի կամ մեկ աչքի տեսողության անվերադարձ բացակայության դեպքում:

Հարց 13. Ո՞վ է ստանում «Հաշմանդամ երեխա» կարգավիճակը:

Կենսագործունեության սահմանափակում ունեցող և 18

տարին չլրացած երեխաներին տրվում է «Հաշմանդամ երեխա» կարգավիճակը: Այն տրվում է ցանկացած տեսակի (ինքնասպասարկման ապահովման, տեղաշարժվելու, ուսումնառության, խաղալու, կողմնորոշվելու, հաղորդակցվելու, սեփական վարքը հսկելու կարողության) և արտահայտվածության աստիճանի (ֆունկցիայի աննշան, ֆունկցիայի չափավոր, ֆունկցիայի արտահայտված, ֆունկցիայի խիստ արտահայտված խանգարումներ) կենսագործունեության սահմանափակման առկայության դեպքում:

Հարց 14. Ի՞նչ ժամկետով է սահմանվում «Հաշմանդամ երեխա» կարգավիճակը:

«Հաշմանդամ երեխա» կարգավիճակը սահմանվում է երկու տարի ժամկետով կամ մինչև 18 տարին լրանալը: Մինչև 18 տարին լրանալը ժամկետով սահմանվում է օրգանիզմի օրգանների և օրգան-համակարգերի կայուն անդառնալի կառուցվածքային փոփոխություններով ու խանգարումներով առողջության խաթարմամբ պայմանավորված կենսագործունեության մշտական սահմանափակման դեպքում, ինչպես նաև մեկ ակնագնդի կամ մեկ աչքի տեսողության անվերադարձ բացակայության դեպքում:

Ինչպես տեսնում ենք, անձի չափահաս դառնալով դադարում է նաև նրա նկատմամբ սահմանված «Հաշմանդամ երեխա» կարգավիճակը, ինչը նշանակում է, որ չափահաս դառնալիս կենսագործունեության սահմանափակումների առկայության դեպքում նրան տրվում է արդեն օրենքով սահմանված երեք խմբի հաշմանդամության կարգերից մեկը:

Հարց 15. Ո՞ր իրավական ակտերով է կարգավորվում հաշմանդամների սոցիալական ապահովությունը և ինչ է բովանդակություն է այն իր մեջ ներառում:

Հաշմանդամների սոցիալական խնդիրները կարգավորվում են «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպա-

նության մասին» ՀՀ օրենքով, Կառավարության «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության միջոցառումների մասին» 30.11.1993թ թիվ 600 որոշմամբ և այլ իրավական ակտերով:

ՀՀ-ում հաշմանդամներին ցույց տրվող սոցիալական օգնությունը իր մեջ ներառում է դրամական վճարումներ (կենսաթոշակներ, նպաստներ, միանվագ վճարումներ), տեխնիկական և այլ միջոցների ապահովումը (ներառյալ թիկնասայլակներ, պրոթեզաօրթոպեդիկ սարքեր, հատուկ տառատեսակներով արտադրանք, ձայնի ուժեղացուցիչ սարքավորումներ և ազդանշանային համակարգեր), ինչպես նաև հաշմանդամների կենցաղային սպասարկման և բժշկական, մասնագիտական սոցիալական վերականգնման ծառայությունների տրամադրումը:

Հարց 16. Ի՞նչ իրավունքներից են օգտվում հաշմանդամները:

ՀՀ-ում հաշմանդամներն օգտվում են.

- օրենքով սահմանված հաշմանդամության կենսաթոշակ ստանալու իրավունքից,
- միջնակարգ-մասնագիտական և բարձրագույն կրթական հաստատություններում անվճար համակարգում սովորելու իրավունքից,
- 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներն օգտվում են ՀՀ տարածքում ներքաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներով, /բացառությամբ ավտոբուսից և տաքսուց/, անվճար երթևեկելու իրավունքից,
- Պրոթեզաօրթոպեդիկ պարագաների իրերի /բացառությամբ թանկարժեք մետաղներից պատրաստվող ատամնապրոթեզների/ անվճար պատվիրման, նորոգման և ստացման իրավունքից,
- բնակարանային ապահովման իրավունքից,

- հաշմանդամների կենցաղային սպասարկման /էլեկտրա-էներգիայի, գազի, ջեռուցման, ջրամատակարարման, ջրահեռացման, աղբահանման, ինչպես նաև հեռախոսի և ռադիոյի բաժանորդային վարձի վճարման/ համար տրվող դրամական փոխհատուցման իրավունքից,

- անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքից,

- հաստատություններում կամ տնային պայմաններում խնամք ստանալու իրավունքից,

- ձեռնարկատիրական գործունեության պետական գրանցման համար ֆինանսական աջակցություն ստանալու իրավունքից:

Հարց 17. Որո՞նք են հաշմանդամության կենսաթոշակի տեսակները:

Հաշմանդամներն ունեն հաշմանդամության կենսաթոշակ ստանալու իրավունք: Օրենքով սահմանված է հաշմանդամության կենսաթոշակի երկու տեսակ՝

- հաշմանդամության ապահովագրական կենսաթոշակ,
- հաշմանդամության սոցիալական կենսաթոշակ:

Հաշմանդամության ապահովագրական կենսաթոշակի չափը, ի տարբերություն հաշմանդամության սոցիալական կենսաթոշակի չափից, առավել բարձր է: Կենսաթոշակը կոչվում է ապահովագրական, քանի որ կենսաթոշակի տվյալ տեսակից օգտվել կարող են այն հաշմանդամներն, ովքեր օրենքով սահմանված չափով ունեն՝

- մինչև 23 տարեկան՝ 2 տարվա,
- 23 – 26 տարեկան՝ 3 տարվա,
- 26 – 30 տարեկան՝ 4 տարվա,
- 30 տարեկան և բարձր՝ 5 տարվա

ապահովագրական ստաժ (այսինքն՝ այն հաշմանդամները, ովքեր եղել են գրանցված աշխատողներ և որոնց համար գործատուի կողմից կատարվել են սոցիալական ապա-

հովտության վճարներ):

Հավելենք նաև, որ այն անձինք, ովքեր հաշմանդամ են ճանաչվել աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետևանքով, դարձյալ օգտվում են հաշմանդամության ապահովագրական կենսաթոշակի իրավունքից՝ անկախ ապահովագրական ստաժ ունենալու հանգամանքից:

Հաշմանդամության սոցիալական կենսաթոշակից օգտվում են այն հաշմանդամները, ովքեր չունեն բավարար ապահովագրական ստաժ, որոնց հաշմանդամությունը պայմանավորված չէ աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետ⁶, ինչպես նաև «Հաշմանդամ երեխա» ճանաչված հաշմանդամները:

Հարց 18. Եթե հաշմանդամը չի աշխատում, արդյոք ունի՞ գործազրկության նպաստ ստանալու իրավունք:

Հաշմանդամները չեն օգտվում գործազրկության նպաստի իրավունքից, քանի որ հաշմանդամության կարգ ունեցող անձինք օգտվում են հաշմանդամության կենսաթոշակ ստանալու իրավունքից:

ՀՀ-ում գործազրկության նպաստ նշանակվում և տրվում է գործազուրկի կարգավիճակ ստացած այն անձանց, ովքեր չեն ստանում ՀՀ օրենքով սահմանված կենսաթոշակներ (բացառությամբ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստացող անձանց) և ունեն առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ:

Հարց 19. Որո՞նք են հաշմանդամների համար սահմանված արտոնությունները միջնակարգ-մասնագիտական և բարձրագույն կրթական հաստատություններ ընդունվելիս:

⁶ Հաշմանդամության սոցիալական և ապահովագրական կենսաթոշակների չափերը և հաշվարկման կարգը ներկայացված է սույն ուղեցույցի «Պետական կենսաթոշակներ» բաժնի 49 և 59 հարցերում:

Ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամները և «Հաշմանդամ երեխայի» կարգավիճակ ունեցող անձինք ընդունվում են պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգ՝ վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում: Այս հիմքով պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգում սովորող հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք, ինչպես նաև 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամի կարգավիճակ ունեցող անձինք տեղափոխվում են տվյալ ուսումնական հաստատության վճարովի համակարգ, եթե 18 տարին լրանալուց հետո կամ ուսումնառության ընթացքում կատարված բժշկասոցիալական վերափորձաքննության արդյունքներով չեն ճանաչվել հաշմանդամ:

Պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորող անձինք ուսումնառության ընթացքում «Հաշմանդամ երեխայի» կամ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամի կարգավիճակ ստանալու դեպքում տեղափոխվում են տվյալ ուսումնական հաստատության անվճար համակարգ:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում հաշմանդամ ուսանողն ուսումնական հաստատության վարչակազմ պետք է ներկայացնի իր հաշմանդամությունը հաստատող փաստաթուղթ: Պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունված 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամների և «Հաշմանդամ երեխայի» կարգավիճակ ունեցող անձանց ուսուցման ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Նրանց թվից ցերեկային ուսուցման հերթական քննությունները և ստուգարքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում, հաշմանդամներին վճարվում է

կրթաթոշակ՝ անկախ ստացվող նպաստից կամ թոշակից:

Ժամկետային զինվորական ծառայության պարտակա-նությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացի-ների, զոհված (մահացած) զինծառայողների երեխաների ընդունելությունը պետական ուսումնական հաստատույթ-յուններ կատարվում է մրցույթից դուրս՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Հարց 20. Հաշմանդամության ո՞ր կարգ ունեցող անձինք են օգտվում ՀՀ-ում ներքաղաքային տրանսպորտով անվճար երթևեկելու իրավունքից:

Ներքաղաքային տրանսպորտով անվճար երթևեկելու իրավունքից կարող են օգտվել 1-ին և 2-րդ խմբի հաշման-դամները: Ի հավաստումն այդ իրավունքի՝ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարույթ-յան կողմից տրվում է անվճար երթևեկության վկայական:

Հարց 21. Ի՞նչպես և ի՞նչ ժամկետով են հաշմանդամներին տրամադրվում պրոթեզաօրթոպեդիկ պարագաները:

ՀՀ-ում հաշմանդամներն ունեն հատուկ պրոթեզաօրթո-պեդիկ կոշիկների և բոլոր տեսակի պրոթեզային իրերի (բա-ցառությամբ թանկարժեք մետաղներից պատրաստվող ստամնապրոթեզների) անվճար պատվիրման, նորոգման և ստացման իրավունք: Պրոթեզավորման պարագաների ցանկը և դրանք հաշմանդամներին հանձնելու ժամկետները սահմանված են սույն ուղեցույցի հավելված 1-ում: Պրոթեզա-վորման պարագաներ ստանալու ցանկություն ունեցող հաշ-մանդամը դիմումը՝ կից փաստաթղթերով, պետք է ներկա-յացնի սոցիալական ապահովության տարածքային ծառա-յություն:

Հարց 22. Որտեղի՞ց և ինչպե՞ս հաշմանդամը կարող է ստանալ սայլակ:

Հաշմանդամի սայլակներ տրամադրվում են առաջին խմբի հաշմանդամներին և մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաներին՝ ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության տարածքային մարմնի եզրակացության հիման վրա: Սայլակ ստանալու համար անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը պետք է դիմի սոցիալական ծառայությունների տարածքային մարմին (ՄՕՏՄ)՝ ներկայացնելով

- անձնագիրը,
- մինչև 18 տարեկանների համար՝ ծնողներից մեկի անձնագիրը և երեխայի ծննդյան վկայականը,
- հաշմանդամության քաղվածք-տեղեկանքը,
- տարածքային բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի եզրակացությունը սայլակ ստանալու անհրաժեշտության վերաբերյալ, իսկ առաջին անգամ դիմելու դեպքում՝ վերականգնողական անհատական ծրագիրը:

Սոցիալական ծառայությունների տարածքային մարմինը քաղաքացուն տալիս է տեղեկանք՝ «Պրոթեզաօրթոպեդիկ» ՄՊԸ-ից սայլակ ստանալու համար (հասցեն՝ Երևան, Ծարավ-Աղբյուրի 55ա): Հաշմանդամի սայլակը հատկացվում է 3 տարի ժամկետով:

Հարց 23. Ու՞մ է տրամադրվում լսողական սարք: Որտեղի՞ց և ինչպե՞ս անձը կարող է ստանալ լսողական սարք:

Լսողական սարք տրամադրվում է հաշմանդամներին, մինչև 18 տարեկան երեխաներին և տարիքային կենսաթոշակատուներին /համապատասխան բժշկական և այլ փաստաթղթերի հիման վրա/: Լսողական սարք ստանալու համար անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը պետք է դիմի սոցիալական ծառայությունների տարածքային մարմին (ՄՕՏՄ)՝ ներկայացնելով սուրդոլոգի եզրակացությունը, անձնագիրը, մինչև 16 տարեկանների համար՝ ծնողներից մեկի անձնագիրը և երեխայի ծննդյան վկայականը, տարիքային կենսաթոշակատուները՝ կենսաթոշակատուի վկայա-

կանը, հաշմանդամները՝ հաշմանդամության քաղվածք-տեղեկանքը, իսկ հաշմանդամներն առաջին անգամ ստանալու դեպքում՝ վերականգնողական անհատական ծրագիրը՝ ՎԱԾ (բժշկասոցիալական փորձաքննության տարածքային հանձնաժողովից): ՄՕՏՄ-ն քաղաքացուն հատկացնում է տեղեկանք՝ «Պրոթեզաօրթոպեդիկ» ՄՊԸ-ից լսողական սարք ստանալու համար (հասցեն՝ Ծարավ-Աղբյուրի 55ա): Լսողական սարքը հատկացվում է 3 տարի ժամկետով:

Հարց 24. Ինչպե՞ս է հաշմանդամներին անվճար կամ արտոնյալ պայմաններով տրամադրվում դեղորայք:

1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները, ինչպես նաև հաշմանդամ երեխա կարգավիճակ ունեցող անձինք օգտվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անվճար դեղորայք ստանալու իրավունքից: 3-րդ խմբի հաշմանդամներն օգտրվում են դեղորայքը 50 տոկոս զեղչով ձեռք բերելու իրավունքից: Բնակչության շրջանում առկա է այն թյուր կարծիքը, որ հաշմանդամության կարգ ունեցող անձինք անվճար կամ արտոնյալ պայմաններով (զեղչով) կարող են ձեռք բերել ցանկացած դեղորայք, թեկուզև այն կապված չլինի իրենց հիվանդության կամ կենսագործունեության սահմանափակումների վերացման հետ: Տարածված սխալ ըմբռնումը նպատակով ցանկանում ենք փոքր ինչ պարզաբանել հաշմանդամների կողմից անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղորայքի ստացման կարգը:

Դեղորայքի անվճար հատկացումը հաշմանդամներին իրականացվում է ամբուլատոր-պոլիկլինիկական և դիսպանսերային բժշկական հաստատությունների կողմից դեղատոմսերով, համապատասխան գրառում կատարելով հիվանդի ամբուլատոր քարտում, իսկ մասնագիտացված հիվանդանոցների կողմից՝ հիվանդության պատմությունում: Հիվանդներին անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր նշանակելիս հիմք է ընդունվում ամբուլատոր քարտում առ-

կա հիվանդության ախտորոշումը կամ հիվանդանոցային կազմակերպության կողմից տրված հիվանդության էպիկրիզը:

Ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատությունները կարող են հիվանդներին անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղորայքի տրամադրումը կազմակերպել նաև իրենց սպասարկման տարածքում գտնվող, լիցենզավորված դեղատներից կամ դեղատնային կրպակներից՝ նրանց հետ կնքելով համապատասխան պայմանագիր: Տվյալ դեպքում հիվանդը, փաստորեն, բժշկական հաստատությունից նշանակված դեղորայքը ստանալու անհնարինության պարագայում, կարող է նշանակված դեղորայքը ձեռք բերել դեղատնից, իսկ դեղատունն էլ հետագայում դեղի արժեքի փոխհատուցումը բժշկական հաստատությունից ստանալու իրավունք է ձեռք բերում՝ միմյանց միջև կնքված պայմանագրին համապատասխան:

Ինչպես տեսնում ենք, հիվանդները ոչ բոլոր դեղատներին և դեղատնային կրպակներին կարող են բժշկական հաստատության կողմից դուրս գրված դեղորայքը ձեռք բերելու պահանջ ներկայացնել: Նախքան դա, անհրաժեշտ է պարզել դեղատան և բժշկական հաստատության փոխհամագործակցության առկայության հարցը:

Հարց 25. Ի՞նչ չափով է տրվում ձեռնարկատիրական գործունեության պետական գրանցման համար ֆինանսական աջակցությունը:

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար հաշմանդամնին անհատ ձեռնարկատեր կամ առևտրային կազմակերպություն գրանցելու համար տրվում են ֆինանսական միջոցներ հետևյալ չափերով:

Եթե հաշմանդամը ցանկանում է գրանցվել որպես անհատ ձեռնարկատեր, ապա՝ բազային տուրքի եռապատիկի

չափով-3000 ՀՀ դրամ:

Եթե հաշմանդամը ցանկանում է հիմնել առևտրային կազմակերպություն, ապա դրա գրանցման համար նախատեսվում է ֆինանսական օգնություն բազային տուրքի 12-ապատիկի չափով, այսինքն՝ 12 000 ՀՀ դրամ:

Հաշմանդամին տրամադրվում է նաև բազային տուրքի 6-ապատիկի չափով դրամական օգնություն /6000 ՀՀ դրամ/ ֆիրմային անվանումը գրանցելու համար անհրաժեշտ պետական տուրք վճարելու նպատակով:

Կնիք ձեռք բերելու համար՝ կնիք պատրաստող պետական մասնագիտացված կազմակերպության կողմից սահմանված գների սանդղակի նվազագույն գնի չափով:

Հարց 26. Ինչպիսի՞ն է գրանցման համար հաշմանդամին տրամադրվող ֆինանսական աջակցության տրամադրման ընթացակարգը:

Ֆինանսական աջակցությունից օգտվելու համար համար անհրաժեշտ է, որպեսզի անձը ընդգրկվի ֆինանսական աջակցության ծրագրում, ինչի համար անհրաժեշտ է սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժին ներկայացնել գործարար ծրագիր՝ 2 օրինակից: Գործարար ծրագրի քննարկման արդյունքում այն գնահատվում է «բավարար» կամ «անբավարար»:

Գործարար ծրագիրը և այն ֆինանսավորելու նպատակահարմարությունը որոշվում է հիմք ընդունելով հետևյալ չափորոշիչները.

1. գործունեության ուղղվածության համապատասխանությունը տվյալ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրին,

2. թողարկվող արտադրանքի կամ մատուցվող ծառայության սպառման շուկայի հիմնավորվածությունը,

3. գործարար ծրագրով նախատեսված գործունեության զարգացման և ընդլայնման տնտեսագիտական հիմնավորումը,

4. գործարար ծրագրում հաշմանդամի կողմից կատարվող ներդրումների չափը, տեսակը, ձևը և ծախսերի հիմնավորումը:

Ծրագիրը միայն «Բավարար» գնահատվելու դեպքում հաշմանդամ անձին կարող է տրամադրվել գրանցման համար անհրաժեշտ ֆինանսական աջակցությունը:

Հավելենք նաև, որ ֆինանսական աջակցության գումարները չեն հանձնվում հաշմանդամին առձեռն, դրանք որպես պետական տուրք սոցիալական ծառայությունը միանգամից փոխանցում է ՀՀ պետական բյուջե, իսկ կնիք ձեռք բերելու համար նախատեսված գումարը՝ կնիք պատրաստող պետական մասնագիտացված կազմակերպության հաշվին:

Հարց 27. Որո՞նք են պետության կողմից միայնակ հաշմանդամին տրամադրվող խնամքի ձևերը:

Պետության կողմից խնամքը տրամադրվում է 18 տարին լրացած միայնակ (ՀՀ օրենսդրությամբ նախատեսված խնամող չունեցող կամ ընտանիքում աշխատունակ անդամ չունեցող) հաշմանդամներին: Հաշմանդամներին տրամադրվում է խնամքի հետևյալ տեսակներից որևէ մեկը.

- հաշմանդամի խնամքի տրամադրումը տնային պայմաններում,
- հաշմանդամի խնամքի տրամադրումը բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում
- հաշմանդամի խնամքի տրամադրումը սոցիալ-վերականգնողական ցերակային կենտրոններում,
- հոսպիտալին օգնություն:

Հարց 28. Ինչպիսի՞ ծառայություններ են մատուցվում հաշմանդամին տնային խնամքի իրականացման դեպքում:

Տնային պայմաններում հաշմանդամին տրամադրվում է կենցաղային սպասարկում, բժշկական օգնություն և սպասարկում, սոցիալ-հոգեբանական օգնություն, ինչպես նաև իրավաբանական խորհրդատվություն: Խնամքը տրամադրվում է ցերեկային ժամերին՝ հաշմանդամի տանը: Հաճախորդին տրամադրվող խնամքի ծառայությունների տեսակների և դրանց պայմանների վերաբերյալ սոցիալական ծառայության տարածքային գործակալության և խնամքի կարիք ունեցող հաշմանդամի միջև կնքվում է պայմանագիր: Խնամքի կարիք ունեցող հաշմանդամի գրավոր դիմումի հիման վրա դադարեցվում է տնային պայմաններում տրամադրվող խնամքը: Տնային պայմաններում տրամադրվող խնամքը դադարեցվում է նաև, սույն ուղեցույցի հավելված 2-ով սահմանված հիվանդություններից որևէ մեկով անձի հիվանդանալու դեպքում, անձի կողմից կեղծ տեղեկություններ ներկայացված լինելու դեպքում, խնամք ստացող անձի մահվան դեպքում:

Հարց 29. Ինչպիսի՞ ծառայություններ են մատուցվում հաշմանդամին սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոնում:

Սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոնը նախատեսված է ցերեկային ժամերին խնամքի կարիք ունեցող հաշմանդամներին խնամք տրամադրելու համար: Սոցիալ-հոգեբանական ցերեկային կենտրոնում հաշմանդամին տրամադրվում են հետևյալ ծառայությունները.

- սնունդ՝ օրական մեկ անգամ,
- առաջնային բուժօգնություն,
- սոցիալ-հոգեբանական օգնություն,
- իրավաբանական խորհրդատվություն:

Կենտրոնում կազմակերպվում է հաշմանդամների ժամանցը, ինչպես նաև անցկացվում են մշակութային միջոցառումներ:

Հարց 30. Ինչպիսի՞ ծառայություններ են մատուցվում հաշմանդամին բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր հաստատությունում:

Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում միայնակ հաշմանդամներին տրամադրվում է կացարան՝ ամբողջական խնամքով: Անձը բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղափոխվելու դեպքում անցնում է պարտադիր բժշկական գնություն: Նշված հաստատությունում անձին տրամադրվում է.

- սնունդ՝ օրական առնվազն երեք անգամ,
- առաջնային բուժօգնություն,
- սոցիալ-հոգեբանական օգնություն,
- իրավաբանական խորհրդատվություն,
- պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովում,
- բժշկասոցիալական փորձաքննություն,
- ստացիոնար բժշկական հաստատություն ուղեգրում,
- ազատ ժամանց:

Նշված հաստատություններում խնամք ստացող հաշմանդամները, իրենց հարազատների գրավոր դիմումի հիման վրա, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության ղեկավարի հրամանով կարող են մինչև մեկ ամիս ժամկետով դուրս գրվել հաստատությունից՝ իրենց հարազատներին հյուրնկալվելու նպատակով:

Խնամք ստացող անձի՝ քրոնիկ հոգեկան կամ ծերունական փսիխոզով ու ծանր սկրելոզով հիվանդանալու դեպքում, տեղափոխվում է բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ հաստատություն:

Հարց 31. Ի՞նչ է իրենից ներկայացնում հոսպիսային օգնությունը:

Բժշկագիտության մեջ ցավոք առկա է հիվանդությունների մի խումբ, որոնք ներկայումս կիրառվող բուժական մե-

թողների տեսանկյունից համարվում են անբուժելի: Այդպիսի հիվանդություններով տառապող հիվանդների մի կողմից անօգուտ և աննպատակահարմար է պահել հիվանդանոցներում, մյուս կողմից՝ տնային պայմաններում նրանց ամենօրյա խնամքի իրականացումը հանդիպում է մի շարք բարդությունների: Հենց այսպիսի հիվանդների ժամանակավոր խնամքն իրականացվում է հոսպիտալին ծառայությունների կողմից: Հոսպիտալին ծառայությունները, որպես կանոն տրամադրվում են կարճ ժամանակով, հիվանդի կյանքի վերջին ամիսների, օրերի ընթացքում: Հոսպիտալին օգնություն տրամադրելու համար հիմք կարող է հանդիսանալ բժշկական եզրակացությունը և միայնակ հաշմանդամի կամ նրա հարազատների գրավոր դիմումը: Այն տրամադրվում է հատուկ այդ նպատակով գործող հոսպիտալին օգնություն տրամադրող կազմակերպությունում, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության առանձնացված բաժանմունքում⁷, ինչպես նաև տնային պայմաններում:

Հարց 32. Ի՞նչ լրացուցիչ արտոնություններ են սահմանվում ՀՀ պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների պատճառով հաշմանդամ դարձած զինծառայողներին և ազատամարտիկներին:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների պատճառով հաշմանդամ դարձած զինծառայողներին և ազատամարտիկներին իրավունք է վերապահված՝

- բժշկի դեղատոմսով անվճար դեղորայք ստանալու և պետական բուժական հիմնարկներում արտահերթ և անվճար սպասարկվելու.

⁷ Հոսպիտալին ծառայություններ տրամադրվում են թիվ 19 պոլիկլինիկայի տարածքում (հասցեն՝ ք. Երևան, Հարավ-Արևմտյան թաղամաս, Անդրանիկի 2 Ա, հեռախոս՝ (010) 746181):

- անվճար ձեռք բերելու պրոթեզա-օրթոպեդիկ պարագաներ.
- տարին մեկ անգամ անվճար ձեռք բերելու առողջարանային ուղեգիր.
- անվճար և արտահերթ հեռախոս տեղադրելու.
- դպրոցական և նախադպրոցական հիմնարկներում երեխաների վարձը վճարելու 50 տոկոս զեղչով:

Հարց 33. Ի՞նչ լրացուցիչ արտոնությունից են օգտվում տեսողության խնդիրներ ունեցող անձինք:

Համաձայն «Տեսողության խնդիր ունեցող անձանց «ԱՐԵՎ» համակարգի ուսուցման և համակարգչային տեխնիկայի տրամադրման կարգը հաստատելու մասին» Կառավարության 211-Ն որոշման թիվ 1 հավելվածի՝ տեսողության հետ խնդիր ունեցող անձանց համար կատարվում է համակարգչային տեխնիկայի ուսուցում: «Արև» համակարգը հատուկ համակարգչային համակարգ է, որի միջոցով տեսողության խնդիր ունեցող անձինք կարող են օգտվել համակարգչային տեխնիկայից: Նշված համակարգի ուսուցումը և համակարգչային տեխնիկայի տրամադրումը և սպասարկումը կատարվում է ՀՀ պետական բյուջեի և օրենքով սահմանված այլ միջոցների հաշվին:

Նշված համակարգի անվճար ուսուցումից օգտվել կարող են տեսողության խնդիրներ ունեցող 1-ին խմբի հաշմանդամներին և տեսողությունից զրկված հաշմանդամ երեխաներին՝ հաշվի առնելով օրենքով սահմանված հետևյալ առաջնայնությունները՝

1. ԲՈՒՀ-երի ուսանողներ,
2. աշխատող հաշմանդամներ, որոնց աշխատանքն ուղղակիորեն առնչվում է համակարգչի հետ,
3. հանրակրթական դպրոցի ավարտական դասարանի աշակերտներ,
4. քոլոջներ և միջին մասնագիտական ուսումնական հաս-

տատությունների ուսանողներ,

5. աշխատանք փնտրող հաշմանդամներ:

«Արև» համակարգում ուսուցում և համակարգչային տեխնիկա ստանալու համար հաշմանդամը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացնում դիմում, անձը հաստատող փաստաթուղթ, հաշմանդամի կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև առաջնայնության կատեգորիայում գտնվելու փաստը հաստատող ապացույց՝ տեղեկանք:

Հանձնաժողովը ուսումնասիրում է անձի կողմից ներկայացված դիմումը և դրան կից փաստաթղթերը, ինչի արդյունքում ընդունում է որոշում հաշմանդամին «Արև» համակարգի ուսուցում ստանալու համար համապատասխան կազմակերպություն ուղեգրելու կամ մերժելու վերաբերյալ: Հանձնաժողովն իրավունք ունի մերժել ուղեգրի տրամադրումը, եթե դիմումատուի կողմից չեն ներկայացվել համապատասխան փաստաթղթերը:

Հանձնաժողովի նիստը գումարվում է յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ, եթե առկա է այդ կապակցությամբ որևէ դիմում:

Ընդ որում, «Արև» համակարգի համակարգչային տեխնիկան տեսողության հետ խնդիր ունեցող անձին տրամադրվում է մեկ անգամ, տասը տարի ժամկետով՝ «Արև» համակարգի 60-ժամյա ուսուցումն իրականացնելուց և համապատասխան վկայականը տրամադրելուց հետո:

Հարց 34. Քրոնիկ հոգեկան հիվանդություն կամ մտավոր հետամնացություն ունեցող անձանց սոցիալական ապահովությունը:

Հաշմանդամների թվում առանձնակի ուշադրության են արժանի հոգեկան առողջության հետ խնդիրներ ունեցող անձինք, ինչը հաշվի առնելով նրանց սոցիալական ապահովու-

թյանը վերաբերող իրավական նորմերի լուսաբանմանն անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ առանձին:

Քրոնիկ հոգեկան հիվանդություն կամ մտավոր հետամընացություն ունեցող հաշմանդամները, ծերունական փսիխոզով, ծանր արտահայտված սկրելոզով տառապող անձանց պետական ծրագրերի շրջանակներում տրամադրվում է խնամք բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ հաստատություններում: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը կազմակերպում է նշված անձանց սնունդը, առաջնային բուժօգնությունը, սոցիալ-հոգեբանական օգնությունը և այլն:

Անձի տեղավորումը սոցիալական պաշտպանության հատուկ հաստատությունում կատարվում է նրա կամ նրա խնամակալի դիմումի հիման վրա, որը ներկայացվում է տվյալ անձի փաստացի բնակության վայրի սոցիալական ծառայության տարածքային գործակալություն:

Դիմումին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում, որում նշվում է խնամքի տեսակը,
- սոցիալական ապահովության քարտը և դրա պատճենը,
- անձը հաստատող փաստաթուղթը և դրա պատճենը,
- տեղեկանք կենսաթոշակ նշանակող իրավասու մարմնից կենսաթոշակի չափի և տեսակի մասին,
- տեղեկանք բնակության վայրի պոլիկլինիկայից՝ նրա առողջական վիճակի մասին:
- Այն դեպքում, երբ դիմումը ներկայացվում է խնամքի կարիք ունեցող անձի խնամակալի կողմից, նշված փաստաթղթերի հետ ներկայացվում է նաև.
- խնամակալի անձը հաստատող փաստաթուղթը և դրա պատճենը,
- քաղաքացուն անգործունակ ճանաչելու մասին դատարանի որոշման պատճենը,

- անձի նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշման պատճենը:

Եթե կան կասկածներ, որ անձը տառապում է շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությամբ, ապա մինչև մասնագիտական բժշկական հաստատություն տեղափոխվելը, տեղավորվում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության հատուկ առանձնացված սենյակում՝ բժշկի եզրակացության հիման վրա, որի մասին եռօրյա ժամկետում տեղեկացնում է ՀՀ առողջապահության նախարարության պետական համաճարակային տեսչության տարածքային կենտրոն:

Պետք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք, որ հաճախորդին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղավորելու արդյունքում դադարում է նրա նկատմամբ նախկինում սահմանված խնամակալությունը և քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով խնամակալ է ճանաչվում այն հաստատությունը, որտեղ տեղավորվել է անձը:

Խնամող չունեցող նշված կատեգորիայի անձանց սոցիալական պաշտպանության հատուկ հաստատություններում տեղավորելու կարգը սահմանվում է «Օեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 07. 12. 2006թ. թիվ 1874-Ն որոշմամբ:

Հարց 35. Զինհաշմանդամները և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքի անդամները ի՞նչ արտոնություններից են օգտվում:

Հաշմանդամ դարձած զինծառայողին գազի, ջրամատակարարման ծառայություններից և տրանսպորտից օգտվելու համար 2009թ. հունվարի 1-ից տրամադրվում է դրամական

օգնություն՝ ամսական 9100 դրամի չափով: Դրամական օգնություն ստանալու համար հաշմանդամ զինծառայողը դիմումի հետ միասին սոցիալական ապահովության պետական ծառայություն է ներկայացնում անձը և իր կարգավիճակը հաստատող փաստաթղթեր, ինչպես նաև բնակության վայրից տեղեկանք: Ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքին (ամուսնուն, ծնողներին, ինչպես նաև օրենքով սահմանված՝ կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակի իրավունք ունեցող ընտանիքների անդամներին) տրամադրվում է դրամական օգնություն՝ ամսական 7500 դրամի չափով: Եթե ընտանիքի անդամների թիվը հինգից ավելի է, հինգից ավելի յուրաքանչյուր անձի համար լրացուցիչ տրվում է 3000 դրամ: Զոհված ընտանիքը դրամական օգնություն ստանալու համար դիմումի հետ միասին սոցիալական ապահովության պետական ծառայություն է ներկայացնում զոհվածի ընտանիքի անդամ և զինծառայողի զոհված լինելու վերաբերյալ փաստաթղթեր, ինչպես նաև տեղեկանք՝ ընտանիքի անդամի բնակության վայրից: Ընտանիքի բոլոր անդամների համար դրամական օգնությունը նշանակվում և վճարվում է ընդհանուր, սակայն ընտանիքի անդամի պահանջով կարող է նրա բաժինը ընդհանուր գումարից առանձնացվել և վճարվել առանձին: Նշված անձինք օգտվում են ջրահեռացման, աղբահանության և ռադիոյի բաժանորդային վարձերը 50 տոկոս զեղչով վճարելու իրավունքից:

ԲՈՆԱԴԱՏՎԱԾՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ

Հարց 1. Ովքե՞ր են օրենքի իմաստով համարվում բռնադատվածներ:

Բռնադատված է համարվում ՀՀ-ում մշտապես բնակվող նախկին ԽՍՀՄ այն քաղաքացին, քաղաքացիություն չունեցող անձը կամ օտարերկրյա քաղաքացին, որը խորհրդային կարգերի ժամանակաշրջանում նախկին ԽՍՀՄ-ի տարածքում քաղաքական շարժառիթներով.

- դատապարտվել է նախկին՝ 1961 թվականի քրեական օրենսգրքի 65, 67, 69, ինչպես նաև 206/1 հոդվածներով կամ 1927 թվականի ՀՍՍՌ քրեական օրենսգրքի նույն բովանդակությամբ հոդվածներով կամ նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով, քաղաքական այլախոհությունը ճնշելու կամ սահմանափակելու նպատակ հետապնդող այլ հոդվածներով և հետագայում արդարացվել է,

- քրեական պատասխանատվության է ենթարկվել արտադատական կարգով,

- անօրինական կարգով ենթարկվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցների,

- արտաքսվել է նախկին ԽՍՀՄ տարածքից կամ զրկվել քաղաքացիությունից,

- աքսորվել կամ արտաքսվել է որպես բռնադատվածի ընտանիքի անդամ:

Հարց 2. Ի՞նչ արտոնություններից են օգտվում բռնադատվածները:

Բռնադատվածները՝ համաձայն «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի, օգտվում են հետևյալ արտոնություններից.

- ուղևորատար ներքաղաքային տրանսպորտով անվճար երթևեկելու,

- Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունենալու դեպքում, նախկին բնակության կամ վերջին 3 տարվա մշտական բնակության վայրում, բնակարանային անհատական շինարարության կամ տուն գնելու նպատակով արտոնյալ պայմաններով երկարաժամկետ վարկ ստանալու, որի համար ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն պետք է ներկայացնել բռնադատվածի վկայականի պատճենը, արդարացման տեղեկանքը և ընտանիքի կազմի և բնակարանային պայմանների մասին տեղեկանք՝ /բնակարանային պայմանների կարիքավորության չափանիշ է համարվում, երբ ընտանիքի յուրաքանչյուր անդամին բաժին ընկնող բնակմակերեսը չի գերազանցում 5 քառ.մետրը /, իսկ անավարտ կամ վթարային բնակելի տուն ունենալու դեպքում՝ շինարարության պատրաստվածության կամ վթարայնության աստիճանի վերաբերյալ տեղեկանք՝ տրված Հայպետսեյսմշինից: Այն դեպքերում, երբ բռնադատվածը դատապարտված է եղել մահապատժի կամ մահացել է ազատագրվման ձևով պատիժը կրելիս կամ այդ պատիժը կրելուց հետո, ապա բնակարանային պայմանների բարելավման արտոնությունից օգտվել կարող են բռնադատվածի առաջին հերթի ժառանգները (ամուսինը, երեխաները, ծնողները):

- հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի 12-պատիկի չափով միանվագ դրամական փոխհատուցում ստանալու, որի համար նախարարություն պետք է ներկայացնել բռնադատվածի վկայականի և անձնագրի պատճենները,

- պետական պատվերի շրջանակում անվճար բուժօգնություն և 50% զեղչով դեղորայք ստանալու արտոնություններից:

Հարց 3. Որո՞նք են համարվում բռնադատվածների բնակարանային պայմանների բարելավման կարիքավորության չափանիշները:

Բնակարանային անհատական շինարարության համար սեփականության իրավունքով հողատարածք տրամադրելու պահին բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր են համարվում այն բռնադատվածները,

ա/ ովքեր անօթևան են, կամ բնակարանում հաշվառված ընտանիքի յուրաքանչյուր անդամի՝ բնակելի մակերեսով ապահովվածությունը կազմում է 5.5 քմ պակաս, և իրենք, կամ իրենց հետ համատեղ բնակվող անձինք /ծնողները, ամուսինը և երեխաները/ սկսած 1994 թվականի հունիսի 14-ից, չեն օտարել բնակելի տուն/բնակարան/, որի հետևանքով արհեստականորեն վատթարացրել են իրենց բնակարանային պայմանները: Ընդ որում, բնակելի մակերեսով ապահովվածությունը հաշվարկվում է՝ առանց հաշվառելու բնակարանում հաշվառված բռնադատվածի ընտանիքի անդամ չհանդիսացող այն անձանց, ովքեր հաշվառվել են 1995 թվականի հունիսի 14-ից հետո, ինչպես նաև՝ առանց ընտանիքի այն անդամների, ովքեր սեփականության կամ այլ իրավունքով ունեն ուրիշ բնակելի տարածություն,

բ/ ովքեր բնակվում են քանդման ենթակա վթարային բնակելի շենքերում:

Հարց 4. Ի՞նչ կարգով է ՀՀ-ում այլ հանրապետություններից բռնադատվածներին տրամադրվում հողամաս:

ՀՀ-ում այլ հանրապետություններից բռնադատվածներին՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունենալու դեպքում, իրենց համաձայնությամբ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, անհատական բնակելի տան շինարարության համար սեփականության իրավունքով հողամաս է տրամադրվում նրա բնակության մարզում՝

մարզպետի որոշմամբ սահմանված բնակավայրում՝ տվյալ համայնքի ղեկավարի կողմից:

Երևանում բնակվող՝ այլ հանրապետությունից բռնադատվածներին՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունենալու դեպքում, իրենց համաձայնությամբ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, անհատական բնակելի տան շինարարության համար սեփականության իրավունքով հողամաս է տրամադրվում ՀՀ Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերում՝ մարզպետի որոշմամբ սահմանված բնակավայրերում՝ տվյալ համայնքի ղեկավարի կողմից:

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ

Հարց 1. Որքա՞ն է Հայրենական Մեծ պատերազմի վետերանների դրամական օգնության չափը:

Հայաստանի Հանրապետությունը ամսական դրամական օգնություն է նախատեսում Հայրենական Մեծ պատերազմի, նրանց հավասարեցված անձանց, Հայրենական Մեծ պատերազմի մասնակից վետերաններին և նրանց հավասարեցված անձանց, ինչպես նաև Հայրենական Մեծ պատերազմում և այլ պետություններում մարտական գործողությունների ժամանակ զոհված զինծառայողների ընտանիքներին՝ էլեկտրաէներգիայից և տրանսպորտից օգտվելու, գազի, ջերմամատակարարման և ջրամատակարարման, ջրահեռացման վարձերը վճարելու նպատակով:

Հայրենական Մեծ պատերազմի հաշմանդամների և նրանց հավասարեցված անձանց համար նախատեսված է դրամական օգնություն ամսական 6.800 ՀՀ դրամի չափով: Հայրենական Մեծ պատերազմի հաշմանդամ վետերաններին հավասարեցված անձինք այլ պետություններում մարտական գործողությունների ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողները, այլ պետություններում մարտական գործողությունների մասնակիցները, որոնք հետագայում հաշմանդամ են դարձել, ինչպես նաև նախկին խորհրդային բանակում զինվորական պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած անձինք:

Հայրենական Մեծ պատերազմի մասնակից վետերանները և նրանց հավասարեցված անձանց համար նախատեսված է ամսական 4.500 ՀՀ դրամի չափով դրամական օգնություն: Հայրենական Մեծ պատերազմի վետերաններին հավասարեցված անձինք են այլ պետություններում մարտական գործողությունների մասնակիցները:

Հայրենական Մեծ պատերազմում և այլ պետություններում մարտական գործողությունների ժամանակ զոհված զինծառայողների ընտանիքներին՝ ծնողներին, այրիներին և մանկուց հաշմանդամ զավակներին դրամական օգնությունը տրամադրվում է ամսեկան 6800 ՀՀ դրամի չափով:

Դրամական օգնությունը նշանակում է մասնակցի կամ հաշմանդամի հաշվառման կամ փաստացի բնակության վայրի սոցիալական ծառայությունների տարածքային բաժինը՝ պատերազմի մասնակցի, պատերազմի մասնակից հաշմանդամի կամ զոհվածի ընտանիքի գրավոր դիմումի հիման վրա: Մասնակիցները, հաշմանդամները և զոհվածների ընտանիքները դրամական օգնություն ստանալու համար սոցիալական ծառայության տարածքային բաժին են ներկայացնում դիմում, անձը հաստատող փաստաթուղթ, բնակության վայրից տեղեկանք, մասնակցի, հաշմանդամի կամ զոհվածի ընտանիքի կարգավիճակը հավաստող փաստաթուղթ:

Հարց 2. Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների և հաշմանդամների ո՞ր արտոնություններն են պահպանվել:

Պահպանվել են ՀՄՊ հաշմանդամ վետերանների կոմունալ ծառայությունների գծով որոշ արտոնություններ՝ բնակարանի, աղբահանության, հեռախոսի և ռադիոյի բաժանորդային վարձերը 50 տոկոս զեղչով վճարելու, ինչպես նաև պետական պատվերի շրջանակում անվճար բուժօգնություն և բուժսպասարկում, այդ թվում՝ դեղորայք ստանալու արտոնությունները: Պահպանվել է նաև ՀՄՊ վետերանների՝ ԱՊՀ անդամ երկրների տարածքում արտոնյալ պայմաններով տարին մեկ անգամ կտրոններով երթևեկելու արտոնությունը:

Հարց 3. Որքա՞ն է Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների և հաշմանդամների համար պատվովճարի չափը:

Հայրենական մեծ պատերազմի վետերանների պատվո-
վճարը 2008թ. հուլիսի 1-ից դարձել է 20.000 դրամ:

ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ

Գործազրկության և ազգաբնակչության զբաղվածության խնդիրների կառավարումը և կարգավորումն իրականացնելու նպատակով ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ 1992թվականից գործում է բնակչության զբաղվածության պետական ծառայությունը: Վերջինս ամենամյա ծրագրերի միջոցով աշխատանք փնտրողներին աջակցում է աշխատանք գտնելու հարցում, անհրաժեշտության դեպքում համապատասխան դասընթացների միջոցով բարձրացնում նրանց մասնագիտական կարողությունները, գործազուրկներին տրամադրում ժամանակավոր նպաստ, ինչպես նաև տրամադրում այլ օժանդակություն: Զբաղվածության ամենամյա պետական ծրագրերը բաղկացած են.

- գործազրկության նպաստի վճարում,
- մասնագիտական ուսուցում,
- այլ վայր աշխատանքի գործուղման կապակցությամբ գործազուրկների նյութական ծախսերի հատուցում,
- աշխատաշուկայի հետազոտման և կանխատեսման աշխատանքների կազմակերպում,
- ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար տրամադրվող ֆինանսական աջակցություն,
- աշխատաշուկայում անմրցունակ խմբերին աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին,
- վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպում,
- աշխատանքի տոնավաճառի կազմակերպում,
- գործազուրկ անձի մահվան դեպքում՝ թաղման նպաստի վճարում:

Հարց 1. Ովքե՞ր են համարվում գործազուրկներ:

Որպեսզի հնարավոր լինի պարզել, թե ովքեր են համարվում գործազուրկներ, անհրաժեշտ է անդրադառնալ զբաղվածություն ունեցող, այսինքն օրենքի տեսանկյունից գործազուրկ չհամարվող անձանց շրջանակին:

Զբաղված են համարվում այն գործունակ անձինք, ովքեր իրականացնում են գործունեության ստորև նշված տեսակներից որևէ մեկը.

- գործատուի մոտ վարձու աշխատանքային գործունեությունը, (այդ թվում՝ ՀՀ օրենքով նախատեսված ծառայությունների կադրերի ռեզերվում գտնվելը, բացառությամբ վարձատրություն չնախատեսող դեպքերի),

- գործատուի աշխատանքային գործունեությունը,
- անհատ ձեռնարկատիրական գործունեությունը,
- ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունը,
- ուսումնական հաստատություններում, մասնագիտական ուսուցման դասընթացներում և ուսուցման այլ ձևերում առկա ուսուցումը:

Զբաղվածություն չունեցող են համարվում այն գործունակ անձինք, ովքեր զբաղված չեն վերոհիշյալ գործունեության տեսակներից որևէ մեկով:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ովքեր են համարվում գործազուրկներ: Գործազուրկի կարգավիճակ տրվում է զբաղվածության պետական ծառայության կողմից, ինչի համար նախ անհրաժեշտ է հաշվառվել բնակության վայրի տարածքային կենտրոնում: Գործազուրկ են համարվում աշխատանք փնտրող աշխատունակ և գործունակ այն չզբաղված անձինք, ովքեր չեն ստանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակներ (բացառությամբ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի տեսակների), աշխատանքի տեղավորման նպատակով հաշվառված են զբաղվածության պետական ծառայությունում, պատրաստակամ են

անցնելու հարմար աշխատանքի և ստացել են գործազուրկի կարգավիճակ:

Հարց 2. Հաշվառված անձը գործազուրկի կարգավիճակ ձեռք բերելու համար ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնի:

Ինչպես արդեն նշվեց, գործազուրկի կարգավիճակ կարող է տրվել այն անձին, ով արդեն իսկ հաշվառված է որպես աշխատանք փնտրող: Գործազուրկի կարգավիճակ ստանալու համար բնակչության վայրի տարածքային մարմին պետք է ներկայացնել

- տեղեկանք՝ անձի կենսաթոշակ չստանալու մասին (բացառությամբ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի),

- տեղեկանք փաստացի բնակչության վայրի մասին,
- ապահովագրական ստաժը հաստատող փաստաթուղթ,
- զինվորական գրքույկ (զինվորական ծառայության անցած անձանց համար),

- կրթության մասին փաստաթուղթ (եթե այդպիսին կա):

- Ինչպես գիտենք, սեփականության կամ վարձակալության իրավունքով գյուղատնտեսական նշանակության հող ունենալու դեպքում անձը չի կարող ճանաչվել գործազուրկ և օգտվել գործազուրկների համար օրենքով նախատեսված սոցիալական աջակցություններից: Գյուղատնտեսական նշանակության հողի առկայության հանգամանքը պարզելու համար տարածքային մարմինը հարցում է կատարում համապատասխան գերատեսչություններին և տեղեկությունները ստանում անձամբ: Նույն կարգով տարածքային մարմինը նաև ձեռք է բերում տեղեկություններ անձի կողմից պարտադիր սոցիալական ապահովության վճարումներ կատարած լինելու կամ աշխատավարձ ստանալու ժամկետների մասին:

Հարց 3. Ո՞ր դեպքերում է դադարեցվում անձի գործագուրկի կարգավիճակը:

Զբաղվածության պետական ծառայությունը դադարեցնում է անձի գործագուրկի կարգավիճակը, եթե նա

- դարձել է զբաղված վերը նշված գործունեության որևէ տեսակով, բացառությամբ զբաղվածության պետական ծառայության կողմից իրականացվող մասնագիտական ուսուցման դասընթացներում, ժամանակավոր կամ վարձատրվող հասարակական աշխատանքներում ընդգրկման դեպքերի,

- ճանաչվել է հաշմանդամ կամ լրացել է ապահովագրական կենսաթոշակի (բացառությամբ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի) իրավունք տվող տարիքը,

- դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

- ներկայացված փաստաթղթերում հայտնաբերվել են ոչ հավաստի տվյալներ, որոնց հիման վրա տրվել է գործագուրկի կարգավիճակ,

- անհարգելի պատճառով վեց ամսվա ընթացքում զբաղվածության պետական պետական ծառայության հրավերով երեք անգամ չի ներկայացել աշխատանքի տեղավորման առաջարկություն ստանալու համար, ինչպես նաև երեք անգամ անընդմեջ հրաժարվել է հարմար աշխատանքի տեղավորման, մասնագիտական ուսուցման տարբեր առաջարկություններից, բացառությամբ մինչև երեք տարեկան երախա խնամող գործագուրկ ծնողի,

- մահացել է:

Հարց 4. Ո՞րն է օրենքի իմաստով համարվում հարմար աշխատանք:

Հարմար է համարվում այն աշխատանքը, որը համապատասխանում է անձի մասնագիտական կրթությանը և որակավորմանը՝ հաշվի առնելով առաջարկվող աշխատանքի

վարձատրության չափը և աշխատավայրի տրանսպորտային մատչելիությունը:

Մասնագիտական կրթություն և որակավորում ունեցող գործազուրկ այն անձանց համար, որոնց զբաղվածության պետական ծառայության կողմից հնարավոր չի եղել ապահովել անձի մասնագիտական կրթությանը և որակավորմանը համապատասխանող աշխատանքով, հարմար կարող է համարվել այն աշխատանքը, որը պահանջում է որակավորման բարձրացում կամ վերամասնագիտացում:

Մասնագիտական կրթություն չունեցող գործազուրկ անձանց համար հարմար կարող է համարվել այն աշխատանքը, որը պահանջում է զբաղվածության պետական ծառայության կողմից մինչև վեց ամիս ժամկետով կազմակերպվող նախնական մասնագիտական պատրաստում և արհեստագործական ուսուցում: Եթե մասնագիտական ուսուցում չունեցող անձը հրաժարվում է անցնել առաջարկվող ուսուցումը, ապա նրա համար հարմար է համարվում որակավորում չպահանջող վարձատրվող ցանկացած աշխատանքը:

«Հարմար աշխատանքի վարձատրության չափը և առաջարկվող աշխատավայրի տրանսպորտային մատչելիության չափանիշները սահմանելու մասին» կառավարության 11.05.2006թ. N 589-Ն որոշմամբ սահմանված են հարմար աշխատանքի վարձատրության և առաջարկվող աշխատավայրի տրանսպորտային մատչելիության չափանիշները: Առաջարկվող աշխատանքի վարձատրությունը պետք է գերազանցի գործազրկության ամսական նպաստի եռակի չափը (ներկայումս գործազրկության ամսական նպաստի չափը կազմում է 18. 000 ՀՀ դրամ, ինչը նշանակում է, որ առաջարկվող աշխատանքի վարձատրությունը պետք է գերազանցի 54. 000 ՀՀ դրամը):

Միևնույն ժամանակ առաջարկվող աշխատանքը պետք է լինի միևնույն համայնքի տարածքում (Երևան քաղաքում)

գտնվող այն աշխատավայրը, որտեղ մեկնելու և վերադառնալու համար անձը կարող է օգտվել մեկ տրանսպորտային միջոցից:

Հարց 5. Ինչպիսի՞ սոցիալական աջակցությունից են օգտվում գործազուրկները:

ՀՀ-ում գործազուրկներին տրամադրվում են սոցիալական աջակցության հետևյալ տեսակները.

1. այն գործազուրկները, որոնք ունեն առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ, օգտվում են գործազրկության նպաստ ստանալու իրավունքից,

2. գործազուրկները մասնագիտական ուսուցման դասընթացներում սովորելու ընթացքում ունեն կրթաթոշակ ստանալու իրավունք,

3. հաշմանդամ գործազուրկներն ունեն մասնագիտական ուսուցման, նաև աշխատանքի ունակությունների վերականգնման դասընթացներում սովորելու ընթացքում կրթաթոշակ ստանալու իրավունք ,

4. այն գործազուրկները, ովքեր ունեն 12 ամիս գործազրկության նպաստ ստանալու իրավունք, առնվազն 35 տարվա ապահովագրական ստաժ, և որոնց տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքի լրանալուն մնացել է մինչև մեկ տարի, ունեն լրացուցիչ սոցիալական երաշխիքների իրավունք՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

Հարց 6. Ինչպե՞ս է նշանակվում գործազրկության նպաստը:

Գործազրկության նպաստ է նշանակվում առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող և գործազուրկի կարգավիճակ ստացած այն անձանց, ովքեր չեն ստանում ՀՀ օրենքով սահմանված կենսաթոշակներ (բացառությամբ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստացող անձանցից):

Գործազրկության նպաստի վճարման նվազագույն տևողությունը սահմանվում է 6 ամիս: Մեկ տարուց ավելի ապահովագրական ստաժ ունեցող անձանց գործազրկության նպաստը յուրաքանչյուր 3 տարվա ապահովագրական ստաժի համար ավելանում է 1 ամսով: Ցանկացած պարագայում, տվյալ ժամանակահատվածի համար գործազրկության նպաստ տրամադրվում է առավելագույնը 12 ամիս ժամկետով:

Հարց 7. Որքա՞ն է կազմում գործազրկության նպաստի չափը:

Գործազրկության նպաստի չափը սահմանվում է «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված ամսական աշխատավարձի 60 տոկոսի չափով: «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ի հոդվածի համաձայն ՀՀ-ում նվազագույն ամսական աշխատավարձի չափը ներկայումս կազմում է 30.000 ՀՀ դրամ, որի 60 տոկոսը կազմում է 18.000 ՀՀ դրամ:

Հավելենք, որ օրենքով նախատեսված նվազագույն ամսական աշխատավարձի չափը ժամանակ առ ժամանակ ենթարկվում է փոփոխության, ինչի արդյունքում էլ փոփոխվում է գործազրկության նպաստի չափը:

Հարց 8. Ի՞նչ է իրենից ներկայացնում վարձատրվող հասարակական աշխատանքը:

Որպեսզի գործազուրկները և աշխատանք փնտրողները ժամանակավորապես ապահովվեն աշխատանքով, զբաղվածության ամենամյա պետական ծրագիրն իր մեջ ներառում է աշխատանք փնտրողներին և գործազուրկներին վարձատրվող հասարակական աշխատանքում նրանց ընդգրկելու հնարավորությունը:

Վարձատրվող հասարակական աշխատանքն իր մեջ ներառում է հետևյալ ոլորտները.

- ճանապարհների, փողոցների, խճուղիների, մայթերի, այգիների, պուրակների, խաղահրապարակների, նորոգման, կառուցման, կանաչապատման, ծառատնկման, և անտառի վերականգնման օժանդակ աշխատանքներ,

- արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման օժանդակ աշխատանքներ,

- սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների՝ դպրոցների, մանկապարտեզների, բուժհիմնարկների, մանկատների, ծերանոցների և նմանատիպ այլ կազմակերպությունների նորոգման օժանդակ աշխատանքներ,

- սոցիալական ոլորտի կազմակերպությունների շենքերի վերանորոգման և շրջակայքի բարեկարգման օժանդակ աշխատանքներ,

- ջրավազանների և ոռոգման համակարգերի, ջրմուկ-կոյուղի ցանցի նորոգման օժանդակ աշխատանքներ,

- պատմաձարտարապետական հուշարձանների, մշակութային օջախների վերանորոգման օժանդակ աշխատանքներ:

Ծրագրի տևողությունը առավելագույնը երեք ամիս է: Վարձատրվող հասարակական աշխատանքի օրական վարձը կազմում է նվազագույն աշխատավարձի 8%-ը՝ 2400 ՀՀ դրամ:

Հարց 9. Աշխատանք փնտրող ո՞ր դեպքերում կարող է ներառվել մասնագիտական ուսուցման դասընթացներում և ի՞նչ է այն իրենից ներկայացնում:

Անձին առաջարկվում է ընդգրկվել մասնագիտական ուսուցման դասընթացներում, եթե.

- աշխատաշուկայում բացակայում է նրա մասնագիտական կրթությանը համապատասխան հարմար աշխատանքը (այս դեպքում առաջարկվում է վերամասնագիտացման դասընթաց),

- նրա մասնագիտական որակավորումը չի համապատասխանում աշխատաշուկայի պահանջներին (այս դեպքում առաջարկվում է մասնագիտական որակավորման բարձրացման դասընթաց),

- չունի մասնագիտական կրթություն և որակավորում (այս դեպքում առաջարկվում է նախնական մասնագիտական պատրաստման և արհեստագործական ուսուցման դասընթաց):

- Մասնագիտական ուսուցման դասընթացները կազմակերպվում են առավելագույնը 3 ամիս ժամանակով, իսկ նախնական մասնագիտական պատրաստման և արհեստագործական ուսուցման դեպքում դասընթացների առավելագույն տևողությունը 6 ամիս է: Մեկ տարվա ընթացքում անձը կարող է ընդգրկվել միայն մեկ դասընթացում: Նույն անձը կարող է ընդգրկվել մասնագիտական ուսուցման մեկից ավելի դասընթացներում, եթե բացակայում է դասընթացներին մասնակցելու այնպիսի անձի ցանկությունը, ով տվյալ տարում դեռևս ընդգրկված չի եղել որևէ դասընթացում:

- Դասընթացներին մասնակցող անձանց թիվն սահմանափակ է: Դասընթացներին մասնակցել ցանկացող անձանց թիվը որոշվում է տվյալ տարվա համար զբաղվածության ամենամյա պետական ծրագրերով: Եթե Դասընթացներին մասնակցել ցանկացող անձանց թիվը ավելին է, քան տվյալ տարվա պետական ծրագրով նախատեսված մասնակիցների թիվը, ապա մասնակիցների մեջ նախապատվությունը տրվում է աշխատաշուկայում անմրցունակ խմբերին:

- Նման պարագայում անհրաժեշտություն է առաջանում պարզաբանել, թե որո՞նք են համարվում աշխատաշուկայում անմրցունակ խմբեր: Աշխատաշուկայում անմրցունակ խմբերն են.

- հաշմանդամները,
- ազատագրկման վայրերից կամ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառող հիմնարկներից վերա-

դարձած և վերադառնալուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, զբաղվածության պետական ծառայություն դիմած անձինք,

- աշխատանքային տարիքի հասած՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք՝ առնվազն մեկ տարի անընդմեջ գործազուրկի կարգավիճակում գտնվելու դեպքում,

- պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո զբաղվածության պետական ծառայությունում հաշվառված անձինք՝ առնվազն մեկ տարի անընդմեջ գործազուրկի կարգավիճակում գտնվելու դեպքում,

- առնվազն երեսունհինգ տարվա ապահովագրական ստաժ ունեցող գործազուրկները, որոնց տարիքային կենսաթոշակի հասնելու տարիքին մնացել է մինչև 5 տարի,

- փախստականները:

Հավելենք նաև, որ մասնագիտական ուսուցման դասընթացների ժամանակահատվածում մասնակիցներին տրվում է կրթաթոշակ:

Հարց10. Որքա՞ն է կազմում մասնագիտական ուսուցման ընթացքում տրվող կրթաթոշակի չափը:

Ինչպես արդեն նշվեց, գործազուրկների սոցիալական աջակցության երաշխիքներից մեկն էլ նրանց մասնագիտական պատրաստման և արհեստագործական ուսուցման, վերամասնագիտացման կամ որակավորման բարձրացման ուսուցում անցնող գործազուրկներին ուսման ողջ ընթացքում յուրաքանչյուր ամիս վճարվող կրթաթոշակի սահմանումն է:

Ամսական կրթաթոշակի չափը սահմանվում է.

1. գործազրկության նպաստ ստացող անձանց համար՝ նշանակված գործազրկության նպաստի 120 տոկոսի չափով, ինչը կազմում է 21. 600 ՀՀ դրամ,

2. գործազրկության նպաստ ստանալու իրավունք չունե-

ցող անձանց համար՝

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ի հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով, ինչը ներկայումս կազմում է 15. 000 ՀՀ դրամ:

Հարց 11. Գործազուրկի մահվան դեպքում ու՞մ է վճարվում նպաստը և ի՞նչ չափով:

Առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող գործազուրկի մահվան դեպքում հուղարկավորությունը կատարած անձին վճարվում է թաղման նպաստ՝ գործազրկության նպաստի եռապատիկի չափով՝ դիմումը և օրենսդրությամբ սահմանված կարգով անհրաժեշտ փաստաթղթերը գործազուրկի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում զբաղվածության պետական ծառայություն ներկայացնելու դեպքում:

Թաղման նպաստ ստանալու համար հուղարկավորությունը կատարած անձը դիմումի հետ միասին տարածքային կենտրոն է ներկայացնում.

1. անձնագիր,
2. գործազուրկի մահվան վկայագիրը,
3. տեղեկանք՝ տրված առևտրային բանկի կողմից իր անվամբ բացված բանկային հաշվի համարի և բանկի ռեկվիզիտների մասին:

Թաղման նպաստը վճարվում է դիմումը ներկայացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

Հարց 12. Գործազուրկն ինչպե՞ս կարող է տեղեկանալ իր բնակավայրից դուրս գտնվող թափուր աշխատատեղի մասին:

Զբաղվածության գործակալությունը յուրաքանչյուր ամիս տարածքային կենտրոններից ստացած տեղեկատվության համաձայն ամփոփում է առնվազն 1 ամիս թափուր մնացած

աշխատատեղերի մասին տեղեկատվությունը և տրամադրում տարածքային կենտրոններին: Տարածքային կենտրոնը, յուրաքանչյուր ամիս տարածքային կենտրոնի վարչական շենքի տեսանելի տեղում, տեղադրում է առնվազն 1 ամիս թափուր մնացած աշխատատեղերի մասին տեղեկատվություն՝ նշելով գործատուի հասցեն, աշխատանքի բնույթը, աշխատաժամանակը և աշխատավարձի չափը:

Այլ վայր աշխատանքի գործուղվել ցանկացող գործազուրկը գրավոր դիմում է ներկայացնում տարածքային կենտրոն՝ նշելով համայնքի, գործատուի և թափուր աշխատատեղի անվանումները:

Հարց 13. Ինչպիսի՞ն է այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկի նյութական ծախսերի հատուցման կարգը:

Զբաղվածության տարածքային կենտրոնը գործազուրկին կարող է առաջարկել իր բնակության վայրից դուրս աշխատանք՝ փոխհատուցելով գործուղման /տեղափոխման/ ծախսերը:

Փոխհատուցման սկզբունքը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ գործազուրկը Երևան քաղաքի տարածքային կենտրոնի առաջարկությամբ գործուղվում է մեկ թաղային համայնքից մեկ այլ թաղային համայնք:

Գործազուրկը տարածքային կենտրոնի աջակցությամբ կարող է աշխատանքի գործուղվել 30 կմ-ից հեռու այլ բնակավայր՝ ժամանակավոր /ոչ պակաս մեկ տարի ժամկետով/ կամ մշտական բնակության պայմանով:

Թափուր աշխատատեղը կարող է աշխատանքի գործուղվող գործազուրկին այլ վայր առաջարկվել միայն այն դեպքում, եթե տարածքային կենտրոնում տվյալ աշխատատեղի վերաբերյալ տեղեկատվություն ստացվելուց հետո այն առնվազն 1 ամիս չի համալրվել:

Այլ վայր ժամանակավոր կամ մշտական բնակության մեկնող գործազուրկին և նրա հետ մեկնող ընտանիքի

անդամներին հատուցվում են՝

1. նրա և նրա ընտանիքի անդամների տեղափոխման տրանսպորտային ծախսերը՝ միայն միկրոավտոբուսային երթուղի լինելու դեպքում՝ դրանց սահմանված սակագնի չափով, իսկ միկրոավտոբուսային և ավտոբուսային երթուղիներ լինելու դեպքում՝ ավտոբուսային երթուղիների համար սահմանված սակագնի չափով,

2. նրա և նրա ընտանիքի անդամների անհրաժեշտ գույքի տեղափոխման տրանսպորտային ծախսերը՝ 30-50 կմ ճանապարհի համար՝ 10 000 դրամ, 50 կմ-ից ավելի հեռավորության դեպքում՝ յուրաքանչյուր 50 կմ-ի համար՝ 8000 դրամ, բայց ոչ ավելի, քան 50 000 դրամ,

3. 30 կմ-ից հեռու այլ վայր աշխատանքի մեկնելու դեպքում՝ նրա և նրա ընտանիքի անդամների օրապահիկը:

Այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկին տրվում է նաև.

1. միանվագ ֆինանսական աջակցություն՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված ամսական աշխատավարձի եռապատիկի չափով,

2. մեկ տարվա ընթացքում 4 անգամ մշտական բնակավայր այցելելու համար տրանսպորտային ծախսը միկրոավտոբուսային երթուղի լինելու դեպքում՝ դրա համար սահմանված սակագնի չափով, իսկ եթե առկա են ինչպես միկրոավտոբուսային, այնպես էլ ավտոբուսային երթուղիներ, ապա ավտոբուսային երթուղիների սահմանված սակագնի չափով,

3. ամսական գումար՝ բնակարանային վարձի և կոմունալ ծախսերի համար՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված ամսական աշխատավարձի չափով (30.000 ՀՀ դրամ):

Հարց 14. Ո՞ր դեպքերում է գործատուն կրում այլ վայր աշխատանքի գործուղվելու կապակցությամբ գործազուրկին հատուցված նյութական ծախսերը վերադարձնելու ծախսերը:

Գործատուն գործազուրկին վճարված նյութական ծախսերը գործակալությանը հատուցելու պարտավորությունը կրում է այն դեպքում, եթե գործատուի և գործազուրկի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվել է գործատուի նախաձեռնությամբ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքով՝ այն է՝ արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում, եթե աշխատանքային պայմանագիրը լուծվել է պայմանագիրը կնքելուց հետո մեկ տարվա ընթացքում:

Հարց 15. Ո՞ր դեպքում է գործազուրկը այլ վայր աշխատանքի գործուղվելու կապակցությամբ իրեն հատուցված նյութական ծախսերը վերադարձնելու պարտավորություն կրում:

Գործազուրկը, որն աշխատանքի է տեղավորվել գործակալության միջոցով, կրում է իրեն վճարված նյութական ծախսերը գործակալությանը հատուցելու պարտավորությունը, եթե գործատուի և գործազուրկի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվել է իր նախաձեռնությամբ կամ գործատուի կողմից ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով սահմանված հիմքերով, այն է՝ աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու կամ աշխատողի երկարատև անաշխատունակության հետևանքով, եթե աշխատանքային

պայմանագիրը լուծվել է պայմանագիրը կնքելուց հետո մեկ տարվա ընթացքում:

Հարց 16. Ո՞ր դեպքում են գործազուրկը և գործատուն հավասարապես կրում այլ վայր աշխատանքի գործուղվելու կապակցությամբ գործազուրկին հատուցված նյութական ծախսերը վերադարձնելու պարտավորությունը:

Գործազուրկը և գործատուն այլ վայր աշխատանքի գործուղվելու կապակցությամբ գործազուրկին հատուցված նյութական ծախսերը վերադարձնելու պարտավորությունը հավասարապես կրում են այն դեպքում, եթե աշխատանքային պայմանագիրը լուծվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 110-րդ հոդվածի հիմքով՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ, և եթե աշխատանքային պայմանագիրը լուծվել է պայմանագիրը կնքելուց հետո մեկ տարվա ընթացքում:

**ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ**

Հարց 1. Ովքե՞ր են համարվում փախստականներ:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն փախստական է համարվում՝

1. այն օտարերկրյա քաղաքացին, որը ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելիության կամ քաղաքական հայացքների համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և չի կարող կամ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից, կամ նա, ով չունենալով քաղաքացիություն և գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, չի կարող կամ այդ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում վերադառնալ այնտեղ,

2. այն օտարերկրյա քաղաքացին, որը ստիպված է լքել իր քաղաքացիության երկիրը, իսկ քաղաքացիություն չունեցող անձը՝ իր նախկին մշտական բնակության երկիրը՝ համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների պատճառով:

Օրենքի իմաստով փախստական է համարվում նաև այն օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, որին պաշտոնապես փախստական են ճանաչել Կոնվենցիան ստորագրած այլ պետություններ:

Հարց 2. ՀՀ տարածքում ապաստան ստացած փախստականները ի՞նչ չափով են օգտվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված սոցիալական ծառայություններից:

ՀՀ տարածքում ապաստան ստացած փախստականներն իրավունք ունեն օգտվելու ՀՀ օրենսդրությամբ ՀՀ քաղաքա-

ցիների համար սահմանված սոցիալական ծառայություններից, ստանալու պետական նպաստներ և դրամական այլ օգնություններ, ժամանակավոր անաշխատունակության, արտադրությունում աշխատանքային խեղման, դժբախտ պատահարների և մասնագիտական հիվանդությունների համար տրվող նպաստներ, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում, ինչպես նաև ունեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակային ապահովության, գործազրկության դեպքում՝ սոցիալական պաշտպանության իրավունք, եթե նրանք բավարարում են տվյալ ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Հարց 3. ՀՀ տարածքում ապաստան հայցողներն ու ապաստան չստացած փախստականները ի՞նչ չափով են օգտվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված սոցիալական ծառայություններից:

ՀՀ-ում ապաստան հայցողներն ու ապաստան չստացած փախստականներն ունեն պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու՝ ՀՀ քաղաքացիներին հավասար իրավունք, եթե բավարարում են այդ ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջները:

Հարց 4. Ի՞նչ իրավունքներից են օգտվում փախստականի կարգավիճակ հայցողները:

ՀՀ-ում փախստականի կարգավիճակ հայցողներին տրամադրվում է.

- միանվագ դրամական նպաստ,
- հատուկ կամ ժամանակավոր կացարաններ,
- անվճար բուժզննում և բուժսպասարկում,
- թարգմանչական և իրավաբանական անվճար ծառայություններ:

Հարց 5. Ինչպե՞ս և ի՞նչ չափով է փախստականի կարգավիճակ հայցողին տրամադրվում միանվագ դրամական նպաստը:

ՀՀ տարածքում փախստականի կարգավիճակ հայցողներն ունեն միանվագ դրամական նպաստ ստանալու իրավունք: Միանվագ նպաստը տրամադրվում է ապաստան հայցող ընտանիքի յուրաքանչյուր անդամին՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

14 տարին լրացած՝ ՀՀ տարածքում փախստականի կարգավիճակ հայցողը միանվագ դրամական նպաստ ստանալու համար պետք է հատուկ կացարան տեղափոխվելուց հետո 10-օրյա ժամկետում դիմում ներկայացնի:

Եթե փախստականի կարգավիճակ հայցող անձի 14 տարին չի լրացել, ապա դիմումը նրա փոխարեն տրվում է նրա ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի կողմից, իսկ երեխայի համար սահմանված միանվագ նպաստը հանձնվում է նրանց: Միանվագ նպաստը տրվում է հատուկ կացարանում գտնվելու նրա ժամանակահատվածում:

Հնարավոր են իրավիճակներ, երբ փախստականի կարգավիճակ հայցողները տեղավորվում են այլ կացարան, մասնավորապես՝ ազգականների մոտ, հյուրանոց, վարձու բնակարան: Նշված դեպքերում միանվագ դրամական նպաստը անձին տրամադրվում է փախստականի կարգավիճակ ստանալու մասին նրա դիմումի քննարկման ժամանակահատվածում:

Հարց 6. Ժամանակավոր կամ հատուկ ապաստանը փախստականի կարգավիճակ հայցողին ի՞նչ կարգով է տրամադրվում:

ՀՀ տարածք մուտք գործելուց հետո անհրաժեշտ բժշկական գնման ենթարկելու և փաստաթղթային ստուգումներ անցկացնելու նպատակով փախստականի կարգավիճակ հայցող անձը մեկամսյա ժամկետով տեղավորվում է հատուկ

կացարանում: Համապատասխան բժշկական զննում և փաստաթղթային ստուգում անցնելուց հետո փախստականի կարգավիճակ հայցող անձը տեղափոխվում է ժամանակավոր կացարան: Որպես ժամանակավոր կացարան են ծառայում ՀՀ տարածքային կառավարման նախարարության տնօրինության տակ գտնվող հանրակացարանները:

Հարց 7. Անվճար թարգմանչական և իրավաբանական ծառայությունները փախստականի կարգավիճակ հայցող անձին ու մ կողմից են տրամադրվում:

Փախստականի կարգավիճակ հայցողին մատուցվում են թարգմանչական, իրավական խորհրդատվության անվճար ծառայություններ՝ հատուկ կացարանի, ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակիցների միջոցով:

Անհրաժեշտության դեպքում նշված ծառայությունների մատուցման նպատակով կարող են պայմանագրային հիմունքներով ներգրավվել այլ մասնագետներ, որոնց ծախսերը նախատեսվում են ՀՀ տարածքային կառավարման նախարարության պահպանման ընդհանուր բյուջետային հատկացումներում:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ն Ե Ր

Հավելված 1.

Պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների օգտագործման ժամկետները

	անվանումները	օգտագործման ժամկետը
1.	պրոթեզներ	
ա.	ստորին վերջույթների պրոթեզներ	երեք տարի
բ.	վերին վերջույթների պրոթեզներ	չորս տարի
գ.	սրունքի օրթոպրոթեզներ	երեք տարի
2.	օրթեզներ	վեց ամիս, մեկ տարի
3.	ապարատներ	երկու տարի
4.	սեղմիրաններ	երկու տարի
5.	աղեկապեր	մեկ տարի
6.	պրոթեզի, օրթեզի կոշիկներ /տարեկան երկու գույգ/	վեց ամիս
7.	օրթոպեդիկ /տարեկան երկու գույգ/	վեց ամիս
8.	վերականգնման տեխնիկական միջոցներ	
9.	ձեռնափայտեր /մեկ լրացուցիչ ռետինով/	երկու տարի
10.	հենակներ /մեկ լրացուցիչ ռետինով/	երկու տարի
11.	սուպինատորներ	մեկ տարի
12.	կրծքագեղձի պրոթեզներ և կրծկալ-ամրակներ	մեկ տարի
13.	լսողական սարքեր	երեք տարի
14.	հաշմանդամի սայլակներ	երեք տարի
15.	փոքր տրամաչափի սայլակներ	երկու տարի
16.	քայլակներ	երեք տարի
17.	աչքի պրոթեզներ երեխաների համար	մեկ տարի
18.	աչքի պրոթեզներ մեծահասակների համար	երկու տարի
19.	ձայնաստեղծ սարքեր	հինգ տարի

Հավելված 2

Ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը

1.	Քրոնիկ հոգեկան հիվանդություն, որը ընթանում է անձի վարքի և ադապտացիոն շեղումներով (փսիխոզներ, թուլամտություն, անձի շեղումներ և այլն): Նշված հիվանդությունների առկայության դեպքում անձը կարող է տեղավորվել միայն բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ հաստատությունում:
2.	Քրոնիկ այկոհոլամոլություն և թմրամոլություն,
3.	Մաշկային վարակիչ հիվանդություն, սեռավարակներ՝ հիվանդության վարակի շրջանում,
4.	Օնկոլոգիական հիվանդություններ՝ դեկոմպենսացիայի շրջանում (նշված դեպքում անձին կարող է տրամադրվել միայն հոսպիտալին օգնություն),
5.	Ինֆեկցիոն հիվանդություններ՝ հիվանդության սուր շրջանում,
6.	Տուբերկուլյոզ՝ հիվանդության վարակի շրջանում:

Հավելված 3.

**Սոցիալական խնամք տրամադրող
կազմակերպությունների ցանկը**

Երևանի №1 տուն-ինտերնատ (Շերանոց)	ՀՀ., ք. Երևան, Հաղթանակ, 2-րդ փող., շ. 45	(37410)743013
Նորքի տուն-ինտերնատ (Շերանոց)	ՀՀ., ք. Երևան, Արմենակ Արմենակյան փող., շ. 197ա	(37410)652827
Գավառի մանկատուն ՊՈԱԿ (Մանկատուն)	ՀՀ., Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Օգոստոսի 23-ի փող., շ. 106	(374264)22156
«Գյումրու երեխաների տուն» ՊՈԱԿ (Մանկատուն)	ՀՀ., Շիրակի մարզ, ք. Գյումրի, Թամանյան փող., շ. 17	(374312)31328
«Երևանի մանկան տուն» (մինչև 5 տարեկան երեխաների համար)	ՀՀ., ք. Երևան, Արմենակ Արմենակյան փող., շ. 119	(37410)651291
«Զատիկ» Երևանի մանկատուն ՊՈԱԿ (Մանկատուն)	ՀՀ., ք. Երևան, Զաքարիա Քանաքեռցու փող., շ. 145բ	(37410)283491
Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն (մինչև 18 տարեկան երեխաների համար) (Մանկատուն)	ՀՀ., ք. Երևան, Ներքին Ջեյթուն, Յաղուրյան փող., շ. 13	(37410)251586
Վանաձորի մանկատուն ՊՈԱԿ	ՀՀ., Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տարոն, 2-րդ թաղ., շ. 4	(374322)60120
Ֆրիտյոֆ Նանսենի անվան մանկատուն	ՀՀ., Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շիրակացու փող., շ. 10	374312)32783

Հավելված 4.

**«Զբաղվածության պետական ծառայություն»
գործակալությունը և նրա ստորաբաժանումները**

ՀՀ զբաղվածության ծառայության գործակալությունը և նրա ստորաբաժանումները Երևանում	
ՀՀ Զբաղվածության ծառայության գործակալություն ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Հեռ.(374-10) 280619
«Աջափնյակ» տարածքային կենտրոն	Հեռ.(374-10) 746635
«Ավան» տարածքային կենտրոն	Հեռ.(374-10) 621071
«Արաբկիր» տարածքային կենտրոն	Հեռ.(374-10) 297998
«Դավթաշեն» տարածքային կենտրոն	Հեռ.(374-10) 368017
«Էրեբունի» տարածքային կենտրոն (Էրեբունի, Նուբարաշեն)	Հեռ.(374-10) 574680
«Կենտրոն» տարածքային կենտրոն (Կենտրոն, Նորք-Մարաշ)	Հեռ.(374-10) 540832
«Մալաթիա-Սեբեհտիա» տարածքային կենտրոն	Հեռ.(374-10) 748517
«Նոր-Նորք» տարածքային կենտրոն	Հեռ.(374-10) 634450
«Շենգավիթ» տարածքային կենտրոն	Հեռ.(374-10) 422001
«Քանաքեռ-Զեյթուն» տարածքային կենտրոն	Հեռ.(374-10) 241062
Արագածոտնի մարզի զբաղվածության ծառայության ստորաբաժանումներ	
Աշտարակի ստորաբաժանում	Հեռ.(374-232) 35233
Ապարանի ստորաբաժանում	Հեռ.(374-252) 25566
Թալինի ստորաբաժանում	Հեռ.(374-249) 23739
Ծաղկահովիտի ստորաբաժանում	Հեռ.(374-257) 62284
Արարատի մարզի զբաղվածության ծառայության ստորաբաժանումներ	
Արարատի ստորաբաժանում	Հեռ.(374-238) 44168
Արտաշատի ստորաբաժանում	Հեռ.(374-235) 24172
Մասիսի ստորաբաժանում	Հեռ.(374-236) 42480
Վեդու ստորաբաժանում	Հեռ.(374-234) 22706
Արմավիրի մարզի զբաղվածության ծառայության ստորաբաժանումներ	
Արմավիրի ստորաբաժանում	Հեռ.(374-237) 63406

Բաղրամյանի ստորաբաժանում	Հեռ.(374-233) 22159
Էջմիածնի ստորաբաժանում	Հեռ.(374-231) 52518
Գեղարքունիքի մարզի զբաղվածության ծառայության ստորաբաժանումներ	
Գավառի ստորաբաժանում	Հեռ.(374-264) 22882
Ճամբարակի ստորաբաժանում	Հեռ.(374-265) 23308
Մարտունու ստորաբաժանում	Հեռ.(374-262) 42960
Սևանի ստորաբաժանում	Հեռ.(374-261) 25370
Վարդենիսի ստորաբաժանում	Հեռ.(374-269) 22954
Լոռու մարզի զբաղվածության ծառայության ստորաբաժանումներ	
Ալավերդու ստորաբաժանում	Հեռ.(374-253) 22701
Սպիտակի ստորաբաժանում	Հեռ.(374-255) 22751
Ստեփանավանի ստորաբաժանում	Հեռ.(374-256) 23481
Վանաձորի ստորաբաժանում	Հեռ.(374-322) 22078
Տաշիրի ստորաբաժանում	Հեռ.(374-254) 22474
Կոտայքի մարզի զբաղվածության ծառայության ստորաբաժանումներ	
Աբովյանի ստորաբաժանում	Հեռ.(374-222) 20315
Եղվարդի ստորաբաժանում	Հեռ.(374-224) 23761
Հրազդանի ստորաբաժանում	Հեռ.(374-223) 21835
Չարենցավանի ստորաբաժանում	Հեռ.(374-226) 42681
Շիրակի մարզի զբաղվածության ծառայության ստորաբաժանումներ	
Ամասիայի ստորաբաժանում	Հեռ.(374-246) 22228
Աշոցքի ստորաբաժանում	Հեռ.(374-245) 21785
Արթիկի ստորաբաժանում	Հեռ.(374-244) 52213
Գյումրու ստորաբաժանում	Հեռ.(374-312) 21405
Մարալիկի ստորաբաժանում	Հեռ.(374-242) 22560
Սյունիքի մարզի զբաղվածության ծառայության ստորաբաժանումներ	
Գորիսի ստորաբաժանում	Հեռ.(374-284) 21166
Կապանի ստորաբաժանում	Հեռ.(374-285) 24933
Մեղրու ստորաբաժանում	Հեռ.(374-286) 42861
Սիսիանի ստորաբաժանում	Հեռ.(374-2830) 2663

Վայոց Ձորի մարզի զբաղվածության ծառայության ստորաբաժանումներ	
Եղեգնաձորի ստորաբաժանում	Հեռ.(374-281) 22652
Ջերմուկի ստորաբաժանում	Հեռ.(374-287) 21375
Վայքի ստորաբաժանում	Հեռ.(374-282) 22661
Տավուշի մարզի զբաղվածության ծառայության ստորաբաժանումներ	
Բերդի ստորաբաժանում	Հեռ.(374-267) 23417
Դիլիջանի ստորաբաժանում	Հեռ.(374-2680) 3038
Իջևանի ստորաբաժանում	Հեռ.(374-263) 31139
Նոյեմբերյանի ստորաբաժանում	Հեռ.(374-266) 22787

Հավելված 5.

ՀՀ սոցիալական ծառայության տարածքային բաժիններ

Երևանի սոցիալական ծառայության ստորաբաժանումներ	
Աջափնյակի տարածքային գործակալություն	Հեռ.(374-10) 398265
Ավանի տարածքային գործակալություն	Հեռ.(374-10) 621072
«Արաբկիր» տարածքային գործակալություն	Հեռ.(374-10) 238661
«Դավթաշեն» տարածքային գործակալություն	Հեռ.(374-10) 365514
«Էրեբունի» տարածքային գործակալություն (Էրեբունի, Նուբարաշեն)	Հեռ.(374-10) 574358
«Կենտրոն» տարածքային գործակալություն (Կենտրոն, Նորք-Մարաշ)	Հեռ.(374-10) 584241
«Մալաթիա-Սեբաստիա» տարածքային գործակալություն	Հեռ.(374-10) 739668
«Նոր-Նորք» տարածքային գործակալություն	Հեռ.(374-10) 634163
Նուբարաշենի տարածքային գործակալություն	Հեռ.(374-10) 475328
«Շենգավիթ» տարածքային գործակալություն	Հեռ.(374-10) 446936
«Քանաքեռ-Զեյթուն» տարածքային գործակալություն	Հեռ.(374-10) 281766
Արագածոտնի մարզի սոցիալական ծառայության ստորաբաժանումներ	
Աշտարակի ստորաբաժանում	Հեռ.(374-232) 35256
Ապարանի ստորաբաժանում	Հեռ.(374-252) 25185
Թալինի ստորաբաժանում	Հեռ.(374-249) 23608
Ծաղկահովիտի ստորաբաժանում	Հեռ.(374-257) 62551
Արարատի մարզի սոցիալական ծառայության ստորաբաժանումներ	
Արարատի տարածքային գործակալություն	Հեռ.(374-238) 44711
Արտաշատի տարածքային գործակալություն	Հեռ.(374-235) 22867
Մասիսի տարածքային գործակալություն	Հեռ.(374-236) 45061
Վեդու տարածքային գործակալություն	Հեռ.(374-234) 23475
Արմավիրի մարզի սոցիալական ծառայության ստորաբաժանումներ	
Արմավիրի տարածքային գործակալություն	Հեռ.(374-237) 62946
Բաղրամյանի տարածքային գործակալություն	Հեռ.(374-233) 22582
Էջմիածնի տարածքային գործակալություն	Հեռ.(374-231) 53852

Գեղարքունիքի մարզի սոցիալական ծառայության ստորաբաժանումներ	
Գավառի տարածքային գործակալություն	Հեռ.(374-264) 28132
Ճամբարակի տարածքային գործակալություն	Հեռ.(374-265) 23308
Մարտունու տարածքային գործակալություն	Հեռ.(374-262) 45463
Սևանի տարածքային գործակալություն	Հեռ.(374-261) 27025
Վարդենիսի տարածքային գործակալություն	Հեռ.(374-269) 22193
Լոռու մարզի սոցիալական ծառայության ստորաբաժանումներ	
Ալավերդու տարածքային գործակալություն	Հեռ.(374-253) 23395
Սյիտակի տարածքային գործակալություն	Հեռ.(374-255) 22167
Ստեփանավանի տարածքային գործակալություն	Հեռ.(374-256) 22119
Վանաձորի տարածքային գործակալություն	Հեռ.(374-322) 20957
Տաշիրի տարածքային գործակալություն	Հեռ.(374-254) 21810
Վոտայքի մարզի սոցիալական ծառայության ստորաբաժանումներ	
Աբովյանի տարածքային գործակալություն	Հեռ.(374-222) 25502
Եղվարդի տարածքային գործակալություն	Հեռ.(374-224) 21246
Հրազդանի տարածքային գործակալություն	Հեռ.(374-223) 25801
Զարենցավանի տարածքային գործակալություն	Հեռ.(374-226) 41686
Շիրակի մարզի սոցիալական ծառայության ստորաբաժանումներ	
Ամասիայի տարածքային գործակալություն	Հեռ.(374-246) 22979
Աշոցքի տարածքային գործակալություն	Հեռ.(374-245) 21035
Արթիկի տարածքային գործակալություն	Հեռ.(374-244) 51352
Գյումրու տարածքային գործակալություն	Հեռ.(374-312) 22015
Մարալիկի տարածքային գործակալություն	Հեռ.(374-242) 22699
Սյունիքի մարզի սոցիալական ծառայության ստորաբաժանումներ	
Գորիսի տարածքային գործակալություն	Հեռ.(374-284) 22834
Կապանի տարածքային գործակալություն	Հեռ.(374-285) 68203
Մեղրու տարածքային գործակալություն	Հեռ.(374-286) 43384
Սիսիանի տարածքային գործակալություն	Հեռ.(374-2830) 4985
Վայոց Ձորի մարզի սոցիալական ծառայության ստորաբաժանումներ	
Եղեգնաձորի տարածքային գործակալություն	Հեռ.(374-281) 23069

Ջերմուկի տարածքային գործակալություն	Հեռ.(374-287) 23946
Վայքի տարածքային գործակալություն	Հեռ.(374-282) 21362
Տավուշի մարզի սոցիալական ծառայության ստորաբաժանումներ	
Բերդի տարածքային գործակալություն	Հեռ.(374-93) 440144
Դիլիջանի տարածքային գործակալություն	Հեռ.(374-2680) 2425
Իջևանի տարածքային գործակալություն	Հեռ.(374-263) 32643
Նոյեմբերյանի տարածքային գործակալություն	Հեռ.(374-266) 22244

Հավելված 6.

**ՀՀ-ում գործող հասարակական
կազմակերպությունների ցանկը**

Անվանումը	Հասցեներ, հեռախոսահամար ներ
Իրավապաշտպան հասարակական կազմակերպություններ	
«Ընդդեմ իրավական կամայկանության» ՀԿ	Հեռ.՝ 582819
Մախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկ. կենտրոն ՀԿ	Հեռ.՝ 587864
Մախարովի անվ. մ.ի.պ. Գյումրու մասնաճյուղ	Հեռ.՝ 0312 396918
Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցացիա	Հեռ.՝ 540199
Հայաստանի Հելսինկյան կոմիտե	Հեռ.՝ 560372
Հաշմանդամների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններ	
«Հավատ» վատ լսող երեխաների մայրերի ՀԿ	Հեռ.՝ 231953
«Ունիսոն»	Հեռ.՝ 522170
«Աստղիկ» հաշմանդամ երեխաների ծնողների միություն	Հեռ.՝ 575185
«Կամք եւ կորով» երիտասարդ հաշմանդամների ՀԿ	Հեռ.՝ 538541
«Հույսի կամուրջ» ՀԿ	Հեռ.՝ 589186
Հաշմանդամ երեխաների «Փրկություն» կենտրոն ԲՀԿ	Հեռ.՝ 427850
Կրթության եւ մշակույթի զարգացման հաշմանդամների «Փարոս» կենտրոն	Հեռ.՝ 632958
Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» ասոցիացիա	Հեռ.՝ 565607
«Հոգեկան առողջության հիմնադրամ»	Հեռ.՝ 544504
Առողջության և կրթության հայկական կենտրոն	Հեռ.՝ 633913
Մանկական հիմնադրամ	Հեռ.՝ 523546
Փախստականների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններ	
Հայկական Կարմիր խաչի ընկերություն	Հեռ.՝ 583630
Փախստականների «Ահազանգ» ընկերություն	Հեռ.՝ 365282

Առաքելություն Հայաստան	Հեռ.՝ 444792
ՄԱԿ-ի հայկական ասոցիացիա	Հեռ.՝ 530928
Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի հայկական կոմիտե	Հեռ.՝ 530438
Քարավան -88 Բարեգործական ՀԿ	Հեռ.՝ 521526
«Զինվորի մայր»	Հեռ.՝ 523202
«Արագա» հասարակական բարեգործական կազմակերպություն	Հեռ.՝ 270688
«Հույսի կամուրջ»	Հեռ.՝ 589186
«Փրկված մասունքներ» ՀԿ	Հեռ.՝ 232769
Փախստական մտավորականների «Պոտենցիալ» միություն	Հեռ.՝ 234998
«Երջանիկ» մանկական բարեգործական ՀԿ	Հեռ.՝ 232420
Սոցիալական հումանիտար աջակցություն տրամադրող կազմակերպություններ	
«Հայ օգնության միություն» բարեգործական ՀԿ	Հեռ.՝ 567513
Առաքելություն Հայաստան	Հեռ.՝ 444792
«Ծնողագուրկ երեխաների հանձնախումբ» բարեգործական ՀԿ	Հեռ.՝ 563301

Հավելված 7.
Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովները

Հոգեբուժական մասնագիտացված ԲՓՀ	Հասցե՝ ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 55/ա, հեռ.՝ 62-87-40
Ակնաբանական մասնագիտացված ԲՓՀ	Հասցե՝ ք. Երևան, Ներսիսյան 7, հեռ.՝ 20-80-84
Մանկական մասնագիտացված ԲՓՀ	Հասցե՝ ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 55/ա, հեռ.՝ 62-26-30
Երևանի թիվ 1 ԲՓՀ	Հասցե՝ ք. Երևան, Տիտոգրադյան 14, հեռ.՝ 47-06-92
Երևանի թիվ 2 ԲՓՀ	Հասցե՝ ք. Երևան, Գյուրջյան 8, հեռ.՝ 64-59-40
Երևանի թիվ 3 ԲՓՀ	Հասցե՝ ք. Երևան, Հ. Քոչարի 11, հեռ.՝ 27-43-12
Երևանի թիվ 4 ԲՓՀ	Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 43, հեռ.՝ 44-44-75
Երևանի թիվ 5 ԲՓՀ	Հասցե՝ ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 55/ա, հեռ.՝ 62-26-30
Երևանի թիվ 6 ԲՓՀ	Հասցե՝ ք. Երևան, հեռ.՝ 72-83-40
Արագածոտնի մարզի ԲՓՀ	Հասցե՝ ք. Աշտարակ, քաղաքային պոլիկլինիկա
Արարատի մարզի թիվ 1 ԲՓՀ	Հասցե՝ ք. Արտաշատ, Օգոստոսի 23
Արարատի մարզի թիվ 2 ԲՓՀ	Հասցե՝ ք. Վեդի, Արարատյան 42, հեռ.՝ 0.34/2-35-67
Արմավիրի մարզի ԲՓՀ	Հասցե՝ ք. Արմավիր, Շահումյան 3, հեռ.՝ 0.237/6-56-69
Գեղարքունիքի մարզի թիվ 1 ԲՓՀ	Հասցե՝ ք. Գավառ, Շահումյան 14, հեռ.՝ 0.264/2-14-80
Գեղարքունիքի մարզի թիվ 2 ԲՓՀ	Հասցե՝ ք. Մարտունի, Գետափնյա 1, հեռ.՝ 0.264/2-24-94
Լոռու մարզի թիվ 1 ԲՓՀ	Հասցե՝ ք. Վանաձոր, Նժդեհի 14, հեռ.՝ 0.322/2-53-42
Լոռու մարզի թիվ 2 ԲՓՀ	Հասցե՝ ք. Սպիտակ, Երևանյան խճուղի, հեռ.՝ 0.255/24-35
Լոռու մարզի թիվ 3 ԲՓՀ	Հասցե՝ ք. Ալավերդի, Մայաթ-Նովա 20, հեռ.՝ 0.322/2-53-42

Կոտայքի մարզի ԲՓՀ	Հասցե՝ ք. Աբովյան, Հատիսի 6, հեռ.՝ 0.222/3-03-22
Շիրակի մարզի թիվ 1 ԲՓՀ	Հասցե՝ ք. Գյումրի, 58թաղ., փ 5, շենք 8, հեռ.՝ 0.312/3-97-60
Շիրակի մարզի թիվ 2 ԲՓՀ	Հասցե՝ ք. Գյումրի, 58թաղ., փ 5, շենք 8, հեռ.՝ 0.312/3-97-60
Սյունիքի մարզի թիվ 1 ԲՓՀ	Հասցե՝ ք. Կապան, Ազատամարտիկների 8, հեռ.՝ 0.285/6-79-11
Սյունիքի մարզի թիվ 2 ԲՓՀ	Հասցե՝ ք. Գորիս, Մաշտոցի 72, հեռ.՝ 0.284/2-35-80
Վայոց Ձորի մարզի ԲՓՀ	Հասցե՝ ք. Եղեգնաձոր, Վ. Գևորգյան/1, հեռ.՝ 0.281/2-24-65
Տավուշի մարզի ԲՓՀ	Հասցե՝ ք. Իջևան, Երիտասարդական 2/ա, հեռ.՝ 0.263/3-65-49

«ԸՆԴԴԵՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՄԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ»
հասարակական կազմակերպություն

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՈՒՂԵՑՈՒՅՑ

Կազմեցին՝ Հ. ՕՂնիկյան
Ք. Գևորկյան

Խմբագիր՝ Յու. Հովհաննիսյան
Ա. Մանուկյան